

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՍԱԴՐԱՄ

Սույոշա ՍԱՖԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՌԹՅՈՒՆԸ,
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԱՌԱՋԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ԹԵՍԱՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

ՆԱԽԱԲԱՆ

1991թ. օգոստոսի 23-ին ՀՍԴ Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումով և նույն թվականի սեպտեմբերի 21-ի համաժողովրդական համբաքվեի արդյունքներով կազմավորեց Հայաստանի երրորդ Հանրապետությունը: Հայ ժողովրդի հետագա կենսագործունեության ու զարգացման համար բախտորոշ այդ իրադարձության արդյունքում նորանկախ ՀՀ-ն նվաճեց իր ապագան ինքնուրույնաբար տնօրինելու իրավունքը: Դա իր հերթին ենթադրեց արտաքին ու ներքին քաղաքականությունների (այդ թվում և անվտանգության) ինքնուրույն մշակման և իրականացման ոչ միայն հնարավորությունը, այլ նաև անհրաժեշտությունը:

Նույն 90-ականների սկզբին ԽՄՀՄ-ի փլուզմամբ վերջ դրվեց նաև սառը պատերազմին ու երկրեւ աշխարհակարգին: Այդ ժամանակաշրջանի կատարյալ անորոշությունը, ինչպես նաև նոր իրողությունները անհրաժեշտաբար պահանջեցին վերանայել անվտանգության հայեցակարգն ու բավարրել նրան ներկայացվող նոր պահանջները: Մինչդեռ անվտանգության հիմնախնդրի իմաստավորման, այդ ոլորտում պրակտիկ լուծումների ու տեսական հիմքերի մշակման հետազոտական արսենալը բացահայտ անհամապատասխանության մեջ էր հայտնվել նոր՝ հետսառըպատերազմյան իրողությունների հետ: Ծագեց նաև նրա վերանայման ու էլ ավելի արդյունավետ հայեցակարգային եղանակների մշակման սուր անհրաժեշտություն: Օրինաչափորեն, անվտանգության դաշտում բռնկված այդ ճգնաժամից ելքի նկատառումներով անվտանգության վերաբերյալ քննարկումները նոր թափ ստացան:

Գլոբալ անվտանգության դաշտում այսօր տեղի ունեցող զարգացումները գերազանցապես այդ տարիներից ի վեր մշակված սցենարների արդյունքներն են: Միաժամանակ, սրընթաց զարգացումների պատճառով ամենատարբեր մակարդակներում և ոլորտներում ի հայտ են եկել նոր վտանգներ, որոնք սպառնում են տարբեր համակարգային միավորների անվտանգությանը: Փոխվել է անվտանգության դաշտի կառուցվածքը, ինչն իր հերթին անհրաժեշտ է դարձնում այդ դաշտում գործառնելու ու նրա կառավարման մեխանիզմների վերանայումը: Ուստի Հայաստանի Հանրապետության կողմից անվտանգության քաղաքականության մշակումն ու իրականացումը անհրաժշտաբար պահանջում է այդ միտումների իրատեսական վերլուծությունն ու հաշվառումը:

1. «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» հասկացության բնորոշումը

Տևական ժամանակ է, ինչ անվտանգությունը գիտական ուսումնասիրությունների համար համդես է գալիս որպես ինքնուրույն հիմնախնդիրների ամբողջություն: Ակզեման առավելապես քննարկման ենթակա էին ազգային անվտանգության հարցերը: Իսկ արդեն XX դարի վերջում համընդհանուր-համակարգային հասկացությունների շարքում «ազգային անվտանգության» հետ մեկտեղ առանձնահատուկ տեղ զբաղեցրեց նաև «անվտանգություն» կատեգորիան: Դա պայմանավորված է մարդկության զարգացման բարդությամբ, նյութական աշխարհի առարկաների ավելացմամբ, միջուկային և զանգվածային ռչնչացման այլ գեներերի տարածմամբ, նոր վտանգավոր հիվանդությունների ի հայտ գալով, միջազգային ահարեւկչությամբ¹:

Անվտանգության հիմնախնդիրն նվիրված գիտական քննարկումները, հետազոտությունները համակարգել ու առաջադրել են մի շարք հիմնարար հարցադրումներ, որոնք կարևոր են անվտանգության հայեցակարգի մշակման գործում, մինչդեռ այդ հարցադրումներն այսօր էլ կարոտ են միարժեք պատասխանի: Դրանք են՝

1. Ի՞նչ է անվտանգությունը:
2. Անվտանգություն ու՞ն համար:
3. Անվտանգություն ո՞ր արժեքների համար:
4. Անվտանգություն ո՞ր սպառնալիքներից, վտանգներից:
5. Անվտանգություն ի՞նչ չափով:
6. Անվտանգություն ի՞նչ միջոցներով, եղանակներով:
7. Անվտանգություն ի՞նչ գնով:

Առաջադրված հարցադրումներն անհրաժեշտաբար պահանջում են անդրադարձ անվտանգության չափումներին, օրյեկտին, սուրյեկտին, չափանիշներին, սպառնալիքներին և վտանգներին, անվտանգության ապահովման միջոցներին:

¹ Сенчагов В.К. Экономическая безопасность: геополитика, глобализация, самосохранение и развитие (книга четвертая) Институт экономики РАН, М., ЗАО “Финстатинформ”, 2002, էջ128:

1) Ի՞ՆՉ Է ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Թեպետ անվտանգությունը բոլոր ժամանակներում եղել և շարունակում է մնալ առանցքային ու ակտուալ հիմնախնդիր, այնուամենայնիվ, այն այսօր էլ վիճահարույց հայեցակարգ է: Այդ հայեցակարգի միայն մեկ հանգամանքի շուրջ է փոխանակածայնություն առկա, որը շոշափում է անվտանգության իրավիճակային ասպեկտը, չափումը. այն է անվտանգությունը սպառնալիքից ազատության վիճակ է: Անվտանգության հակունյան է համդես գալիս ոչանվտանգությունը՝ վտանգված ազատության կամ վտանգներ պարունակող իրավիճակը:

Սակայն հասկանալի է, որ անվտանգությունը միայն այդ ստատիկ ասպեկտով չէ, որ բնորոշվում է: Այն ունի նաև դիմամիկ ասպեկտ, որն էլ ներառում է սպառնալիքից ազատության՝ անվտանգության վիճակի ձեռքբերման գործընթացը: Այսինքն՝ անվտանգության պրոբլեմատիկայի մյուս ասպեկտը, տեսանկյունը գործընթացայինն է: Վերջինս հասկանալիորեն ենթադրում է և այդ վիճակի ձեռքբերումն ապահովող, և այդ վիճակն ամրապնդող արժեքների, դերերի, պարտականությունների, գործառույթների, մեթոդների իրացում: Ասել է թե՝ անվտանգությունը հանգում է որոշակի, մասնագիտացված համակարգի միջոցով ազատության ապահովման, ամրապնդման խնդրին: Ուստի անվտանգության պրոբլեմատիկայի մյուս կարևորագույն ասպեկտը համակարգայինն է:

Անվտանգության համակարգը նկատի ունենալով (ազգային անվտանգության համակարգը, այսուհետ կօգտագործենք ԱԱՀ հապավումը), լինի այն քաղաքական համակարգի մեջ տարրալուծված թե ինքնուրույն մաս, օբյեկտիվորեն ենթադրում է հետևյալ հինգ ենթահամակարգերի առկայություն:

1. **Նորմատիվային ենթահամակարգում** անբողջանում են այն բոլոր նորմերը, որոնք սահմանում են որոշակի պարտականություններ, պարտավորություններ և իրավունքներ անվտանգության թե՝ սուրյեկտի, թե՝ օբյեկտի համար: Այդ նորմերի կատարումը, կյանքի կոչումը ԱԱՀ ինստիտուտների, մասնագիտացված հանրույթի անդամների կողմից անհրաժեշտ կամ պարտադիր է անվտանգության ապահովման նկատառումներով:
2. **Ինստիտուցիոնալ ենթահամակարգ:** Այն ներառում է պետական

(օրինակ՝ անվտանգության խորհուրդը, անվտանգության նախարարությունը, հետախուզական-գործակալական և այլ ինստիտուտները) ու ոչ պետական՝ հասարակական (օրինակ՝ ազգային միասնությունը, համախմբածությունը, դիմադրությունը ապահովող և այլն) ինստիտուտները, որոնք կապված են ԱԱՀ-ի արժեքների հետ և կոչված են իրականացնելու անվտանգության հռչակված առաջնահերթությունները, նպատակները, գործառույթները, ապահովել անվտանգության օբյեկտների սպառնալիքից ազատության վիճակը: Նորմերը կարող են լինել ֆորմալ գրված և ոչ ֆորմալ՝ չգրված:

3. **Արժեքային-մշակութային (հաղորդակցական) ենթահամակարգ:** Ներառում է անվտանգության օբյեկտի հետ կապված այն արժեքների համախումբը, որոնք սուրբեկտին գործողության՝ պարտականության, պարտավորության, գործառույթի, դերի կատարման են հարկադրում կամ մոտիվացնում: Այդպիսի արժեք է, օրինակ, ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, հանրապետության անվտանգությունը և տարածքային անբողջականությունը, որոնց ապահովումը ՀՀ նախագահի պարտականությունն է, կամ էլ հայրենասիրությունը՝ յուրաքանչյուր քաղաքացու համար: Կերպինս կամային-բարոյական (ոչ պարտադիր, սակայն հասկանալիորեն ցանկալի) պարտավորություն է: Ընդհանուր առմամբ դրանք այն արժեքներն են, որոնք ֆորմալ կամ ոչ ֆորմալ ինստիտուցիոնալանում են, այսինքն՝ պայմանավորում են անվտանգության համակարգի ինստիտուտները և ամրագրվում են կոնկրետ նորմերով: Այս ենթահամակարգում են անբողջանում նաև անվտանգության դերակատարների՝ ինստիտուտների, մասնագիտացված հանրույթի անդամների, իսկ ընդհանուր դեպքում՝ անվտանգության օբյեկտի և սուրբեկտի փոխագրեցության մեթոդները (հաղորդակցություն, մշակույթ տերմինն այստեղ հենց այդ իմաստն ուն): Մասնավորապես վերջին դեպքում խոսքը վերաբերում է ներգործության ու փոխագրման այն եղանակներին, որոնցով անվտանգության սուրբեկտը ազդում է օբյեկտի վրա, և հակառակը: Այդ ներգործությունն իրականացվում է քաղաքական (իշխանության և իշխանական հարաբերությունների, քաղաքականության միջոցով), իրավական (ամրագրված նորմերի և կանոնների միջոցով), սոցիոլոգիական (դերերի, պարտականությունների կատարման միջոցով) և հոգեբանական (ինֆորմացիոն, մանհպուլյացիոն և այլ միջոցներով) մե-

թողներով:

4. **Գործառութային ենթահամակարգում** ամբողջանում են այն գործառույթները, դերերը, որոնց կատարումը ենթադրում է անվտանգության ապահովում և սպառնալիքների, վտանգների չեղոքացում, կառավարում: Որպես սպառնալիքից ազատության իրավիճակ, ինչպես նաև դրա ձեռքբերման ու ամրապնդման գործընթաց՝ անվտանգության գործառույթները դասակարգվում են երկու մեծ խմբերում (էջ 269)²:

ա) գործառույթներ, որոնք անմիջականորեն կապված են սպառնալիքից ազատության վիճակը պահպանելու և ամրապնդելու հետ, ավելի կոնկրետ՝ անվտանգության օբյեկտը հնարավոր սպառնացող զարգացումներից, սպառնալիքներից ապահովագրելու հետ: Այս խնդիրն հարող գործառույթները ընդունված է անվանել պարզապես անվտանգության գործառույթներ: Դրանք սերտորեն ասոցացված են առաջընթացի հետ, և նրանց կապն անվիճարկելի է, քանի որ միանգամայն տեղավորվում է պատմության համատեքստում: Այս գործառույթների թվում կարևոր տեղ է զբաղեցնում «կանխատեսելիության կառավարումը» (պատկերավոր՝ չի կարելի անել սա, վարվել այս կերպ, կատարել այս քայլը, իրականացնել այսպիսի քաղաքականություն, որովհետև սպասվում է այս կամ այն սպառնալիքը, վտանգը):

բ) գործառույթներ, որոնք կապված են առկա և պոտենցիալ սպառնալիքները, վտանգները չեղոքացնելու հետ: Այս գործառույթներն անվանում են սպառնալիքի, վտանգի կառավարման գործառույթներ: Գործառույթների այս խումբը ասոցացված է հակագրման, պատասխանի հետ (պատկերավոր՝ եթե գոյություն ունեցող կարգի համար վտանգավոր է համարվում ինչ-որ բան և պետք է հակագրել):

5. **Մասնագիտացված հանրույթի ենթահամակարգ:** Սա ներառում է պետության տարբեր կառույցներում, պետական և տեղական իշխանության ամենատարբեր մակարդակներում, հասարակական տարբեր խավերի, դասերի շրջանակներում, կազմակերպություններում, մասնագիտական

² Биго Д. Проблемы безопасности: теоретические дискуссии и институциональный контекст, էջ 266-306, Международные отношения: социологические подходы (Рук. авт. колл. проф. П.А.Цыганков, М. Гардарика գրքում 1998, էջ 352):

³ Hirschman A.O., Deux sièles de rhétorique réactionnaire, Fayard, Paris. 1992:

տարբեր խմբերում ու ոլորտներում գործառնող անձանց, կոլեկտիվներին: Վերջիններս գործողության մեջ են դնում ԱԱՀ-ի ինստիտուտները, նորմերը, կատարում ԱԱՀ-ի նորմատիվ, գործառության ենթահամակարգերով նախատեսված դերերը, գործառությունները, օգտագործում արժեքամշակութային (հաղորդակցական) ենթահամակարգով նախատեսված փոխազդեցության, ներգործության մեթոդները: Մասնագիտացված հանրութիւն անդամները ինստիտուտների հետ հաճարվում են անվտանգության դաշտի դերակատարները: Մասնագիտացված հանրութիւն անդամները ըստ դերաբաժանման դասակարգվում են՝

ա) ստրատեգիների, որոնք կոչված են մշակելու այս կամ այն ոլորտի անվտանգության ռազմավարությունը, իրավասու են ընդունել անվտանգության ապահովման հետ կապված որոշումներ.

բ) այդ ռազմավարությունները կյանքի կոչողների, որոնց պարտականությունն է իրականացնել ընդունված որոշումները, հետամտել հոչակապված նպատակները:

Երկու խմբերին հարող դերակատարներն ել ներկայացնում են հասարակական կյանքի տարբեր (քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ, հանրային կյանք) ոլորտները, բնագավառները:

Մասնագիտացված հանրութիւն անդամները դասակարգվում են նաև ըստ իրենց տնօրինած սիմվոլիկ կապիտալի (իրավասության ոլորտի, տիրապետած հնարքների) բնույթի: Այսպես. գործառությունների ա) խումբը կյանքի կոչելու համար անհրաժեշտ «կանխատեսելիության կառավարման» կապիտալը, որպես կանոն, տնօրինում են պետության դեկապարի կամ անվտանգության պրոֆեսիոնալի խորհրդականի դեր կատարող միջազգայնագետ մասնագետները: Դասկանալի է, որ տվյալ պարագայում խումբը տարբեր ոլորտների միջազգայնագետների մասին է, որոնք մասնագիտացած են տնտեսության, ռազմա-քաղաքական, էկոլոգիական, մշակութային և այլ ոլորտների միջազգային հարաբերությունների գծով: Գործառութային բ) խումբը կյանքի կոչելու համար անհրաժեշտ «սպառնալիքի կառավարման» կապիտալը տնօրինում են անվտանգության պրոֆեսիոնալները (անվտանգության մարմինների, պաշտպանության և ներքին գործերի գերատեսչություններում), կոնֆլիկտաբանները:

Անվտանգության նկատմամբ համակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս առանձնացնել երեք հարթություններ, որոնցում կարող

է դիտարկվել ԱԱՀ-ն: Դրանք են՝

1. Արժեքային հարթություն, երբ ԱԱՀ-ն դիտարկվում է իրեւ որոշակի սկզբունքներով կազմակերպված արժեքային համախումբ (օրինակ՝ պետությունը, հասարակությունը (ազգը), նրանց բնապատմական, քաղադաբական-սոցիալական ինքնատիպ միջավայրը, պետության ինքնիշխան գործունեությունը իրեւ գլխավոր արժեքներ, կամ մարդը՝ որպես արժեքը), իսկ անվտանգությունը սահմանվում է իրեւ սպառնացող վտանգներից այդ էական արժեքների ազատություն, ինչպես նաև՝ այդ արժեքներին սուբյեկտների կապվածության միջոցով որոշակի նորմերի, եղանակների, մեթոդների շնորհիվ նրանց այդորինակ վիճակի ապահովում:

2. Ինստիտուցիոնալ հարթություն, երբ ԱԱՀ-ն դիտարկվում է իրեւ ինստիտուտների համախումբ (վերը փակագծերում բերվածները՝ կրկին որպես ակնառու օրինակ), իսկ անվտանգությունը սահմանվում է որպես օբյեկտ-ինստիտուտների սպառնալիքից ազատության վիճակ, ինչպես նաև՝ որոշակի նորմերի, եղանակների, մեթոդների շրջանակներում այդ վիճակի ապահովում սուբյեկտ-ինստիտուտների միջոցով:

3. Իշխանական հարաբերությունների հարթություն, երբ ԱԱՀ-ն դիտարկվում է իրեւ սուբյեկտի կողմից օբյեկտի վրա (օրինակ՝ պետության իշխանությունը իր տարածքի և բնապատմական, սոցիո-մշակութային միջավայրի վրա) իշխանական հարաբերությունների համախումբ, որի միջոցով ապահովվում է լեգիտիմ և լեգալ, այսինքն՝ անվտանգ ճանաչվող իշխանության հաշվեկշիռը:

Հանրագումարելով անվտանգության համակարգային ասպեկտը՝ հարկ է նշել, որ անվտանգությունը օբյեկտի սպառնալիքից ազատության վիճակն է, ինչպես նաև՝ սուբյեկտի կողմից այդ վիճակի ձեռքբերման, պահպանման ու ամրապնդման նպատակով օբյեկտի վրա ներգործության որոշակի մեթոդներով իրականացվող գործառությթ, այդ գործառությթ(ներ)ի իրականացումն ապահովող ու անվտանգության ձեռքբերման գործնքացն ուղղորդող համակարգ: Փաստորեն, ԱԱՀ-ում առաջնայինը արժեքները և նորմերն են, որոնք սահմանում, նախանշում են որոշակի պարտավորություններ, պարտականություններ և իրավունքներ՝ պայմանավորելով համարժեք դերակատարությունների՝ գործառությունների, ինչպես նաև ինստիտուտների, փոխազդեցության և ներգործության եղա-

Նակների, մեթոդների և մասնագիտացված հանրույթի բնույթը:

Վերջապես, անվտանգության պրոբլեմատիկայի և մեկ՝ կարևորագույն ասպեկտի մասին: Անվտանգությունը նաև գործունեության յուրահատուկ ասպեկտ է: Ցանկացած պետական կամ սոցիալական միավորի գործունեություն, ի թիվս այլ ասպեկտների, ունի նաև անվտանգության ասպեկտ: Այսպես. պետության իրավական համակարգի զարգացումը ոչ միայն հասարակական կյանքի կարգավորման, այլ նաև անվտանգության ապահովման ասպեկտ ունի, կամ պետության տնտեսական, մշակութային հզորացումը, ի թիվս այլ ասպեկտների, ունի նաև անվտանգության ասպեկտ: Այնպես որ, անվտանգությունը՝ որպես գործունեության ասպեկտ, ամենուր՝ է, բոլոր նակարդակներում և ոլորտներում: Դետևաբար, այս տեսանկյունից, հասարակությունը քաղաքականացված է՝ թեկուզն անհատների, տարաբնույթ կոլեկտիվների ամենօրյա՝ անվտանգությանը ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող մտահոգությունների, աղերսների առօնություն:

Այսպիսով, պետական իշխանության բոլոր այն մարմինները, հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու շարժումները, կոլեկտիվները, ինչպես նաև՝ անհատները, որոնք կատարում են անվտանգության ա) և բ) խմբերից որևէ մեկին հարող գործառույթ, կրում են դրանց հետ կապված իրավունքներ և պարտականություններ, օբյեկտը ուղղված համապատասխան քաղաքական ակտիվություն, հանդես են գալիս իրեն անվտանգության սուբյեկտ: Իսկ նրանք, որոնք այդ գործառույթների կատարման ընթացքում և արդյունքում ենթարկվում են որևէ մեթոդով, եղանակով իրականացվող կառավարչական, իշխանական ներգործության, հանդես են գալիս իրեն անվտանգության օբյեկտ: Պետք է նշել, որ, բացի հասարակական-քաղաքական ուժերից, կազմակերպություններից ու շարժումներից, կոլեկտիվներից ու անձանցից, անվտանգության օբյեկտ են նաև պետական ու հասարակական գործունթացները, իրադարձությունները: Ինչպես ընդհանուր դեպքում է ծշմարիտ, անվտանգության դեպքում նույնպես օբյեկտ-սուբյեկտային փոխադարձ կապը դիմանիկ է և կազմում է մեկ օրգանական միասնություն: Արդյունքում սուբյեկտը հանդես է գալիս նաև որպես օբյեկտ:

Անվտանգության օբյեկտի վրա առավել հանգամանալից կենտրոնացումը պահանջում է նրանց դասակարգում: Վերը հիշատակված գործա-

ռույթների բնույթից ակնհայտ է, որ անվտանգության օբյեկտները և դասակարգում են երկու խմբում:

Օբյեկտներ, որոնք անվտանգության ձեռքբերման, ապահովման, ամրապնդման, ընդլայնման աղբյուր են: Անվտանգության այս օբյեկտները՝ պետական իշխանության մարմինները, հասարակական-քաղաքական ուժերը, կազմակերպությունները և շարժումները, կոլեկտիվները, անձինք, գործունթացները, իրադարձությունները պահանջում են անվտանգության զարգացման և առաջընթացի գործառույթների իրականացում: Պատկերավոր ասած, այդ գործառույթները անվտանգության օբյեկտի շուրջ ձևավորում են այսպես կոչված անվտանգության դաշտ կամ ամրապնդում ու ընդլայնում են այն: Օբյեկտների այս խմբի հետ է կապված «անվտանգություն ու մ համար» հարցադրման պատասխանը:

Օբյեկտներ, որոնք վտանգի (ոչ անվտանգության) աղբյուր են: Սրանը կազմում են վտանգների, սպառնալիքների խումբը և ենթադրում են սպառնալիքի կառավարման գործառույթների իրականացում: Այդ գործառույթների միջոցով չեղոքացվում, կառավարվում կամ վերացվում են այսօրինակ օբյեկտները, որոնք առաջին խմբին պատկանող օբյեկտների համար ոչ անվտանգության դաշտ են ձևավորում: Օբյեկտների այս խմբի հետ էլ կապված է «անվտանգություն ո՞ր սպառնալիքներից» հարցադրման պատասխանը:

Ակնհայտ է, որ անվտանգության օբյեկտը ներառող ողջ միջավայրը, տարածությունը, ինչպես նաև բուն օբյեկտները դիտարկվում են անվտանգության և ոչ անվտանգության տեսանկյունից: Նրանց շուրջը ձևավորված անվտանգության և ոչ անվտանգության դաշտերը ավելին են, քան բուն օբյեկտները: Մասնավորապես, օբյեկտի շուրջը ձևավորված անվտանգության դաշտը, նրա չափումներին համապատասխան, պայմանավորում է անվտանգ զարգացում, փոփոխություններ, ապագա (ժամանակային չափում), անվտանգ փոխազդեցություններ, ներուժ (էներգետիկ չափում), և անվտանգ սոցիալական ու աշխարհագրական տարածք (տարածական չափում): Եվ ճիշտ հակառակը՝ ոչ անվտանգության օբյեկտի ու դաշտի համար:

Սակայն անվտանգության դաշտը միայն օբյեկտիվ իրողություններով չէ, որ սահմանափակվում է: Անվտանգության սուբյեկտը՝ դերակատարները, և հատկապես ստրատեգները կարող են իրենց սուբյեկտիվ ազդեցու-

թյունն ունենալ անվտանգության այս կամ այն օբյեկտը համապատասխան խնդիր վերագրելու, նրանց շուրջը առկա դաշտը օբյեկտիվ և սուրյեկտիվ դրդապատճառներով (քաղաքական նպատակահարմարություն և այլն) անվտանգության կամ ոչ անվտանգության դաշտեր, օբյեկտներ հռչակելու համար: Դրա համար ելակետ են օբյեկտի ու նրա շուրջ գոյություն ունեցող դաշտի կապակցությամբ ստրատեգի մոտ առկա (կամ ցույց տրվող՝ Ելեկով նպատակահարմարությունից) տագնապի (հոռետեսության) և լավատեսության գործառույթները: Ելեկով այդ գործառույթներից անվտանգության գծով ստրատեգը, դերակատարը, իր կողմից հարուցված դիսկուրսներում ինչպես օբյեկտիվ, այնպես և սուբյեկտիվ իմաստ է հաղորդում այս կամ այն օբյեկտին: Դա հատկապես ակնառու է գլոբալ անվտանգության մակարդակում: Այսպես. որոշ քաղաքակրթական արեալներ, օրինակ՝ ԽՍՀՄ-ը, Արևմուտքի կողմից նախկինում որակվեց Չարիքի կայսրություն: Կամ այսօր էլ որոշ պետությունների տարածքներ, սուբյեկտիվ իմքի վրա «խմբավիրած» պետությունների համախումք (Իրաքը, Իրանը, Կորեան) հռչակվում են «չարիքի առանցքի» երկրներ: Եվ հակառակը՝ Արևմուտքի քաղաքակրթական արեալին կարող է վերագրվել անվտանգության դաշտի իմաստ: Նույն կերպ, իհարկե, օբյեկտիվ առումով, որոշ պետությունների ներսում առանձին տեղամասեր (օրինակ՝ Վրաստանի Պամկիսի կամ Կողորի կիրճը, կամ Աֆղանստանի առանձին տեղամասեր), առանձին խնբավորումներ, կազմակերպություններ և շարժումներ (օրինակ՝ Թալիրանը, ալ դահիան, չեչեն անջատողականներ), անհատներ (օրինակ Բեն Լադենը) ճանաչվում են որպես ոչ անվտանգության դաշտեր, օբյեկտներ: Այս կամ այն ժամանակին (օրինակ՝ ԽՍՀՄ հանրապետությունների կոմունիստական անցյալին, պատմությանը) իրադարձությունների ժամանակագրությանը, այս կամ այն մշակույթին, ներուժին, ռեսուրսին (տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլն, և հատկապես՝ ռազմական կարողություններին, տնօրինվող գենքի տեսակներին) քաղաքական նպատակահարմարությունից Ելեկով, կարող են վերագրվել ոչ անվտանգության կամ անվտանգության իմաստներ: Ազգային անվտանգության պարագայում, հատկապես ավտորիտար քաղաքական ռեժիմներով երկրներում, կրկին առանձին գործիչներ, անհատներ, կազմակերպություններ և շարժումներ կարող են սուբյեկտիվ նկատառումներով հռչակվել իրեն ոչ անվտանգության աղբյուրներ, օբյեկտներ: Կախված

օբյեկտի ու նրա դաշտի դասակարգումից՝ գործողության մեջ են դրվում համապատասխանաբար գործառության ա) կամ բ) խմբերը, ինստիտուտները և նորմերը, մասնագիտացված համրույթի համապատասխանաբար «կանխատեսելիության կառավարման» կամ «սպառնալիքի կառավարման» կայտարակությունը տնօրինող դերակատարները:

2) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՇԱՍԱՐ

Վերը քննարկվածից ակնհայտ է, որ համակարգային տեսանկյունից անվտանգությունը բարդ, բազմամակարդակ համակարգ է, որը բաղկացած է սեփական կառուցվածքը և զարգացման տրամաբանությունն ունեցող ինքնուրույն, առանձին ենթահամակարգերից: Ինչ խոսք, անվտանգության ամբողջական օբյեկտը հասարակությունը և պետությունն են (հասկանալի է՝ վերջինս՝ պետականություն ունեցող հասարակությունների համար), որոնք միասին կազմավորում են ազգ-պետություն համակարգը: ԱԱՀ-ի ենթահամակարգերի եռթյունը ճիշտ հասկանալու և հետազոտման նկատառումներով նպատակահարմար ենք համարում ազգային անվտանգության այդ օբյեկտը տրոհել երեք քաղադրիչի, որոնց համար պետք է ապահովվի սպառնալիքից ազատության վիճակը՝

1. սպառնացող վտանգներից ազգ-պետություն կառուցի ազատություն,
2. սպառնացող վտանգներից ազգ-պետություն կառուցի ներառող ու նրա ներքին կենսական միջավայրերի ազատություն,
3. սպառնացող վտանգներից ազգ-պետություն կառուցի գործունեության համակարգի ազատություն⁴:

Անվտանգության օբյեկտը այսօրինակ բաղկացուցիչների բաժանելու նպատակահարմարությունը փաստարկելու համար կարելի է դիտարկել մի քանի կարևոր հանգամանք:

- ա) Ազգային անվտանգության արժեքային համակարգերում հանդիպում են արժեքներ, որոնք կապված են գուտ կենսական միջավայրի հետ:

⁴ Ծանոթ.- Հետազա շարադրանքում կօգտագործվեն ինչպես «ազգ-պետություն համակարգ», այնպես և «ազգ-պետություն կառուցի» տերմինները: Վերջինս մյուս երկու քաղադրիչների՝ կենսական միջավայրի ու գործունեության համակարգի հետ կազմում է ազգ-պետություն համակարգը:

Օրինակ՝ բնական, սոցիալական, պարենային և այլ տիպի ռեսուրսները, որոնք կենսական նշանակություն ունեն ազգային անվտանգության համար: Հանդիպում են արժեքներ, որոնք կապված են զուտ ազգ-պետություն կառույցի հետ: Օրինակ՝ պետության տարածքային ամրողականությունը, ինքնիշխանությունը:Կան նաև արժեքներ, որոնք կապված են ազգ-պետություն կառույցի գործունեության հետ:Այսպիսին է, միջազգային հարաբերություններում պետության ինքնիշխան հանդես գալու արժեքը: Հասկանալի է, որ օրինակներ կարելի է բերել ԱՄՆ-ի դիտարկման ցանկացած հարթության (որի մասին վերը խոսվեց) և մակարդակի համար:

բ) Համակարգի լիարժեք անվտանգությունը ապահովված է, եթե անվտանգ են նրա մուտքերը, ներքին միջավայրը և ելքերը: Իսկ այդ մուտքերը լինում են ինչպես ներքին միջավայրից (որը համակարգի բովանդակություն է), այնպես էլ արտաքին միջավայրից: Հասկանալիորեն, արտաքին միջավայրը չի մտնում ազգ-պետություն կառույցի, նաև՝ համակարգի մեջ: Մինչդեռ հատկապես արդի ժամանակաշրջանում ներքին և արտաքին միջավայրերը այնքան փոխված են (այս մասին առավել հանգամալից կխոսենք ստորև), նրանց ջրաժանը՝ այնպես քայլայված, որ նպատակահարմար է ներքին ու արտաքին կենսական միջավայրերը դիտարկել մեկ միասնության, ամբողջության մեջ: Տնամ կերպ և պետք է անվտանգ լինեն նաև համակարգի ելքերը, որոնք մարմնավորվում են կոնկրետ գործողությունների, որոշումների տեսքով, որոնք ևս համակարգի ներքին բովանդակության արգասիքն են: Ազգ-պետություն կառույցը գործունեություն է իրականացնում ոչ միայն սեփական տարածքում, այլ նաև նրանից դուրս՝ տարածաշրջանային կամ գլոբալ մասշտարներով, որոնք ևս հասկանալիորեն չեն մտնում ազգ-պետության կառույցում: Ակնառու օրինակ է հայկական սփյուռքի ներուժի օգտագործումը այդ գործունեության համակարգում: Անվտանգության ուսումնա-սիրության նպատակով կրկին նպատակահարմար է ազգ-պետության գործունեության համակարգը դիտարկել առանձին:

Միաժամանակ, հասկանալի է նաև, որ սույն բաժանումը պայմանական է, քանի որ ինչպես վերը նշվեց, թե՝ միջավայրը (ներքին), թե՝ գործունեության համակարգը ազգ-պետություն համակարգի բաղկացուցիչներն են և կազմում են մեկ միասնական ամբողջություն: Այսինքն՝ ազգ-պետության

ներքո կառուցվածքային առումով մշտապես ենթադրվում է նրա և կենսական միջավայրը (միայն ներքին միջավայրը), և գործունեության համակարգը:

Տնամ պայմանական բաժանումը մեթոդաբանական նշանակություն կարող է ունենալ ազգային անվտանգության հայեցակարգի և դոկտրինի մշակման ժամանակ՝ միջավայր-կառույց-գործունեություն շղթայով արժեքները սահմանելու, նրանց արդյունավետ ուղիղ և հետադարձ կապերը ապահովելու տեսանկյունից: Վերը բերված օրինակներից այդպիսի արժեք է ՀՀ ինքնիշխանությունը, որը ենթադրում է թե՝ պետության ինքնիշխան կառավարում (գործունեություն) ներպետական տարածությունում և թե՝ նրա ինքնիշխան հանդես գալը միջազգային հարաբերություններում դրանով իսկ կապելով միջավայրը, ազգ-պետություն կառույցը և գործունեության համակարգը: Իսկ վերը բերված ընդհանրական օբյեկտների համար սահմանված արժեքների միջև կոչտ ջրաֆաններն անցանկալի են, քանզի արժեքները պետք է կանխորշեն և հուշեն՝ ի՞նչը պաշտպանել (ապահովել), ինչի՞ց պաշտպանել, որտե՞ղ (ո՞ր մակարդակում) պաշտպանել (ապահովել) և ինչպես պաշտպանել (ապահովել)՝ կրելով ակտիվ բնույթը:

Դարձ է նշել, որ ազգ-պետություն կառույցը, այն ներառող կենսական միջավայրը և գործունեության համակարգը բնութագրվում են տարածական, ժամանակային և էներգետիկ չափումներով, որոնք միասին վերցված թույլ են տալիս գնահատել նրանց ազատության աստիճանները և վերջինիս ապահովման հնարավորությունները: Անվտանգության ընդհանրական օբյեկտներից յուրաքանչյուրի համար հիշատակված չափումներն ունեն իրենց ֆիզիկական և ոչֆիզիկական (սոցիալական) բաղկացուցիչները, որոնք տարբեր մակարդակներում (մակրո-, մեզո- և միկրո-մակարդակներ⁵) գտնվող միավորների համար բերված են աղյուսակ 1-ում:

⁵ Մարգարյան Ս., Սաֆարյան Ս., Գաղափարախոսական կողմնորոշչները ՀՀ արդիականացման գործընթացում, Պետական կառավարման արդի հիմնախնդիրները, «Պետական ծառայություն», Գիր 1, 1999թ., էջ 16-22:

Օրինակ	Տառամասական չափում		Էներգետիկ չափում		Օճախ - 1-ը՝ հասարակության պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը և սույնությունը ուղղակի համապատասխանությունը 2-ը՝ պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը և սույնությունը ուղղակի համապատասխանությունը
	Սոցիո-քաղաքական տեսակակիր չափում	Կամավայրական չափում	Սոցիո-քաղաքական տեսակակիր չափում	Կամավայրական չափում	
Ազգա- կառական կարգ	1. Հասարակության դիմումը աշխատավորության վերաբերյալ, նույնականացնելու աշխատավորության վերաբերյալ, կամավայրական կարգը աշխատավորության վերաբերյալ 2. Պահանջման համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջման համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջման համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ	1. Բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջման համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջման համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ 2. Աշխատավորության վերաբերյալ պահանջման համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջման համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջման համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ	1. Հասարակության պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ 2. Աշխատավորության վերաբերյալ պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ	1. Հասարակության պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ 2. Աշխատավորության վերաբերյալ պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ	1. Հասարակության պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ 2. Աշխատավորության վերաբերյալ պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ, պահանջմանը բարեկարգ համապատասխանությունը աշխատավորության վերաբերյալ

2.1. Անվտանգության օրիենտի և անվտանգության տարածական չափումը

Ազգ-պետություն կառույցը գոյություն ունի, ավելի հստակ՝ լոկալացված է որոշակի տարածության մեջ, որն ունի ֆիզիկական-աշխարհագրական և սոցիալական բաղադրիչներ: Առաջին դեպքում այդպիսին է հանդես գալիս պետության տարածքը, հասարակության կողմից բնակեցված տարածքը: Այն ազգ-պետություն կառույցի տարածքքային հիմքն է (էջ 146): Մյուս կողմից պետության մարմինները, հասարակության բաղկացուցիչները իրենց գործունեության արդյունքում ձևավորում են սոցիալական տարածությունը, որը կառուցվածքավորված է ըստ իշխանական հարաբերությունների, ռեսուրսների, կարգավիճակների, դերերի: Այն սոցիալական տիպի յուրօրինակ կենսական միջավայր է հասարակության և պետության բաղկացուցիչ տարրերի գործունեության համար: Յասկանալիորեն, ֆիզիկական-աշխարհագրական տարածքը այսպիսի բնակչության համապատասխան է, որը բոված է պահանջման համապատասխանությունում և պահանջման համապատասխանությունում:

Անվտանգության տարածական չափումը ենթադրում է այն տարածքի (թե՝ սոցիալական, թե՝ աշխարհագրական) գերծ լինելը սպառնալիքներից ու վտանգներից, կամ վերջիններիս արկայության դեպքում դրանց կառավարելիությունը և կանխատեսելիությունը, որի սահմաններում լոկալացված է ազգ-պետություն կառույցը, որի բովածնակարգությունը կենսական նրա համար, և որտեղ ծավալվում է նրա գործունեությունը:

Ազգ-պետության (ֆիզիկական-աշխարհագրական) տարածքային սահմանները որոշվում են միջազգայնորեն ճանաչված (չճանաչված հանրապետությունների դեպքում այդ սահմանները նվազված և ամրագրված են պատերազմում տարած հաղթանակի, անկախացնան կամ այլ իրադարձության ուժով) սահմաններով: Դրանով իսկ սահմանագատվում են ֆիզիկական-աշխարհագրական ներքին կենսական միջավայրն ու գործունեության համակարգի ֆիզիկական-աշխարհագրական տարածական հիմքը:

⁶ Զերքին Դ.Պ. Օսновы политологии, Курс лекций, 2-е изд., доп. Ростов н/Д, Феникс, 1999, էջ 576 :

Սոցիալական տարածության սահմանները որոշվում են քաղաքակրթական, մշակութային ինքնության, նույնականացման հայեցակարգերով, որոնք թույլ են տալիս տվյալ հանրությին սահմանազատվել գլոբալ, տարածաշրջանային մակարդակում: Վերջինիս շնորհիվ էլ առանձնանում են նրա գործունեության համակարգի և կենսական միջավայրի սահմանները սոցիալական (ոչֆիզիկական) տարածության մեջ: Ակնհայտ է, որ այս տարածությունը, ի հակադրություն ֆիզիկական-աշխարհագրականի, գրեթե անսահման կարող է լինել գործունեության արդյունավետ համակարգի դեպքում և միաժամանակ կարող է հնարավորություն տալ շահագործելու այլ երկրների սոցիալական-քաղաքական ու ֆիզիկական-աշխարհագրական տարածքներ (ինչպես, ցավոք անում են զարգացած երկրներ թույլ, անցումային երկրներում): ՀՀ-ի համար ազգային անվտանգության մակարդակով առաջնային է սեփական սոցիալ-քաղաքական տարածության ամբողջականության պահպանումը, որի հետ կապված, այսօր հաճախ են թվարկվում մշակութային սահմիլացիայի, դեգրադացիայի, արևմտականացման, մշակութային ինքնության, հայկական քաղաքակրթական իմաստային տարածության «քայլայման» վտանգները, ինչպես նաև այլ երկրների կողմից ՀՀ սոցիալական, բնականաբար նաև՝ ֆիզիկական տարածքի շահագործման, ինքինշխանության փաստացի կորստի և այլ սպառնալիքները, վտանգները:

Ազգ-պետություն կառույցի տարբեր մակարդակներին պատկանող միավորների ֆիզիկական-աշխարհագրական տարածքային հիմքերը պետության և հասարակության կտրվածքներով բերված են աղյուսակ 1-ում: Դրանց սահմանները համեմատաբար կոչու են պետության կտրվածքով՝ պետական իշխանության նարմինների գործունեության ծավալման առումով: Խոսքը չի վերաբերում պետական իշխանության կենտրոնական մարմիններին, որոնց գործունեությունը ծավալվում է երկրի ողջ տարածքում: Մինչեւ կոնկրետ մարզի տարածքային կառավարման մարմինը չի կարող գործունեություն իրականացնել մյուս մարզում: Նույնը և համայնքի դեպքում:

Պետության կտրվածքով, ինչպես արդեն նշվեց, մակրոնակարդակում դա երկրի տարածքն է, մեզոնակարդակում մարզի տարածքն է, միկրոնակարդակում՝ համայնքի տարածքը: Մինչեւ այդ վարչատարածքային կամ համայնքային սահմանները հասարակության կտրվածքով նրա միա-

վորների համար խոչընդոտ չեն ողջ երկրի տարածքով մեկ գործունեություն ծավալելու համար: Սա սոցիալական միջավայրի կազմակերպման, տարածության բովանդակության առանձնահատկությունն է:

Դասկանալի է, որ ֆիզիկական-աշխարհագրական տարածության տարանջատումը սոցիալականից ևս պայմանական է, քանզի, ինչպես ստորև ակնհայտ կլինի, այն այս կամ այն մակարդակում հանդես է գալիս իրեն տվյալ մակարդակի սոցիալական կամ պետական միավորի տարածքային հիմք:

Սոցիալական տարածության մեջ հասարակության և պետության կտրվածքներով ազգային անվտանգության մակրոհարթությունը համապատասխանաբար հասարակության, հանրույթի և պետական իշխանության կենտրոնական մարմինների մակարդակն է: Այն ենթադրում է հանրային և պետական անվտանգության համարժեք մակարդակային օբյեկտների անվտանգություն: Մեզոնակարդակը սոցիալական համակարգի դեպքում խնբայինն է և ենթադրում է առանձին խմբերի, կոլեկտիվների (էթնիկ, սոցիալ-դասային, քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական (օրինակ՝ ընտանիքը, և այլն) անվտանգությունը: Եսկ պետության դեպքում մեզոնակարդակը պետության տարածքային իշխանության մակարդակն է, որն էլ ենթադրում է վարչատարածքային միավորի՝ մարզի (իր տարածքով և բնակչությամբ) ու նրա կառավարման մարմնի անվտանգություն: Միկրոնակարդակը հասարակության կտրվածքով անհատական է, ենթադրում է անհատի, քաղաքացու անվտանգություն, իսկ պետության կտրվածքով՝ համայնքային իշխանություններն են, ենթադրելով համայոքի ու նրա ինքնակառավարման մարմնի անվտանգության բաղադրիչը:

Արտաքին սոցիալական տարածության մեջ ազգ-պետության գործունեության համակարգի համար մեզոնակարդակը ինտեգրացիոն միավորի, միջպետական համագործակցության, տարածաշրջանային կազմակերպությունների մակարդակն է, մակրոնակարդակը՝ համաշխարհային կազմակերպությունների մակարդակը: Արտաքին ֆիզիկական-աշխարհագրական տարածության մեջ ազգ-պետության գործունեության համակարգի մեզոնակարդակը տարածաշրջանն է (օրինակ՝ կովկասյան տարածաշրջանը), մակրոնակարդակը՝ ողջ մոլորակը: Ազգ-պետության գործունեության համակարգը այդօրինակ (ըստ էության՝ այլոց տարածու-

թյուն մտնելու) տարածքային հիմքեր է ստանում երկողմ համաձայնությունների, պայմանագրերի, կազմակերպություններին ու կազմավորումներին անդամակցելու ուժով։ Սոցիալական թե ֆիզիկական-աշխարհագրական այդ տարածություններում ազգ-պետության ամրագրված, հռչակած շահերին սպառնացող վտանգը առաջին հերթին գործունեության համակարգին սպառնացող վտանգ է (սա ևս մեկ փաստարկ է անվտանգության օբյեկտը՝ ազգ-պետության համակարգը, բաղադրիչների բաժանելու օգտին)։

2.2 Անվտանգության օբյեկտի և անվտանգության ժամանակային չափումը

Ազգ-պետություն կառույցը, կենսական միջավայրն ու գործունեության համակարգը ինչպես որ ունեն տարածական չափում, ունեն նաև ժամանակային չափում։ Անվտանգության օբյեկտի բաղկացուցիչների ժամանակային չափման դիտարկումը անհրաժեշտ է, քանզի, ինչպես վերը նշվեց, անվտանգությունը նաև սպառնալիքից ազատության վիճակի ծեռքբերման դինամիկ գործընթաց է։ Իսկ անվտանգության ժամանակային չափումը ենթադրում է օբյեկտի (իր բաղկացուցիչներով հանդերձ և ամրողականության մեջ) անվտանգ ներկա և ապագա՝ կարծամակետ (ընթացիկ), միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով։

Անվտանգության օբյեկտի բաղկացուցիչների, ինչպես նաև անվտանգության ժամանակային չափումը, ի համանանալություն տարածականի, ևս ունի երկու բաղադրիչ՝ ֆիզիկականը և ոչֆիզիկականը։ Ֆիզիկական ժամանակը մեր առօրյա ընկալման ժամանակն է (պատկերավոր ասած՝ այն չափում է ժամացուցով), որը բնորոշ է անօրգանական աշխարհին⁷։ Ժամանակի անընդհատ փոփոխվող հոսքերում այդորինակ յուրաքանչյուրը օբյեկտ կարծես թե պայմանավորում է կայում գծի էֆեկտ (առանց կենդանի ժամանակային պուլսացիաների)։ Այդպիսի օբյեկտների համակցված բազմությունն էլ ծևավորում է բավական կայուն ժամանակային ֆոնը, կամ այսպես կոչված «ռելիկտային» (մնացորդային, մնացուկային) ժամանակը, որի երկայնքով էլ «տեղադրվում» է ժամանակի հաշվարկ-

ման առանցքը։ Այդ է պատճառը, որ ժամանակի ֆիզիկական բաղադրիչն ունի գծային բնույթ։ Անվտանգության օբյեկտների տեսանկյունից ժամանակային այսօրինակ բաղադրիչը բնորոշ է բնական-ֆիզիկական արժեքներին, միավորներին։ Այսպես, կենսական միջավայրի ֆիզիկական բաղադրիչների՝ նյութական ռեսուրսների (օրինակ՝ ընդերքի ռեսուրսները, գույքը և այլն) երկարակեցությունը չօգտագործվելու դեպքում գործեք անսահմանափակ կամ տևականորեն երկար է։ Մինչդեռ օգտագործվելու կամ նրանց պահպանության համար անհրաժեշտ հոգ չտանելու պարագայում վերջիններիս ժամանակը անսահմանափակ չէ՝ դրանք սպառվում, բարոյապես ու սոցիալապես ոչ պիտանի են դառնում որոշակի ժամանակահատվածի ընթացքում։ Այսինքն՝ նույնիսկ այդպիսի ռեսուրսները սոցիալական համակարգի մասը կազմելու դեպքում ստանում են ևս մեկ ժամանակային չափում ոչ ֆիզիկականը։

Ոչ ֆիզիկական է ժամանակը հատկապես կենդանի օրգանիզմների, «պուլսացիոն» գործունեությամբ սոցիալական համակարգերի դեպքում։ Նրանք բավական ազատ կերպով նանիպուլացնում են ժամանակային հոսքերը։ Վերջիններիս ոչֆիզիկական ժամանակն ունի ինչպես գծային, այնպես և ոչգծային բաղկացուցիչ։ Ոչֆիզիկական ժամանակի գծային բաղկացուցիչը դրսևորվում է նրանում, որ մարդը, կոլեկտիվը, հանրույթը ժամանակագրական շղթայի երկայնքով գիտակցաբար սամողակավորում են այդ հոսքերը սինվոլների միջոցով։ Այս ժամանակի ոչգծայնությունը դրսևորվում է նրանում, որ թվարկված սուբյեկտները սանդղակավորված ժամանակային հոսքին (կամ նրա հատվածին) են միացնում իրենց գիտակցությունը՝ հաղորդակից դաշնալով կոնկրետ՝ հեռու կամ մոտ ժամանակահատվածին (հիշողության ուժով և «բռիչքով» հաղորդակցվել անցյալի այս կամ այն իրադարձությանը և ներկայում ցուցաբերել նրան համարեք, ոչ թե անմիջապես նախորդած ժամանակահատվածի գծայնորեն պլանավորած վարքաբանությունը)։

Սոցիալական տիպի համակարգի դեպքում առկա են երկու ժամանակային փոնքեր՝ ռեալ, այժմ էլ հոսող ներկան և գիտակցության մեջ սանդղակավորված, «հոսած-անցած»։ Այս երկու հիմնական «ժամանակային փոնքերի» վրադրումն էլ կազմում է մարդու, հանրույթի գիտակցական (պատմական ու ներկա) հիշողությունը։ Պետությունը, հանրույթը, կոլեկտիվը, անհատը կարող են այս ամենին հավելել նաև ապագան, եթե

⁷ Климов В.В., А.Любишев и проблемы организической формы: опыт метафизического исследования, т 22-35, "Человек" амсагիր, Наука, 2. 1991:

նրանք այդ ապագային հասնելու համար իրատեսական զարգացման պլանավորում (սիմվոլներով սանդղակավորված) ունեն և համարժեք հետագիծ կարող են թողնել ընդհանուր ժամանակային փնջում: Անվտանգության հոչակված նպատակներն այդ ապագայի առարկայացումն են: Դենց այդ ժամանակն էլ (ներկայի և ուրվագծվող ապագայի) հանդես է գալիս իբրև սոցիալական-քաղաքական ժամանակ, իսկ զարգացումը, առաջընթացը դաշնում են այդ ժամանակի միջնորդավորված ընկալումը (ի դեպ, ի տարրերություն տարածության, ժամանակը միշտ միջնորդավորված կերպով է ընկալվում՝ կոնկրետ նյութական օբյեկտի միջոցով):

Ազգ-պետության համակարգի սոցիալական տարածության համար ոչ-ֆիզիկական ժամանակի գծային ու ոչգծային քաղադրիչների ներկայացման առումով պատկերավոր կարող են լինել սույն օրինակները: ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ հոդվածներով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է, և որ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Միաժամանակ Սահմանադրության մեկ այլ նորմով ամրագրված է, որ այս դրույթներն անփոփոխ են: Այս նորմերով ի սկզբանե ՀՀ-ի համար՝ որպես վերը նշված առանձնահատկությամբ բնութագրվող սոցիալական համակարգի, ամրագրված է անսահմանափակ երկարակեցություն՝ գոյատում և զարգացում անսահմանության այդ կոնտինումում: Մինչդեռ իրականության մեջ բացառված չեն այնպիսի զարգացումներ ու փոփոխություններ, որոնք վերջ դնեն ինքնիշխանությանը, ժողովրդավարությանը և նյութ թվարկվածներին: Այսինքն՝ վտանգները կարող են անմիջականորեն սպառել ազգ-պետություն համակարգի ոչֆիզիկական գծային ու ոչգծային անսահմանափակ ժամանակը: Ազգ-պետության տարածքային հիմքի ժամանակի համար մեկ այլ օրինակ կարող է լինել հայոց պատմության ընթացքում տարածների պարբերական կորուստները: Մինչ կորստի պահը այդ տարածները մեկ ամբողջական տարածքի ու նրա միասնական սոցիալական ժամանակային փնջի մասերն էին պայմանավորում: Գործունեության համակարգի համար այդպիսի օրինակ է Սկրի դաշնագրով ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի չկոչելը, որի արդյունքում մի շարք տարածներ այդպես ել չվերադարձվեցին Հայաստանին:

Նույնը պատկերավոր է Աղրբեջանի միջազգայնորեն ճանաչված սահ-

մանների, տարածքի համար, երբ Ղարաբաղյան պատերազմի արդյունքում այդ տարածքը, սահմաններն այսօր իրենց ամբողջության մեջ ու factio գոյություն չունեն: Ավելին, Աղրբեջանը գրկված է իր մի շարք վարչական տարածքները տնօրինելու հմարավորությունից: Ասել է թե՝ աղրբեջանական ամբողջական պետության, նրա ամբողջական տարածքի համար ի սկզբանե անսահմանափակ (ՀՀ համանմանությամբ) «պլանավորված ժամանակային փնջի» մասը կազմող, հայերի կողմից ազտագրված այդ վարչական տարածքների ոչֆիզիկական (աղրբեջանական) գծային ու ոչգծային ժամանակներն առաջն գոյություն չունեն, և արդեն իսկ «ռելիկտային» են՝ անցյալ ժամանակ: Այս կարող է և «չվերակենդանանալ», եթե նրանք չվերադարձվեն: Նույն է նաև Ղարաբաղի դեպքում, որը, ի դեմք իր ինքնորոշված քաղաքական համակարգի, արդեն իսկ ունի սեփական, ինքնուրույն սոցիալ-քաղաքական ժամանակը (ներկան, գուցե նաև ապագան, որը հայկական կողմի նպատակն է՝ աղրբեջանականից միանգանայն տարրեր): Թվարկվածը պետության վտանգված տարածքի, ներկայի ու ապագայի վառ օրինակ է:

Անվտանգության ընդհանրական օբյեկտների համար ժամանակային չափումը առավել հանգամանորեն հասկանալու համար հարկ է դիտարկել, թե ինչ սոցիալական կառուցվածքներից, գործոններից է կախված ոչ-ֆիզիկական (սոցիալ-քաղաքական) ժամանակը: Այսինքն՝ ինչպես են կապված սոցիալական տարածությունը և սոցիալ-քաղաքական ժամանակը, ինչպես են պատմական ու սոցիալ-քաղաքական ժամանակը կառուցվածքավորում սոցիալական տարածությունը, կենսական միջավարը, ազգ-պետություն կառույցը և գործունեության համակարգը, և հակառակը: Ժամանակի այս քաղադրիչը օբյեկտիվ առումով կախված է հոչակված ինստիտուտներից, իսկ սուբյեկտիվ առումով՝ գիտակցությունից: Այս երկուսն էլ հանդես են գալիս իբրև անվտանգության օբյեկտի՝ պայմանականորեն տարանջատված երեք քաղադրիչների քաղկացուցիչներ: Դետադրծ կապի մեխանիզմով գիտակցության գործունեությունը օրգանապես և անխօնելիորեն կապված է ժամանակի հետ. գիտակցությունը կառուցվածքավորվում է ժամանակի (ներկա, անցյալ և ապագա) կողմից, իսկ ժամանակը՝ գիտակցության կողմից: Այս դեպքում է, որ ժամանակը ընկալվում է որպես «ոչֆիզիկական» (ոչ իներցիոն) պարամետր: Այստեղ է, որ անվտանգության տեսանկյունից կարևորվում է, թե հատկապես ժա-

մանակի որ հատվածի (անցյա՞լը, ներկա՞ն, թե՞ ապագան) ազդեցությունն է մեջ գիտակցության կառուցվածքավորման մեջ:

Վտանգը ոչ թե սոսկ անցյալ, ներկա կամ ապագա ժամանակների ազդեցությունների հետ է կապված, որքան սիմվոլներով սանդղակավորված այդ փնչի այն հատվածների ազդեցության հետ, որոնք անվտանգության ապահովման արդյունավետ մեխանիզմներ չեն կարող ապահովել (օրինակ՝ պարտվածի, հալածվածի հոգեբանության հետ կապված սիմվոլները): Այսինքն՝ խնդիրն այն է, թե ժամանակի որ հատվածներին է հղում կատարում գիտակցությունը, որ հատվածի ու նրա սիմվոլների հետ է հաղորդակցվում, ուստի ինչպես է կառուցվածքավորված գիտակցությունը: Այս համատեքստում պետք է դիտարկվի անվտանգության ապահովման ժամանակային չափումը: Յայի անհատական, խմբային և ազգային գիտակցության «չափորոշիչների» վերահնաստավորումը, վերարժնորումը ու «ներարկումը» վերը նշված տեսանկյունից ազգային անվտանգության կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դառնա: Եվ դա այն պարզ պատճառով, անվտանգության օբյեկտի արդյունավետ, անվտանգ ու միաժամանակ վտանգներին դիմակայող գործառնությունը հնարավոր է սոսկ նրա սոցիալական բաղկացուցիչ գիտակցության վերակառուցվածքավորման միջոցով, իսկ այդ գիտակցությունն էլ իր հերթին պետք է կառուցվածքավորի նրա անվտանգ ներկան ու ապագան:

Գիտակցության կառուցվածքավորող դերը դրսնորվում է անհատական ժամանակի յուրօրինակ «ցիկլիկ խտացումներ» ձևավորելու նրա ընդունակությամբ, հանդես գալով իրեն անհատի հիշողություն: Կառուցվածքավորման այդ գործընթացի «հետքը» կարելի է հայտնաբերել հասկացությունների այնպիսի շղթայի «վարընթաց հոգևոր հիերարխիայում», ինչպիսին միֆ-գաղափար-կերպ-բառ-սիմվոլ հիերարխիան է: Այդ հիերարխիան է կազմում սոցիալական տարածության ու սոցիալական կենսական միջավայրի մշակութային տեքստի, բովանդակության բաղկացուցիչներից մեկը: Այն նաև ազգ-պետություն կառույցի, գործունեության համակարգի բաղադրիչ է:

Գործունեության համակարգի շրջանակներում գիտակցության այդ աշխատանքում յուրօրինակ «դիրիժորի» դերն իր վրա է վերցնում անհատական կամքը, որն էլ դրսնորվում է ուշադրության ակտում: Կամքի բնույթը այս «մոդելում» (գործունեության համակարգում) ամենաառեղծվածային

հարցերից մեկն է, այն կարծես թե միանգամայն այլածին և ինքնուրույնության միտվող «ընտրանքի բլոկն է» ինֆորմացիոն բազմազանության երկու ոլորտների՝ հոգևորի և գգայականի սահմանագծին: Մասնավորապես կամքի ուժը դրսնորվում է որոշակի գործունեության կամ որոշակի գաղափարների վրա անհատի, խմբի, հանրույթի ուշադրության կենտրոնացման ինտենսիվությամբ և տևականությամբ, իսկ կամքի ազատությունը դրսնորվում է նոր գաղափարներին լիարժեքորեն և արագ աղապտացիայով միաժամանակ՝ այդ գաղափարներից յուրօրինակ ազատությամբ, եթե դրանք սպառում են իրենց:

Անհատական ժամանակի ցիկլիկ խտացումները մասամբ կարծես թե քայքայված, լվացված են գիտակցության ծայրամասերում, ինչն էլ հնարավորություն է ստեղծում նրանց համար՝ ինտեգրվել այլ անհատական ժամանակների, որտեղ էլ մեկ համախմբում ձևավորում են կոլեկտիվ ժամանակը կամ կոլեկտիվ անգիտակցականը: Այն կառուցվածքավորվում է նրանով, ինչը մետաֆորային մակարդակում անվանվում է միֆ: Այսուեղ էլ առանցքային դեր է խաղում քառը: Որոշակի մշակույթի պատկանող միֆի ներսում «համապատասխան լեզվի բառերի սեմանտիկական միջուկները կարծես թե միակցվում են չափազանց կուռ, սակայն ոչ բազմաքանակ կառուցվածքում, ձևավորելով այն, ինչը կարելի է նշանակել որպես պրոտեքստ»: Միֆերի կեցությունը ապահովվում է ծեսերի միջոցով: Միֆի անկումը ինֆորմացիոն քառու է, որը քանդում է երնոմշակույթի շրջագիծը (այլ կերպ՝ սոցիալական տարածության սահմանները) և համապատասխանում է կոլեկտիվ անգիտակցականի քանդվելուն (Լ.Գումիլյովի տերմինով՝ էրնոգենեզի ընթացքում պասսինար պահուստի սպառում, Կ.Կաստաների տերմիններով՝ «ժամանակների տոնալների» փշացում, վատթարացում): Միֆի անշարժ, ոչ դիմանակի բնույթի մասին պատկերացումն այլևս քննադատության չի դիմանում: Իրականում միֆը չի հակադրվում մշակույթի զարգացմանը, սակայն բուն մշակույթը պետք է օրգանապես զարգանա միֆի շրջանակներում՝ նրան գիտակցելով իր մեջ և իրեն՝ նրա մեջ:

Այսպիսով, անվտանգության օբյեկտի բաղկացուցիչները սանդղակավորում են ընդհանուր ժամանակը (դրանով իսկ նաև իրենց ժամանակը) ծանազողական նշաններով (սիմվոլներով), սակայն այնպես, որ այդ ծանազողական նշաններում այն կարծես թե «ապրում է»: Եվ այդ ծանազողա-

կան նշանների սահմանագծին անհատական ժամանակը «հանդիպում է» «հասարակայնորեն տպավորված» ժամանակին: Անհատների կողմից այդ տեքստի «ընթերցումը» աջակցում, ամրապնդում և ուժեղացնում է (կախված նրա «պոպուլյարությունից») հանրայնորեն տպավորված ժամանակը: Տարաբնույթ այդ «ժամանակային փնջերի» ներդաշնակումը, համաձայնեցումը մեկ միասնական, անվտանգ ժամանակային փնջում կարող է իրականացվել միայն ռիթմի միջոցով: Ընդ որում՝ համաձայնեցում ոչ միայն անհատի գիտակցության մեջ, այլ նաև ողջ տարածության, որն իբրև յուրօրինակ հարթություն՝ «հատում է» «ժամանակային հոսքերը»: Այդ «հատումները» իմտեզրվում են «արտաքին» տարածության սովորական ընկալման մեջ: Տարածության «հարթության» հետ «ժամանակային հոսքերի» հատման «կետերն» ել ձևավորում են այն յուրօրինակ «պոտենցիալ փոսերը», որոնց «հատակին նստում են» առավել կայուն, «քիչ շարժումակ» ինֆորմացիաները:

Անհատի, խճի, հանրույթի սովորական ընկալումները որոշակի սկզբունքով բաշխված են տարածության «հարթության» վրա, սակայն որոշակի «հարվածային էներգետիկայի» դեպքում տարածության «հարթությունը» կարող է կարծես թե «հանգուցվել» (օրինակ՝ ներշնչանք, ստեղծագործական, արարման էքստագ): Ստեղծագործելու, արարման ակտում ռիթմիկ ժամանակային պուլսացիաների իմտենսիվությունը «հանգույցում» կտրուկ աճում է, իսկ բուն «ձգողական ուժ ունեցող հանգույցը», սահելով ժամանակային հոսքերի երկայնքով, յուրօրինակ հետք է թողնում (օրինակ՝ «արվեստի գործը» (տեքստ), արտադրության արդյունք-բարիքը և այլն):

Եթե վերը հանգանակալից խոսվեց այն օբյեկտների ժամանակի մասին, որոնց անվտանգությունը պետք է ապահովվի (տվյալ պարագայում՝ ժամանակային կտրվածքով), ապա իրենց ժամանակային չափումն ունեն նաև վտանգները և սպառնալիքները: Նրանց համար ևս առկա են ֆիզիկական և ոչֆիզիկական ժամանակային բաղադրիչները: Դարձ է նշել, որ ինչպես ֆիզիկական տարածքին սպառնացող վտանգներն են առավել և անմիջականորեն տեսանելի, քան թե սոցիալական տարածքին սպառնացողները (սրանք ավելի բարնված են և ժամանակային առումով՝ ավելի ուշ դրսնորվող ու ոչ պակաս վտանգավոր), նույն կերպ և ավելի վտանգավոր ու «անսպասելի» է վտանգների սոցիալ-քաղաքական ժամանակը, և

հատկապես ոչգծային բաղադրիչը, որը վտանգների դժվար կանխատեսելիության խնդիր է առաջացնում:

Տարբեր ոլորտներում ազգ-պետություն կառույցի, կենսական միջավայրի, գործունեության համակարգի սոցիալական-քաղաքական ժամանակի (հատկապես ապագայի կտրվածքով) հետ կապված սպառնալիքները, որոնք հնչում են ներկայումս, արտահայտվում են մոտ ապագայում տարածաշրջանային համագործակցությունից Հայաստանի մեկուսացվածության, պետության մեջ արտաքին պարտքը սերունդների ուսերին թողնելու, Հայաստանի հայարավիման և այլնի վերաբերյալ անհանգստությունների ու վատատեսական կանխատեսումների տեսքով: Եվ ճշշտ հակառակ՝ առկա են նաև խիստ լավատեսական կանխատեսումներ: Ահա թե ինչու անվտանգության ժամանակային չափումը ենթադրում է սպառնացող վտանգների ու նրանց դինամիկայի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսում: ճիշտ նույն կերպ այն ենթադրում է նաև անվտանգության օբյեկտի կարճաժամկետ (ընթացիկ), միջնաժամկետ ու երկարաժամկետ անվտանգություն, քանզի առաջին երկուսի ապահովման միջոցով է, որ մեծամուլ է երկարաժամկետ անվտանգության ապահովման հնարավորությունը:

2.3 Անվտանգության օբյեկտի և անվտանգության էներգետիկ չափումը

Անվտանգության օբյեկտի, ուստիև անվտանգության մյուս էական չափումը պայմանականորեն անվանենք էներգետիկ: Սոցիալական տիպի համակարգերի (այդ թվում և անվտանգության օբյեկտների) էներգետիկ չափման ներքո հասկանանք նրանց ամբարված և/կամ գործածության մեջ գտնվող բազմատեսակ ներուժը, ռեսուրսները, գործընթացները, իրադարձությունները, որոնք մաս են կազմում այդ համակարգի, այն ներառող կենսական միջավայրի, և որոնք օգտագործվում են նրա գործունեության համակարգի կողմից (կենսագործունեության տարբեր ոլորտներում, մակարդակներում) կամ էլ ազդում են թվարկվածների վրա: Քանի որ ազգ-պետություն համակարգը կազմավորված է ֆիզիկական և ոչֆիզիկական բնույթի բաղկացուցիչներից, ապա բնական է էներ-

գետիկ չափումը ևս դիտարկել ֆիզիկական և ոչֆիզիկական բաղադրիչների տեսանկյունից:

Այսպես. ռեսուլտսների առումով դրանք բաժանվում են նյութական ռեսուլտսների (պարենային, ընդերջի ռեսուլտսներից մինչև ռազմական տեխնիկա) և սոցիալական տիպի ռեսուլտսների (օրինակ՝ որպես աշխատուժ) մտավոր, գիտական, ստեղծագործական, նորարարական ներուժ մարդկային ռեսուլտսից (քարձրորակ, արհեստավարձ կադրեր բոլոր ոլորտներում, օրինակ՝ գինվորներ, սպայակազմ) մինչև հավատը, վստահությունը, քաղաքական մշակույթը և այլ): Նյութական կամ սոցիալական բնույթի այդ բոլոր ռեսուլտսները կարող են հասարակության կտրվածքով մակրո-, մեզո-, միկրոմակարդակներում համապատասխանաբար լինել համրային-հասարակական (ազգային), կոլեկտիվ-խմբային կամ անհատական նշանակության, իսկ պետության կտրվածքով՝ նշված մակարդակներին համապատասխան՝ համապետական, մարզային կամ համայնքային նշանակության:

Նույն կերպ մակարդակային դասակարգման են ենթարկվում նաև գործընթացները, իրադարձությունները, որոնք այդ ներուժի, ռեսուլտսների դրսնորումն են գործողության մեջ: Սրանք ևս կարող են կապված լինել ինչպես ֆիզիկական տիպի ռեսուլտսների, միջավայրի, տարածության հետ (Վտանգների դեպքում՝ օրինակ, վթարներ, կորուստներ, ավերածություններ, իսկ անվտանգության աղբյուրների դեպքում՝ օրինակ, ռազմավարական կամ այլ նշանակության նոր շինությունների, տեխնոլոգիաների և այլն), այնպես էլ սոցիալական տիպի ռեսուլտսների հետ (Վտանգների դեպքում՝ օրինակ, աղետների, երկրաշարժերի արդյունքում մարդկային կորուստներ և այլն, իսկ անվտանգության աղբյուրների դեպքում՝ օրինակ, անվտանգության գործառույթներ իրականացնող շարժումների, գարգացումների և այլն):

Ներուժի, ռեսուլտսների դրսնորում լինելուց զատ գործընթացները, իրադարձությունները հանդիս են գալիս նաև որպես անվտանգության ապահովման գործիքներ՝ դրանով իսկ պայմանավորելով անվտանգության համարժեք չափումը: Նույնը՝ ոչանվտանգության դեպքում: Այսպես. սեփական պետության նկատմամբ հասարակական լայն զանգվածների հավատի կորուստն ու այն առարկայացնող օտարվածությունը պետության գործերից, հասարակության համակարգերից արդեն իսկ վտանգ է: Կամ

1999թ. հոկտեմբերի 27-ի ահարեկչությունը վտանգ էր պարունակում լայն իմաստով ոչ միայն ազգային անվտանգության, այլ, ի մասնավորի, նաև պետական անվտանգության համար, քանզի անմիջական թիրախ ուներ պետական իշխանության գործադիր և օրենսդիր իշխանություններին: Տևական ժամանակ խաթարելով նրանց գործունեության համակարգը, այն հետագայում նաև անվտահություն ու կասկածներ հարուցեց իշխանության տարրեր թևերի ու ինստիտուտների միջև՝ դրանով իսկ պարակիցացնելով ողջ պետության գործունեության համակարգը:

Իրադարձության, գործընթացի եներգետիկ ներուժից է կախված, թե այն ինչ ազդեցություն կարող է ունենալ սոցիալական միջավայրի ու տարածության, աշխարհագրական միջավայրի ու տարածքի վրա: Վերջին դեպքում պատկերավոր օրինակ կարող է լինել հայկական ԱԷԿ-ը, որի վթարի պատճառած վնասը, անկասկած, ոչ միայն համապետական, այլ նաև տարածաշրջանային աղետի բնույթ կը լինի: Ֆիզիկական միջավայրի անվտանգության ապահովման խնդիրներ է հետապնդում էկոլոգիական անվտանգությունը:

Ոչ պակաս կարևոր են նաև սոցիալական տարածության ու սոցիալական միջավայրի եներգետիկ չափումները: Առաջին հերթին դա վերաբերում է մշակույթին, քանի որ մշակույթն է շեշտադրումներ կատարում, իրադարձություններին օժտում այս կամ այն նշանակությամբ, առաջ է քաշում ակտիվ գործողություններ կամ հեռու է պահում նրանցից: Այսինքն՝ այն մի համակարգ է, որը գեներացնում է յուրաքանչյուր հասարակական փաստի և իրադարձության հմաստային նշանակությունը, կամիստրուշում է դրամայի գործող դերակատարների կողմից ավելի կամ պակաս զգայունակությունը դրանց նկատմամբ: Վերջինս ունի երկու բաղադրիչ: Առաջինը ծրագրավորող բաղադրիչն է մշակութային ավանդույթով (ստերեոտիպեր և արխետիպեր) տրվող ծրագրի ձևով, որը պայմանավորում է ոչֆիզիկական ժամանակի գծային բաղադրիչը (վերջինիս մասին վերը խոսվեց, իսկ Ա.Պանարինն այս բաղադրիչն անվանում է նաև ժառանգական-կումուլյատիվ ժամանակ): Երկրորդը մշակույթի նյութական-էսթետիկ ռեակտիվ բաղադրիչն է, որի ներառած ուղիղ և ռեակտիվ փուլերը (կամ մարտահրավեր-պատասխանի դիալեկտիկան) ապահովում են նրան «ցնցակաթվածի» մեջ գցող իրավիճակի կամ իրադարձության ծայրահեղություններին ցուցաբերվող պատասխանը: Մշակույթի այս բաղադրիչն էլ

պայմանավորում է ոչ ֆիզիկական ռեալտիվ-ցիլիկ (ոչգծային) ժամանակը, որը գծային ժամանակին վրադրում է յուրօրինակ պուլսացիաները⁸: (Տեղին է գուգահեռ անցկացնել մշակույթի երկու բաղադրիչների «գործառույթների» և ԱԱՅ-ի ա) և թ) խմբերին հարող գործառույթների միջև):

Սոցիալական տարածության, միջավայրի ներուժի էներգետիկ չափման բնութագրիչ է, օրինակ, սոցիալական միավորի ազատության ապահովածության աստիճանը (մարդու և քաղաքացու իրավունքներ, ազատություններ և այլն): Կամ էլ, օրինակ, միջազգային, տարածաշրջանային միջավայրը պետության անվտանգության ապահովման, համագործակցության առումով կարող է գնահատվել իրու բարենպաստ, անբարենպաստ, ինչը ուղղակիորեն ակնարկում է անվտանգության էներգետիկ չափումը: Այսպես. կոնֆլիկտի առկայությունը, որը նեծացնում է վտանգի ռիսկը, վտանգ-օբյեկտի էներգետիկ չափման մասին է վկայում: Կամ էլ այս կամ այն ռեսուրսը (օրինակ, ֆինանսական բյուջեի դեֆիցիտը փակելու համար) հայթայթելու մասին դատողությունները ևս հղում են կատարում անվտանգության էներգետիկ չափմանը: Դասկանալի է, որ օրինակներ շատ կարող են բերվել մշակույթի, տնտեսության, հանրային կյանքի, քաղաքականության ոլորտներում: Անվտանգության տեսանկյունից էական է, որպեսզի կատարվի օբյեկտի (լինի այն վտանգի թե անվտանգության աղբյուր) էներգետիկ չափման հաշվառում, որոնք առօրյա կյանքում հնչեցվում են «ռեսուրսների հաշվառում և գնահատում», «ռիսկի գնահատում և հաշվառում», «վտանգի հավանականության գնահատում» և այլ նմանօրինակ ձևակերպումներով:

Դանրագումարելով անվտանգության չափումների վերաբերյալ ասվածը՝ պետք է նշել, որ անվտանգության օբյեկտի այդ երեք չափումների առանձնացումը նույնպես կատարված էր անվտանգության պրոբլեմատիկայի կողմերի ներկայացման նկատառումով: Այդ չափումները սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ, կառուցվածքավորում են միմյանց: Մասնավորապես, վերը խոսվեց սոցիալական տարածության բաղադրիչներից անհատական, կոլեկտիվ գիտակցականի ու անգիտակցականի կողմից ժամանակի կառուցվածքավորման մասին, և հակառակ՝ մշակույթի կողմից ժամանակի կառուցվածքավորման մասին:

Անվտանգության օբյեկտի և անվտանգության չափումների հաշվառումը նաև մեթոդաբանական նշանակություն ունի: Ավելի կոնկրետ՝ անվտանգության ցանկացած օբյեկտի (լինի այն վտանգի թե անվտանգության աղբյուր) դիտարկման ժամանակ մշտապես պետք է հաշվի առնել, թե ինչպիսի սոցիալական ու ֆիզիկական տարածության մեջ է գտնվում այն, ինչպիսի ֆիզիկական ու սոցիալական ժամանակ, ինչպիսի ֆիզիկական ու սոցիալական ներուժ ունի: Այս հանգամանքների հաշվառումը հնարավորություն կտա իրապես մոտենալ լիարժեք անվտանգություն ապահովելու խնդրին:

3) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ո՞Ր ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Ինչպես նկատելի է, անվտանգության հետ կապված սույն հարցադրումը կատարված է ԱԱՅ դիտարկման արժեքային հարթությունում: Վերը՝ հանգամանալից ցույց տրվեց «հ՞նչ է անվտանգությունը» հարցադրման պատասխանում, որ ԱԱՅ-ն կարող դիտարկվել նաև ինստիտուցիոնալ և իշխանական հարաբերությունների հարթությունում: Դաշվի առնելով այդ հանգամանքը՝ հերթական՝ երրորդ հարցադրումը կարող է ձևակերպվել նաև այսպես. «Անվտանգություն ո՞ր ինստիտուտների համար»՝ ինստիտուցիոնալ հարթության դեպքում, կամ էլ՝ «Անվտանգություն ո՞ր արժեքների կամ ինստիտուտների (գեր)իշխանության համար»՝ իշխանական հարաբերությունների հարթության դեպքում: Դարցադրման այսօրինակ ձևերից, իհարկե, հարցի պատասխանը չի փոխվում, քանզի, օրինակ, պետությունը կարող է դիտարկվել և որպես քաղաքական արժեք, և որպես ինստիտուտ, և որպես հարկադրանքի լեզու ու լեզիտիմ մենաշնորհ ունեցող ինստիտուտի, արժեքի իշխանություն: Նույն կերպ և՝ ազգ-պետություն հանակարգի մյուս բաղադրիչները (նաև մակարդակային): Դրանից փոխվում է միայն կառուցվածքի մասին խոսելու լեզուն, կամ պատկերավոր՝ այն դիտարկելու «հայելին»: Իսկ քանի որ առավել ընդունված է ազգային անվտանգության մասին խոսել արժեքային հարթության վրա (հայելու մեջ), ապա ներքոնշյալ շարադրանքից արվող հետևողությունները կներկայացվեն արժեքների տերմիններով:

8 Панарин А.С., Глобальное прогнозирование, М., “Алгоритм”. 2000:

3.1 Ազգային անվտանգություն հասկացության հարաբերակցությունը պետական անվտանգություն հասկացության հետ:

Ինչպես արդեն նշվել է, ազգային անվտանգության օբյեկտ (որի անվտանգությունը պետք է ապահովվի օբյեկտների մյուս խնճից՝ վտանգներից) է հանդես գալիս ազգ-պետություն համակարգը՝ լինի դա բազմազգ թե մոնութենիկ պետություն (այս բաժնի ներքո ազգ-պետություն կառույցը, կենսական միջավայրը և գործունեության համակարգը տարանջատ չեն դիտարկվի, այդ իսկ պատճառով կօգտագործվի «ազգ-պետություն համակարգ» տերմինը): Այն նաև ազգային անվտանգության սուբյեկտ է: Մասնավորապես, ազգ-պետության սուբյեկտ լինելը ֆիքսվեց 1648թ. Վեստֆալյան պայմանագրով, երբ միջազգային համակարգում հիմնական դերակատարներ հրազդակեցին պետությունները, իսկ անվտանգությունը համընդհանուր կերպով ճանաչվեց որպես պետական կառավարման առաջնահերթ պարտավորություն (գործառույթ): Ժողովրդավարական տիպի պետությունների համար՝ որպես բաղադրյալ կառուցվածք, ազգ-պետություն համակարգը կազմված է հասարակության և պետության (սոցիալական համակարգի) հարաբերականորեն ինքնուրույն կառույցներից:

Պետք է նշել, որ անվտանգության տեսանկյունից այս երկու կառույցներից մեկն ու մեկին վերագրվող առաջնայնության հետ էլ կապված է անվտանգության նկատմամբ ցուցաբերվող մոտեցումը: Ավելի հստակ՝ խնդիրն ինչ-որ տեղ կապված է պետության լայն և ներ ինաստով ընկալման հետ: Եթե պետությունը դիտարկվում է իրեն հանրային (հասարակության) իշխանության նարմններից, ինստիտուտներից մեկը (թեկուզ այլ ինստիտուտների համեմատությամբ բացառիկ իրավունքներով օժտված), ապա այդպիսի մեկնակետով անվտանգության մոտեցումը կրում է սոցիետալ մոտեցում անվանումը: Այստեղից էլ ազգային անվտանգություն տերմինը, որն առավել գործածական է այսօր, և որի ելակետը համրույթն է, մեր պարագայում՝ ազգը: Այն հանդես է գալիս իր ենթահամակարգերով ու հանրային իշխանության բոլոր ձևերով (բաղադրական, տնտեսական, ֆինանսական, մշակութային, սոցիալական, հոգևոր, կրոնական և այլն): Հանրային իշխանության իրականացման առանձքային ինստիտուտը, ինչ-

խոսք, պետությունն է, որը պատկանում է հասարակության քաղաքական(ության) համակարգին, և որի ընդհանուր ու մասնագիտացված ինստիտուտներին է վերապահված հասարակության ու նրա ենթահամակարգերի անվտանգության ապահովման գլխավոր դերը, գործառույթը:

Արդիականացած, ժողովրդավարական երկրներում ինքնիշխան պետությունը մարմնավորում և իրացնում է հասարակության, հանրույթի (ազգի) կոլեկտիվ ազատության (քնական և սոցիալական պահանջնութիւնների) գերագույն աստիճանը: Դրանով պայմանավորված էլ պետությունը արժեքային առումով հանդես է գալիս որպես գերագույն քաղաքական արժեք, ինստիտուցիոնալ առումով՝ արժեքների բաշխման մոնուպոլ իրավունքով օժտված ինստիտուտ, իշխանական հարաբերության առումով՝ այդ հարաբերությունների ողջ համախմբում հարաբերության ազդեցիկ, որոշ դեպքերում նաև գերիշխող կողմ, իշխանական հիերարխիայի գագար: Պետությունը հանդես է գալիս որպես որոշակի դասի (ժողովրդի մեծամասնության) քաղաքական գերիշխանության ու հասարակության կառավարման գործիք: Այն հանրային իշխանության և հասարակության կառավարման բազմագործառույթ և հարաբերականորեն ինքնուրույն ենթահամակարգ է: Իր այդ գործառույթների իրականացման շնորհիկ պետությունը հանդես է գալիս որպես ազգային անվտանգության սուբյեկտ:

Այսպիսով, պետությունը մի կողմից հանդես է գալիս որպես ԱԱ գործառույթն իրականացնող սուբյեկտներից կարևորագույնը, մյուս կողմից՝ հենց ինքը ազգային անվտանգության օբյեկտ է, որի անվտանգությունն ապահովող սուբյեկտներ կարող են լինել հասարակությունը (նրա բաղկացուցիչ միավորները՝ կոլեկտիվները, խնբերը, անհատները, օրինակ՝ արտակարգ իրավիճակներում, ինչպիսին է պատերազմական վիճակը), պետական իշխանության հատուկ մասնագիտացված ինստիտուտները (բանակը, ոստիկանությունը, ԱԱ նախարարությունը և այլն, որոնք միաժամանակ կոչված են նաև ապահովելու հասարակության անվտանգությունը):

Հասարակության բոլոր ինստիտուտների շաբթում իր ունեցած այդ բացառիկ իրավունքների, գործառույթների, դերակատարման և հարաբերական ինքնուրույնության, քաղաքացիական հասարակությունից տարանջատվածության հետևանքով պետական անվտանգությունը, նրա իինմախնդիրները և առանձնանում են ազգային անվտանգության մեջ: Այս

համատեքստում ազգային անվտանգությունը ավելի լայն հասկացություն է, քան պետական անվտանգությունը: Իսկ վերջինս, փաստորեն, սուսկ նրա բաղադրիչն է:

Ժողովրդավարական տիպի հասարակություններում անհատի, խմբերի, կոլեկտիվների ինքնուրույնության և ազատության բարձր աստիճանը, երբեմն էլ խստ մեծ ներուժը (նրանց կողմից տնօրինման բոլոր տեսակի ռեսուլտների առումով) ընդլայնում է ազգային անվտանգության սուբյեկտների շրջանակը՝ նրա մեջ ընդգրկելով թվարկվածներին, եթե նրանք իրականացնում են անվտանգության որևէ գործառույթ: Միաժամանակ, այդորինակ հասարակություններում, ի հակադրություն հակաժողովրդավարական հասարակությունների, քաղաքական անվտանգության պահպանվող առաջնահերթության հետ մեկտեղ, չափազանց կարևոր են ազգային անվտանգության մյուս բաղադրիչները ևս: Իսկ պետական անվտանգության և հասարակության անվտանգության կարևորագույն ընդհանրությունը պայմանավորված է նրանց երկուսի համար էլ ընդհանուր տարածքային և սոցիալական հիմքով: Երկուսի համար էլ որպես այդպիսիք հանդես են գալիս երկրի տարածքն ու այն բնակեցնող հասարակությունը:

Պետությունն իր մեջ ներառում է իիերարխիկ ձևով դասավորված, փոխկախված և փոխլրացնող ինստիտուտների ու կառուցվածքների համախումբ: Նրանց թվում են օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ինստիտուտները, իրավական համակարգը, պետական վարչակազմը, տարածքային նակարդակներում՝ օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները (սա ֆերարալ կառուցվածքով պետությունների համար) և, վերջապես, տեղական ինքնակառավարման մարմինները (էջ 127-128): Այդ ինստիտուտները կառուցվածքային նակրո-, մեզո- և միկրոնակարդակներում բերված են այսուսակ 1-ում: Մասնավորապես ՀՀ-ի համար մակրոնակարդակում հանդես են գալիս պետական իշխանության կենտրոնական (հանրապետական) մարմինները՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինները: Նրանց գործունեության տարածական հիմքը երկրի ողջ տարածքն է ու այն բնակեցնող հասարակությունը: Մեզոնակարդակում՝ մարզերում, հանդես են գալիս տարածքային կա-

ռավարման մարմինները: Վերջիններիս ու նրանց գործունեության համակարգերի համար որպես ֆիզիկական տարածական հիմք և շրջանակ է հանդես գալիս մարզի տարածքը՝ համաձայն ՀՀ վարչատարածքային բաժանման, և սոցիալական հիմք՝ մարզի բնակչությունը: Մակրոնակարդակում հանդես են գալիս տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց ֆիզիկական տարածական հիմքը համայնքն է, իսկ սոցիալական հիմքը՝ համայնքի բնակչությունը: Իրավական համակարգը, վարչակազմը հանդես են գալիս բոլոր կառուցվածքային նակարդակներում: Նշվածներն էլ մեկ օրգանական միասնության մեջ կազմում են պետական անվտանգության ամբողջական օբյեկտը:

Անվտանգության նկատմամբ երկրորդ մոտեցումը ելնում է պետության լայն սահմանումից: Այն կարելի է անվանել անվտանգության պետական մոտեցում, թեպետ այնքան էլ արդարացված չէ այս տերմինի օգտագործումն այն համատեսքում, որի մասին այժմ կնշվի, և որը կրկին վերաբերում է ժողովրդավարական տիպի պետություններին: Այն ավելի շատ թյուրըմբռնման արդյունք է (national բառը անգլերենում ունի և ազգային, և պետական իմաստները): Թյուրըմբռնում՝ պայմանավորված այն հաճամանքով, որ քաղաքական համակարգի և, մասնավորապես, պետության տարածքային ու սոցիալական հիմքը, ինչպես նշվեց, ողջ երկրի տարածքն ու հասարակությունն են՝ երկրի քաղաքացիները: Ուստի դրանով իսկ ողջ հասարակությունը դառնում է պետության քաղադիչ՝ քաղաքացիների կազմակերպված համախումբ: Այսօրինակ ընկալումն էլ հիշյալ մոտեցման կողմնակիցներին հիմք է տալիս համարելու, որ պետական անվտանգությունը ավելի լայն հասկացություն է, քան ազգային անվտանգությունը: Վերջինիս հետ պարզապես նույնացվում է հասարակության անվտանգությունը:

Վերը նկարագրվածից միանգամայն տարբեր է իրավիճակը հակաժողովրդավարական տոտալիտար և ավտորիտար ռեժիմներ ունեցող երկրներում: Գաղափարի իշխանությամբ բնորոշվող և գերբաղաքականացված այդ (տոտալիտար) երկրներում պետության միջամտությունը հասարակության, խմբերի ու անհատների կենսագործունեության բոլոր ոլորտներում հսկայական է, իսկ հասարակությունն էլ՝ որպես այդպիսին, տարածատված չէ պետությունից, չունի ինքնուրույնություն, կամ ավտորիտար ռեժիմով երկրներում ունի ինքնուրույնության, ազատության շատ

9 Зеркин Д.П., Основы политологии, Курс лекций, 2-е изд., доп. Ростов н/Д, Феникс, 1999, էջ 576:

ցածր աստիճան: Պետության կողմից ողջ հասարակության այդպիսի կլաննան պայմաններում պետական անվտանգություն և ազգային անվտանգություն հասկացությունները նույնանում են՝ դառնալով պարզապես պետական անվտանգություն: Այն ներառում է ամեն ինչ, նաև՝ հասարակության անվտանգությունը:

3.2 Ազգային անվտանգություն հասկացության հարաբերակցությունը ազգային զարգացում հասկացության հետ

Ինչպես վերը նշվեց բազմից (տես նաև աղյուսակ 1-ի էներգետիկ չափման սյունակը), ազգային զարգացումը, քաղաքական փոփոխությունը ևս համարվում են անվտանգության օբյեկտ և սուբյեկտ: Մյուս կողմից նրանք միաժամանակ հանդես են գալիս իրու անվտանգության օբյեկտի ու անվտանգության ժամանակային, էներգետիկ չափումների, սոցիալական տարածության բովանդակային կողմերից մեկը: Որպես ժամանակային չափում՝ նրանք կարող են կանխորոշել ինչպես անվտանգ, այնպես էլ վտանգված ապագան և դրանք պայմանավորող առաջընթացն ու հետընթացը: Որպես էներգետիկ չափում՝ նրանք կարող են պայմանավորել ազգ-պետություն համակարգի ներուժը, կարող են հնարավորություն տալ՝ գնահատելու սպառնալիքից ազատության վիճակի ծեռքբերման նրա հնարավորությունները, և հակառակը:

Այդ գործընթացների քննարկման ժամանակ հարկ է տարբերակել նրանց էական տարբերություններն ու ասպեկտները: Հատկապես պետք է տարբերակել՝

1. ՀՀ ժողովրդավարացում-կերպավորիչման (տրանսֆորմացիա) գործընթացները, այսինքն՝ հասարակական համակարգերի կերպավորումը, քաղաքական փոփոխությունը:

2. Ազգային զարգացումը, որը պայմանավորված է ազգ-հասարակության էվլույցիոն զարգացմանը:

1. Ժողովրդավարացում-կերպավորիչում: Եթե ազգային զարգացումը միանգանայն առաջընթացի վիճակ է, ապա այլ է քաղաքական փոփոխությունը, որը կարող է ունենալ և դրական, և բացասական հետևանքներ, լինել և անվտանգության, և վտանգի աղբյուր: ՀՀ-ում տոտալիտար տի-

պի քաղաքական մշակույթի ու արժեքային համակարգի փոխարինումը ազատական-ժողովրդավարական արժեքային համակարգով, բնական է, տեսականորեն ենթադրում է առաջընթացի՝ արդիականացման, զարգացման ասպեկտ: Սակայն իրականում միանշանակ չեն այդ կերպավորիչման արդյունքները, որոնք արտահայտվում են հայ հասարակության բոլոր համակարգերում, ինչպես նաև պետական իշխանության համակարգում նրա արդյունքում ի հայ եկած հիմնախնդիրների աճով: Արդյունքում՝ նշված համակարգերը հայտնվել են գերծանրաբեռնվածության վիճակում նրանց որպես պահանջ ներկայացվող այդ հիմնախնդիրների ամբողջական չլուծնան, դժվարլուծելիության կամ անլուծելիության պատճառով: Այս հանգամանքն էլ, ազդելով հասարակության համակարգերի գործառնության արդյունավետության վրա, հասցել է բոլոր տեսակի շրջակա միջավայրերում նրանց ադապտատիվության ամենա, որը նվազեցրել է հատկապես միջազգային շրջակայքից ներքափանցող վտանգավոր միտումներին, հոսանքներին նրանց դիմակայելու ընդունակությունը: Միաժամանակ, միջազգային համակարգում խորացող ինտեգրման գործընթացները մեծացրել են այդ շրջակայքի ազդեցությունը ՀՀ ներպետական կյանքի վրա: Այսպիսի իրականությունում քաղաքական փոփոխություններն ավելի հաճախ վտանգի աղբյուր են դառնում: Եվ ընդհանրապես, ոչ բոլոր քաղաքական փոփոխությունները կարող են առաջընթացի վիճակ ապահովել:

Այսպես տարաբնույթ մշակույթների (և այդ շղարշի տակ՝ ոչ միայն մշակույթների) անարգել ու շատ հաճախ անվերահսկելի ներքափանցումները հայ հասարակության մեջ պայմանավորում են համապատասխան սոցիալական-մշակութային, երթեմն՝ քաղաքական ենթատեքստերով հոսանքներ ու շարժումներ, որոնց բացասական հետևանքների կանխումը ազգային անվտանգության հիմնախնդիրներից է: Քանզի նրանք խարիսխում են ազգային անվտանգության ապահովման ավանդական, բյուրեղացած կառույցների էթնոմշակութային հիմքերը, իմաստային տարածությունն ու մշակութային տեքստը, քայլայում են ավանդական ադապտատիվ մեխանիզմները: Նշվածը, ըստ եռթյան, մշակութային տիպի վտանգ կարող է դառնալ դարերի հոլովություն ինքնապաշտպանական մեխանիզմներ մշակած ու բյուրեղացրած հայ հասարակության բնականոն գործառնան, պաշտպանումակության համար:

Ինչ խոսք, որոշ մշակութային, քաղաքական հոսանքներ էլ բովանդակում են հասարակության, պետության ադապտատիվ ընդունակությունները ընդլայնող արժեքներ, նորմեր, տեղակայումներ, որոնք կարող են ներդաշնակվել ավանդականի հետ: Այսինքն՝ հարկավոր է փնտել խրախուսելի մշակույթի ու ավանդական մշակույթի արդյունավետ հաղորդակցման եղանակները (ընդունված է այս գործընթացն ավելի պարզ լեզվով անվանել ազգային առանձնահատկությունների հաշվառում), ինչպես նաև առանձնացնել, մեկուսացնել նրանք, որոնք վտանգում են հայ հասարակության և պետության անվտանգությունը:

Բացի հայկական քաղաքակրթական իմաստային տարածությանը սպառնացող այդօրինակ մշակութային վտանգից, այդ հոսանքները նաև քաղաքական վտանգներ են հանդիսանում: Քաղաքական վտանգներ այն առունով, որ մշակութային, կրոնական և այլ տիպի հոսանքներին, շարժումներին անդամագրված ՀՀ քաղաքացիների որոշակի թվի «սահմանագծի» գերազանցումը (երբ այդ հոսանքներին հարողները այլևս մեծամասնություն կազմելուն հավակնեն կամ եական կշիռ ունենան) կարող է եապես ազդել հայի մշակութային տեսակով, ինքնությամբ (որի հիմքի վրա էլ հայ ժողովորդը պետական քաղաքականության համար ձևավորում ու նրան է առաջադրում հետամտման ենթակա ազգային նպատակները) պայմանավորված իշխանության հաշվեկշիռի վրա, խախտել ու վտանգված դարձնել այն, ազդել իշխանության ձևավորման, պետական քաղաքականության նպատակների որակական կողմի (գործունեության համակարգի) վրա:

Ցանորդ ներթափախցունը, որն անարգել կատարվում է դեպի ներպետական տարածություն, իրականացվում է ժողովրդավարության լոկոնոտիվի՝ ազատ շուկայի միջոցով: Այդ հարթության վրա, Յայաստանի տնտեսությունը համաշխարհային տնտեսությանը ինտեգրելու և ինովացնելու անվան տակ, հաճախ «յուրացվում» են տնտեսական ռեսուրսները, ինչի արդյունքում էլ սահմանափակվում է պետության տնտեսական ազատության աստիճանը՝ անկախությունը: Որոշ դեպքերում տնտեսական վտանգի ազդեցիկությունը գերկարևորվում է ռազմաքաղաքականից: Եվ՝ միանգամայն իրավացիորեն, քանզի տնտեսական անկախության կորուստը արագորեն հանգեցնում է քաղաքական անկախության կորստին: Ու դա այն պատճառով, որ ֆինանսական-տնտեսական ռեսուրսները քաղա-

քական իշխանության էական ռեսուրսներից են, ինչպես նաև՝ տնտեսական համակարգը քաղաքական համակարգի համար բազմային նշանակություն ունի:

Նշված հանգամանքներով պայմանավորված էլ հարկ է ծցգրիտ որակել գործընթացները՝ դրանք քաղաքական փոփոխությո՞ւն, թե՝ ազգային զարգացում են, քանզի փոփոխությունը մշտապես հանգեցնում է առկա հաշվեկշիռի փոփոխության: Եվ այստեղ է, որ այն պետք է օբյեկտիվորեն (ոչ թե սուբյեկտիվ) գնահատվի որպես առաջընթացի կամ հետընթացի վիճակ (լավագույն պատեսության և տագնապի ելավետերի մասին խոսվել է առաջին բաժնում):

Ազգային զարգացումը հասարակության (ազգի) էվոլյուցիան, բնականոն արդիականացումն է: Ազգային զարգացման հետ են կապված այն հիմնական արժեքները, որոնց սպառնալիքից ազատության վիճակը, առաջընթացն ու անվտանգությունն էլ պետք է ապահովվի:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ քաղաքական համակարգի հիմքում ընկած է արևմուտքի արդիականացված հասարակությունների արժեքային համակարգը: Այն ենթադրում է պահանջմունքների, շահերի, արժեքների ձևավորում գերազանցապես «ներքից»՝ անհատներից ու քաղաքացիական հասարակությունից: Դա վերաբերում է նաև անվտանգության պահանջմունքներին, շահերին ու արժեքներին: Ուստի համառոտ ներկայացնենք զարգացման այն միտունները, որոնք իրենց մեջ կրում են այդ արժեքային համակարգերը, որոնք այսօր դիտվում են արևմտյան հասարակություններում, և որոնք սպասելի են նաև հայ իրականության մեջ:

Այդպիսի արժեքային համակարգ ունեցող հասարակություններում պահանջմունքների ձևավորումն ընթանում է «պակասության հայեցակարգի» տրամաբանությամբ՝ հենվելով երկու նախադրյալների վրա (Ո.Ինգլիհարտ)¹⁰: Սուածինը՝ հասարակության մեջ առաջնահերթությունները ձևավորվում են դեպի ինչ-որ բանի «պակասությունը» կողմնորոշվելուն համապատասխան՝ մարդիկ մեջ արժեք են տալիս նրան, ինչը հասարակության մեջ համեմատաբար քիչ¹¹: Եվ երկրորդ՝ մարդու (այդ թվում

¹⁰ Ingleheart R., Culture shift in advanced industrial society, Princeton (N.J.), Princeton University Press, 1990:

¹¹ Ingleheart R., Modernization and postmodernization, Ann Arbor, University of Michigan, forthcoming:

և այլ սոցիալական միավորների) անհատական արժեքային կողմնորոշումներն ու առաջնությունները արտացոլում են այն պայմանները, որոնցում ընթացել է նրա սոցիալականացումը¹²: Այդ առաջնահերթությունների ու արժեքների բյուրեղանալու պարագայում դրանք անսասան են մնում կյանքի պայմաններում տեղի ունեցող բոլոր հետագա փոփոխությունների դեպքում: Այս համատեքստում անբարենպաստ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում սոցիալականացած նարդիկ սովորաբար շեշտում են հասարակության այնպիսի ավանդական «նյութական» նպատակների արժեքը, ինչպիսիք են տնտեսական բարեկեցությունը, հասարակական անվտանգությունը, օրինականությունը և կարգը, կրոնական արժեքները և ուժեղ ազգային պաշտպանությունը: Երբ հասարակությունը ձեռք է բերում ավանդական նպատակները, երիտասարդ սերունդը ուշադրություն է դարձնում «պոստ-նյութական» նպատակներն՝ ինքնարտահայտում, անձնական ազատություն, սոցիալական հավասարություն, ինքնահրացում և կյանքի որակի պահպանում:

Այս բոլոր արժեքները, պահանջնունքներն ել կապված են անվտանգության հետ և միասնաբար կազմավորում են անվտանգության արժեքային համակարգը: Որպես և բնական, և սոցիալական պահանջնունք՝ անվտանգությունը դառնում է անքակտելի իրավունք, ինչն էլ պայմանավորում է համարժեք շահեր կառուցվածքային տարրեր մակարդակներում և կենսագործունեության տարրեր ոլորտներում: Նրանց կազմակերպված ամբողջությունն էլ դառնում է անվտանգության (քաղաքականության) արժեքա-շահային իիմքը: Այսպիսին է արևմտյան արժեքային համակարգի գարգացման ընդհանուր միտումը: Սակայն ազգային գարգացման, այ-

¹² Ծանոթ. Սկզբանական շրջանում Ռ.Ինգլիարտը փորձեց «պակասության» գաղափարը ընդլայնել և տարածել ըստ Ա.Մասլովի մարդկային պահանջնունքների հիերարխիայի, սակայն ավելի ուշ շրջանի աշխատանքներում նա դրանց հրաժարվեց պահանջնունքների, արժեքների միջև հորիզոնական կազմակերպվածության տարրերի առկայության պատճառով: Արդյունքում՝ վերջիններս պահանջնունքների ու արժեքների հիերարխիան ժամանակի առանցքում չի պահում նույն հիերարխիկ հաջորդականության, դասավորվածության մեջ, ըստ որի՝ բարձր մակարդակի պահանջնունքները (ինչպես օրինակ՝ ինքնահրացումը) առաջնային պահանջնունքներին (ինչպես օրինակ՝ ֆիզիկական անվտանգությունը) պետք հաջորդեն միայն վերջիններիս ապահովվածությունից հետո: Իրականում բոլոր մակարդակների պահանջնունքները կարող են (այսօր հենց այդպես է) միաժամանակ հանդես գալ:

սինքն՝ հասարակության զարգացման ասպեկտները առավել լավ հասկանալու համար անհրաժեշտ է հասարակության համակարգերի ու նրանց գործառնության դիտարկումը (ինչը կարվի ստորև): Իսկ հասարակության (սոցիալական համակարգի) ենթահամակարգերը չորսն են՝ սոցիետալ հանրույթը, կերպավերաբարտադրման համակարգը, քաղաքականության համակարգը և տնտեսության համակարգը¹³:

3.3 Հասարակության համակարգերը և նրա անվտանգության ապահովման ասպեկտները

1. *Սոցիետալ հանրույթ*: Այս համակարգի տեսանկյունից բուն հասարակության (ազգի) անվտանգության ապահովման առունով յուրօրինակ օրյեկտ է հանդես գալիս սոցիետալ նորմատիվ կարգը (որը համապատասխանում է չվտանգվածությանը և ամբողջականությանը) և այդ նորմատիվ կարգին համապատասխան կազմակերպված հասարակության կյանքը: Ասկածին համապատասխան՝ ԱԱՀ գործառույթը պետք է լինի հասարակության նորմատիվ կարգի ինչպես պահպանումն ու նրան ապահուացող վտանգների կառավարումը, այնպես այդ նորմատիվ կարգի զարգացումն ու զարգացմանը սպառնացող վտանգների կառավարումը (ներկողմից հիշատակված ա) և բ) խմբի գործառույթներին համապատասխան):

Այդ գործառույթի կատարումը ԱԱՀ-ի կողմից անհրաժեշտ է, որովհետև սոցիետալ հանրույթը սոցիալական համակարգի միջուկն է, որի հիմնական գործառույթը ինտեգրացիան է: Ինտեգրացիան ցանկացած համակարգում ամբողջականության ապահովման գործուն և կարևորագույն մեխանիզմներից է: Ուստի այս համատեքստում ԱԱՀ գործառույթը չպետք է հասկանալ իբրև հանրային կյանքի համար սուս նորմաստեղծություն և այդ նորմերի համակարգի պահպանում, զարգացում: Այլ խոսքը բուն նորմատիվ կարգի ապահովումն է, որն ավելի լայն կատեգորիա և նորմատեղծությունից զատ ենթարրում է առևա նորմերին հանրույթի անդամների միացում, ինտեգրում: Ընդ որում միացում այնպես, որ վերջնահաշվում ապահովվի հասարակության ինտեգրվածությունը, քանզի այն հանդես է

¹³ Парсонс Т., Система современных обществ, Пер. с. англ. Л.А.Седова и А.Д.Ковалева, Под ред. М.С. Ковалевой, М., Аспект Пресс, 1998 էջ 270:

գալիս որպես ազգային անվտանգության արժեք, որն ամբողջանում է «ազգային միասնություն», «ազգային համախմբվածություն» հանրածանոթ ձևակերպումներում:

Իսկ սոցիետալ հանրույթի նորմաստեղծության գործառույթը ենթադրում է պարտականությունների սահմանում ինչպես նրա անդամների համար ամբողջությամբ վերցրած, այնպես էլ հասարակության ներսում դիֆերենցացված կարգավիճակների ու դերերի համար, որոնք բխում են սոցիետալ կոլեկտիվի նկատմամբ հանրույթի անդամների լոյալությունից: Լոյալության մեխանիզմի միջոցով են հանրույթի անդամները ինտեգրվում նորմատիվ կարգին, որի փորձարկումը այդ սահմանված պարտականությունների նկատմամբ նշանակում է փորձարկել կոլեկտիվի անունից կամ էլ հանուն «հասարակական» շահի, պահանջնունքի արված «իհմնավոր» կոչին նրանց պատշաճ արձագանքելու պատրաստականությունը:

Որպես կանոն, սոցիետալ լոյալության անունից և հանուն նրա հանդես են գալիս պետական մարմինները, որոնք մեկն են այն ինստանցիաներից, որ նրա համար սահմանում են այդպիսի պարտականություններ (գրված նորմերի տեսքով, օրինակ՝ օրենսդիր, գործադիր իշխանությունները), ինչպես նաև հետևում են այդ նորմերի կատարմանը (օրինակ՝ դատական իշխանություններ, վերահսկողական ծառայություններ և այլն): Սակայն այդպիսի պարտականություններ (չգրված բնույթի նորմեր) սահմանվում են նաև հասարակական այլ ինստանցիաների կողմից (օրինակ՝ բուն հանրույթի կողմից կոլեկտիվ գիտակցականի ինստանցիայում), որոնք «օժտված» են այդ նույն նորմաստեղծ իրավունքով, ինչ որ պետությունը, սակայն չեն համարվում նրա կառուցվածքային բաղադրիչը:

Քանի որ դերերը, կարգավիճակները, պատասխանատվությունները ամրագրվում են նորմերում, ապա ինքնըստինքյան սոցիետալ հանրույթի կառուցվածքային կոմպոնենտ են հանդես գալիս նորմերը: Վերը նկարագրված առաջին դեպքում բնական է խոսել իրավական ինաստով պարտականության մասին, եթե ընդհուած կարող է կիրառվել պետական հարկադրանք: Այդպիսիք սահմանված են, օրինակ, ՀՀ Սահմանադրության մեջ՝ ինչպես ուղղակիորեն ձևակերպված պարտականությունների (հարկեր, տուրքեր վճարելու, գինվորական ծառայություն կրելու և այլն), այնպես էլ ամրագրված իրավունքների հակառակ կողմը հանդես եկող պար-

տականությունների (այլոց նմանօրինակ իրավունքները հարգելու պարտականությունը) տեսքով: Մասնավորապես, սոցիետալ հանրույթի արական սեռի անդամների լոյալության փորձարկում է գինվորական ծառայությանը նրանց պատրաստականության ստուգումը, որը սահմանադրորեն ամրագրված պարտականություն է:

Իսկ երկրորդ դեպքում, եթե նորմերը սահմանվում են ոչ պետական ինստանցիաների կողմից, ապա խոսքը կամային-բարոյական ինաստով պարտավորության մասին է: Այսպես, Ղարաբաղ-Աղրբեջանական պատերազմի սանձագերծնան արդյունքում հանուն հասարակության և պետության անվտանգության ՀՀ իրականության մեջ ծնունդ առավ երկրապահության շարժումը՝ հանրույթի յուրաքանչյուր անդամի համար փորձարկելով լոյալությունը՝ տվյալ պահին անհրաժեշտ դարձած պետության ու հասարակության պաշտպանության պարտավորության գիտակցման և կատարման առումով: Այդպես ձևավորվեցին ինքնապաշտպանական, մահապարտների և այլ ջոկատներ: Յետադարձ համեմատական հայացք նետելով 1990-ականների առաջին կեսում այդ ռազմականացված հակամարտության ընթացքում Աղրբեջանին ու Ղայաստանին, ազգային միասնության, ինտեգրվածության կապակցությամբ արձանագրելի է Ղայաստանի առավելությունը՝ չհաշված դիտված առանձին բացասական դրսևորումները:

Յետևաբար, ազգային անվտանգության տեսանկյունից կարող է ոչ միայն հասարակության ամենօրյա բնականոն գործունեությունն ապահովող, այլ նաև պատերազմին և այլ տիպի վտանգներին, սպառնալիքներին դիմակայությունն ապահովող նորմաստեղծությունը: Իսկ ասվածը թույլ է տալիս ուրվագծել այն դերակատարների շրջանակը, որոնք սոցիետալ հանրույթի նորմաստեղծության տեսանկյունից կարող են համարվել ԱԱՀ-ի մասնագիտացված հանրույթի անդամ: Դրանք և պետական կառույցներում են (պետական գործիչներ, իրավաբաններ և այլք), և հասարակության մեջ (օրինակ՝ քաղաքական, տնտեսական, մշակույթի գործիչներ, հեղինակավոր անձինք և այլք):

Սոցիետալ հանրույթի ինտեգրացիան բարդ գործառույթ է, քանզի հանրույթի բնորոշ գիծ է հանդես գալիս դերային բազմազանությունը (այլուրականը): Հանրույթի գարգացման ընդգծված օբյեկտիվ միտում է դերային պատրական մեծացումը, որի արդյունքում նույն անհատը կարող է

մասնակցել մի շարք կոլեկտիվներում և խմբերում: Դերային պյուրալիզմի աճը հանդես է գալիս որպես սոցիետալ հանրույթի զարգացման գործընթացները բնութագրող կարևորագույն ասսպեկտ (պայմանավորելով անվտանգության ու նրա օրյեկտի ժամանակային չափման ոչ ֆիզիկական (սոցիալ-քաղաքական) բաղադրիչը՝ ինքնարերաբար դառնալով ազգային անվտանգության օբյեկտ: Առանձին վերցրած դերային պյուրալիզմի աճի միտումը նպաստում է անհատի ազատության աստիճանի մեծացմանը, ասել է թե՝ անվտանգության ապահովման այլընտրանքների մեծացմանը: Սակայն այդ միտումը ինտեգրացիայի առումով միաժամանակ երկու խոշոր խնդիր է առաջադրում:

Առաջին խնդիրը սոցիետալ հանրույթի անդամների միակցումը, ներառումն է ոչ միայն նեկ դերի, այլ դերերի բազմազանությանը: Ավելի հստակ՝ խնդիրը սոցիետալ հանրույթի այդ դերերի նկատմամբ նրա ենթախմբերի և անհատների լոյալության ապահովումն է:

Երկրորդ խնդիրը, որը կապված է դերային բազմազանության աճի հետ, դառնում է տարրեր կոլեկտիվների և իր՝ սոցիետալ հանրույթի նկատմամբ նրա անդամների լոյալությունների կարգավորման խնդիրը:

Սոցիալական համակարգի խնդիվիդուալիստական տեսությունները պնդում են, որ անհատական շահերը և նրանց գերկարնորումը հաճախ են խոչնողությամբ հասարակության ինտեգրացիային: Այս խնդիրը ներկայունս ակտուալ է նաև հայ հասարակության համար, որտեղ կենտրոնախույս միտումները գերակայում են կենտրոնաձիգ, ինտեգրացիոն միտումներին, իսկ հասարակության տարրեր խմբերը, անհատները շարունակում են մնալ չինտեգրված կամ էլ թույլ ինտեգրված: Եվ կրկին մեղադրանքներ են հնչում անհատների իրավունքների գերկարնորման հասցեին՝ «եզրցենտրիզմ» և այլ ձևակերպումների տեսքով: Մինչեւ բազում զարգացած հասարակությունների փորձը ցույց է տալիս, որ անհատների անձնական մոտիվները արդյունավետ կերպով ունակ են զուգամիտվել սոցիալական համակարգում՝ տարրեր կոլեկտիվներին անդամության և լոյալության միջոցով: Ուստի վերը թվարկված խնդիրների լուծումը լոյալությունների կարգավորման մեխանիզմի ընտրությունն ու ապահովումն է և այդ համատեքսուում տարրեր դերերի նկատմամբ լոյալությունների հավասարակշռումը:

Որպես կանոն, անհատների մեջ մասի համար անմիջական խնդիր է

համարվում իրար հետ մրցակցող լոյալությունների հավասարակշռումը և ընտրանքը: Խնդրո համատեքսուում դա կարևոր է, հատկապես երբ լոյալություններից մեկը առնչվում է ողջ հասարակության կամ պետություն անվտանգությանը: Այսպես սեփական ընտանիքի հիմնական կերակրողի ու հայրենիքի պաշտպանության դերերի, պարտավորության նկատմամբ հայ տղամարդու լոյալությունների հավասարակշռությունը կարող է ապահովել երկու դերերի համար էլ համարժեք շահագրգության ստեղծումով: Մասնավորապես, եթե նա գիտակցի, որ երկրորդ դերի կատարմամբ նա պաշտպանում է ոչ միայն հասարակությանը, պետությանը, այլ նաև իր ընտանիքին, մերձավորներին (ինչը պատերազմի տարիներին դիտվեց հայ իրականության մեջ), ինչպես նաև համոզված լինի, որ այդ դերի կատարման դեպքում իր ընտանիքի գոյապահպանությունը կապահովվի հասարակության կամ պետության կողմից: Ի դեպ ընտանիքի նկատմամբ պետության և հասարակության հոգատարության այդօրինակ պարտականություն ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում: Սակայն իրականում հասարակության տարրական բջիջի՝ ընտանիքի նկատմամբ պետության այդ պարտականությունը բավարար չափով չի կատարվում, ինչն էլ այդ դերերի նկատմամբ հայ տղամարդու լոյալությունների հավասարակշռումը վտանգի տակ է դնում՝ հարկադրելով ընտրություն կատարել կոնֆլիկտի մեջ հայտնված երկու լոյալությունների միջև, որից իհարկե տուժում է մյուս դերի, պարտավորություն-պարտականության կատարումը: Նետևաբար, ընդհանուր դեպքում եթե նույնիսկ հասարակության ներսում առկա տարրեր դերերի ներկայացվող պահանջները կոնֆլիկտի մեջ են, ապա սոցիետալ հանրույթի անդամների համար հնարավոր է ստեղծել տարրեր դերերի նկատմամբ իրենց լոյալությունը պահպանելու կենսական շահագրգություն:

Ազգային անվտանգության նկատառումներով լոյալությունների կարգավորման համար կարևոր է սոցիետալ հանրույթի հետ կապված արժեքների, նրանց պայմանավորած դերերի, պարտավորությունների հիերարխիան: Սոցիետալ հանրույթը փոխներթափանցող կոլեկտիվների և կոլեկտիվ լոյալությունների մի բարդ ցանց է, համակարգ, որին բնորոշ է դիֆերենցիան և սեգմենտացիան: Այդ կոլեկտիվներն իրենք ել կազմված են կոնկրետ կոլեկտիվների բազմությունից և բազում լոկալ հանրույթներից (համայնքներ, ընտանիքներ և այլն): Ինչպես աղյուսակ 1-ում է բերված,

սոցիետալ հանրույթը ձևավորվում է երեք մակարդակներից. նակրոմակարդակում հանդես եկող սոցիետալ հանրույթի մեջ են մտնում մեզոնակարդակից՝ խմբերը, դասերը, կոլեկտիվները, միկրոնակարդակից՝ անհատները: Նրանցից յուրաքանչյուրն ունի իրեն ժառանգված և/կամ իր իսկ ստեղծած կենսական միջավայրը (ֆիզիկական և սոցիալական բաղադրիչներով հանդերձ), սեփական գործունեության համակարգը այդ միջավայրում:

Բնականաբար ենթադրվում է, որ գործ ունենք սոցիետալ հանրույթի մեջ ներդրված ոչ միայն կոլեկտիվների, այլ նաև նորմերի, դերերի ու լոյալությունների հիերարխիայի հետ: Ավճական է, որ ազգային անվտանգության նկատառումներով սոցիետալ հանրույթի նկատմամբ նրա անդամների լոյալությունը պետք է բարձր դիրք զբաղեցնի լոյալությունների ցանկացած կայուն հիերարխիայում և դրանով իսկ դաշնա ողջ պետության, հասարակության, նրա անդամների առանձնահատուկ հոգատարության առարկան: Այնուամենայնիվ, այդ հիերարխիայում ամենաբարձր տեղը նա չէ, որ զբաղեցնում է: *Առավել կարևոր է հասարակության նորմատիվ կարգի նկատմամբ ցուցաբերվող լոյալությունը*, որին էլ պատկանում է ամենաբարձր դիրքը լոյալությունների հիերարխիայում: Իսկ բոլոր դերերի նկատմամբ լոյալությունների կարգավորման ու հիերարխիայի որոշակացման գործում կարևոր գործուն մեխանիզմը մշակութային լեգիտիմացումն է: Նրա միջոցով են սոցիետալ հանրույթի անդամները (կոլեկտիվ թե անհատ) միանում ողջ սոցիետալ հանրույթին ու նրա նորմատիվ կարգին, միանում առկա դերերին: Նա է շահագրգորում հանրույթի անդամներին՝ փորձարկելու իրենց լոյալությունները առկա դերերի նկատմամբ: Դասարակության նորմատիվ կարգի մշակութային լեգիտիմացումը առաջին հերթին գործում է արժեքային համակարգի ինստիտուցիոնալիզացման միջոցով՝ իրար կապակցելով սոցիետալ հանրույթը և մշակութային համակարգը: Դրա ապահովումից հետո են միայն առանձին ընտրանքային արժեքները կոնկրետացնում ընդհանուր արժեքային կերպերը, որոնք պետք է կազմեն այդ լեգիտիմ կարգին ինտեգրված յուրաքանչյուր կոնկրետ նորմի մասը:

Դասարակության նորմատիվ կարգը, ընդհանուր արժեքային կերպերը որպես կամոն ամրագրվում և ինստիտուցիոնալիզացվում են երկրի սահմանադրությամբ, օրենսդրությամբ, որտեղ էլ ֆիքսված են սոցիետալ

հանրույթի անդամների հիմնական պարտավորությունները: Դա ողջ հանրույթի նորմատիվ կարգի մի մասն է կազմում, մնացյալը ֆիքսված են հասարակական չգրված նորմերում, որոնք ևս, սակայն, ինստիտուցիոնալացված են սոցիալական ինստիտուտներով:

Այսպիսով, եթե սոցիետալ հանրույթի բնականոն գործունեությունը, ինտեգրվածությունը մեծապես կախված է նրա ներսում առկա լոյալությունների իրացվելիությունից, ապա ազգային անվտանգության պահովման խնդիր է դարձնում *լոյալությունների կարգավորվածությունը*, որոնք հանդես են գալիս որպես նորմերը դեկավարող ուժ: Եթե սոցիետալ հանրույթը դիտարկենք առանց նրա գործառնության ասպեկտի, ապա բնական է, որ նույնիսկ հասարակության համար սահմանված ամենահիեալական նորմերի, դերերի համակարգի առկայության դեպքում դրանք գործողության մեջ չեն մտնի լոյալությունների կազմակերպված, կարգավորված համակարգի բացակայության դեպքում: Այդ նկատառումով նորմերի համակարգում տարբեր կոլեկտիվների իրավունքները և պարտականությունները պետք է համաձայնեցված լինեն ոչ միայն միմյանց, այլ նաև ամբողջությամբ վերցված հասարակության նորմատիվ կարգի լեգիտիմ հիմքների հետ: Մեկ համակարգային ամբողջություն կազմող այդ հիերարխիայի տեսանկյունից սոցիետալ հանրույթի նորմատիվ կարգավորումը պետք է ենթադրի այս կամ այն դերին, կոլեկտիվին անհամության խնդիրը լուծող լեգիտիմ ստրատիֆիկացիոն սանդղակների գոյությունը, որոնք սահմանում են նրա մեջ մտնող կոլեկտիվների, առանձին անձանց, ինչպես նաև կարգավիճակների և դերերի (որոնք տարածված են այդ հասարակության մեջ) համընդհանուր ընդունելի և լեգիտիմ հարգիությունը, վարկը (այն չափով, ինչ չափով յուրացված են նորմերը և արժեքները): Ստրատիֆիկացիոն այդ սանդղակներն էլ կառուցվածքավորում են ողջ սոցիալական տարածությունը կոնկրետ իրավիճակում պահովելով դերերի ու լոյալությունների հիերարխիկ դասավորությունը: Ստրատիֆիկացիոն սանդղակները պետք է կորդինացված լինեն ինչպես անդամության կարգավիճակը որոշող ունիվերսալ նորմերի, այնպես էլ կոլեկտիվների, կարգավիճակների և դերերի որոշակի բաժանման հետ: Այս հանգամանքը ընդհանուր դեպքում ամենակին էլ պարտադիր չի համարում հիերարխիայի առկայությունը: Կոնկրետ ստրատիֆիկացիոն համակարգը այդ բոլոր բաղադրիչների բարդ ֆունկցիան է:

Ստրատիֆիկացիոն համակարգում ի հայտ է գալիս անհատի կարգավիճակի բարդագույն խնդիրը, որը պատճականորեն հակված են եղել դիտարկել մեծ կոլեկտիվ համակարգերին (ոյ կլինի պրոլետարիատը թե այլ կոլեկտիվ) պատկանելության տեսանկյունից: Այդ կոլեկտիվներին անհատների անդամությունն էլ որոշել է նրանց կարգավիճակը: Սակայն ժամանակակից հասարակություններում, ուր առաջնային են համարվում նարդու իրավունքները և ազատությունները, ընթանում են այդօրինակ կոլեկտիվ հանգույցներից անհատական կարգավիճակների ազատագրման գործընթացմերը: Սա ազգային մակարդակում առաջնայնության առումով կարծես թե բախնան մեջ է դնում անհատի և սոցիետալ անվտանգությունները: Անշուշտ, եթե դերերի հիերարխիայի վերին սանդղահարթակում անհատակենտրոն դերերը, շահերը և ոչ թե սոցիետալ նորմատիվ կարգն է հանդես գալիս, ապա բնական է, որ տվյալ կերպ կարգավորված հասարակության ինտեգրացիայի առջև խոչընդոտ են դաշնում ամեն ինչի նկատմամբ գերակայություն ստացած անհատական շահերը: Սակայն, ինչպես վերը նշվեց, միանգանայն հնարավոր է անհատի իրավունքների և անվտանգության գործամիտումն ու կանալիզացիան համապատասխանաբար սոցիետալ հանակարգի ու ազգային անվտանգության մեջ: Այնպես որ, չարդարացված է նրանց կատեգորիկ հակադրումը անվտանգության հայեցակարգում: Նրանք օրգանապես կապված են և մեկ ամբողջություն են կազմում: Խոսքը չի վերաբերում անհատական շահերը երկրորդ պլան մոլելու անհրաժեշտությանը, այլ վերաբերում է սոցիետալ նորմատիվ կարգին նրանց ներդաշնակ միակցմանը, անհատի համար շահագրգությունների ստեղծմանը:

Եվ կրկին խնդիրը հանգում է ստարտիֆիկացիոն սանդղակին, կարգավիճակների նկատմամբ սոցիետալ հանրույթի անդամների շահագրգությանը: Մասնավորապես, սոցիետալ հանրույթի ստրատիֆիկացիոն սանդղակում կոլեկտիվի կամ անհատի դիրքը գնահատվում է նրա գրադեցրած դիրքի հարգիությամբ և ազդեցությունը թողմելու մակարդակով: Փողի և իշխանության հետ մեկտեղ ազդեցությունը դիտարկվում է իրեն սոցիետալ փոխանակության ընդհանրացված սիմվոլիկ միջոցներից մեկը: Նրա էլուրյունը այլ սոցիալական գործակալների մակարդակում իրենց ցանկալի որոշումների ընդունմանը հասնելու ընդունակությունն է՝ նրանց որպես գայթակղություն չներկայացնելով որևէ արժեքավոր բան և նրանց

չսպառնալով որոշակի պատժից հետևանքներով: Այդ ազդեցությունը պետք է գործադրվի՝ ներգործության օբյեկտին համոզելով, որ այն որոշումը, որը ներշնչում է ազդեցության սուբյեկտը, ենթադրում է նրանց երկուսի կողմից էլ համերաշխություն վայելող կոլեկտիվ համակարգ(եր)ի շահերից բխող գործողություն: Այդ նապատակով ազդեցության սուբյեկտը նախևառաջ հղում է կատարում կոլեկտիվ շահին (օրինակ, փաստարկելով, որ դա անհրաժեշտ է հասարակությանը, պետությանը), միաժամանակ ելնելով նրանից, որ երկու կողմերն էլ, ապահովելով կոլեկտիվ շահ և փոխադարձ համերաշխություն, բավարարում են նաև իրենց մասնակի շահերը: Եթե հասարակության մեջ ազդեցություն ապահովող կարգավիճակը լեզիտիմ չէ սոցիետալ հանրույթի անդամների համար, ապա դա միարժեքորեն պայմանավորելու է նրանց համերաշխության բացակայություն տվյալ կոլեկտիվ համակարգի նկատմամբ, իսկ ազդեցության կարգավիճակը տնօրինողը (որը հարգաված չէ սոցիետալ հանրույթի անդամների կողմից, օրինակ՝ թաղային հեղինակություն, վարկաբեկված մտավորական, բաղաքական գործիչ և այլն) զուրկ է լինելու արդյունավետ ազդեցություն թողմելու հնարավորությունից: Եվ ճիշտ հակառակը տեղի ունի, եթե այդ «կոչը» հնչում է ազդեցիկ, հարգի կարգավիճակի անունից, հեղինակություն վայելող անձի, կոլեկտիվի կողմից:

Հանրագումարենք: Եթե զարգացած երկրներում սոցիետալ համակարգի այս խնդիրները բավարար չափով լուծված են, ապա միանգանայն այլ է իրավիճակը Հայաստանի պարագայում: Արևմտյան՝ ազատական-ժողովրդավարական մշակութային մոդելը և արժեքային համակարգը որդեգրած ՀՀ-ն դեռևս լուրջ խնդիրներ ունի ինտեգրացիա ապահովող սոցիետալ հանրույթի առումով: Ավանդական նորմերի հետ որոշ դեպքերում բախնան մեջ հայտնված և ՀՀ-ի կողմից ֆորմալացված այդ նորմատիվ համակարգի ենթադրած սոցիետալ հանրույթը բնութագրվում է ինտեգրացիայի ցածր մակարդակով, որը ազգային անվտանգության լուրջ հիմնախնդիրներից կարող է լինել հատկապես սպառնալիքի, վտանգի առկայության դեպքում: Իսկ ազգային անվտանգությունը ենթադրում է հասարակության բարձր աստիճանի ինտեգրացիա, որն էլ տեղի ունի, եթե հասարակության ներսում առկա դերերի նկատմամբ ապահովվում է նրա անդամների լոյալությունը: Լոյալությունների հիերարխիայում առաջնի հարթակում հանրույթի նորմատիվ կարգն է, որը սահմանել են նրա անու-

նից և հանուն նրա շահերի, պահանջմունքների պետական ու հասարակական տարբեր ինստանցիաները: Այնուհետև հաջորդում են սոցիետալ հանրույթի հետ կապված պարտավորությունները: Նորմատիվ կարգի ունիվերսալ նորմերին հանրույթի անդամների միակցումը կատարվում է նորմատիվ կարգի լեգիտիմացման և կոլեկտիվներին անհատների անդամության լեգիտիմ ստրատիֆիկացիոն սանդղակների միջոցով, որին ծառայում են վարկի, ազդեցության, համերաշխության ու շահագրգուվածության հայեցակարգերը: Այս կերպ սոցիետալ հանրույթը, նրա զարգացման ասպեկտը հանդես են գալիս ոչ միայն որպես անվտանգության օբյեկտ, այլ նաև սուբյեկտ, երբ նրա յուրաքանչյուր անդամ իրականացնում է ազգային անվտանգության գործառույթ կամ նպաստում է դրա իրականացմանը:

1. **Կերպավերարտադրման ենթահամակարգը** սոցիալական համակարգի՝ հասարակության երկրորդ ենթահամակարգն է, որի հիմնական գործառույթը մշակութային կերպերի, նմուշների վերարտադրությունն է: Այս առումով անվտանգության օբյեկտ է հանդես գալիս հասարակության մշակութային կերպերի համախումբն ու նրանց վերարտադրությունը: Ինքնին հասկանալի է, որ սոցիալական համակարգի դիտարկումը այս ենթահամակարգի տեսանկյունից նույնական է արդեն իսկ վերը նշված անվտանգության արժեքային ասպեկտի հետ, քանզի կերպավերարտադրման համակարգի կառուցվածքային բաղադրիչ են հանդես գալիս արժեքները: Դասարակության այս համակարգի տեսանկյունից անվտանգությունը ենթադրում է երկու խումբ գործառույթների իրականացում ԱԱՀ-ի կողմից: Առաջինը, առկա արժեքների, արժեքային կերպերի սպառնալիքից ազատության վիճակի պահպանումն է: Դաճախ ազգային անվտանգությունը սահմանվում է «հասարակության էական արժեքների սպառնալիքից ազատության վիճակ» ձևակերպմամբ: Երկրորդ խումբը այդ արժեքների, կերպերի վերարտադրության, զարգացման ու զարգացմանը սպառնացող վտանգների կառավարման ապահովումն է: Կերպավերարտադրման համակարգի զարգացման գործընթացի ասպեկտ է հանդես գալիս արժեքների ընդհանրացումը:

Սոցիետալ հանրույթի ներքո խոսվեց այդ հանրույթի նորմատիվ կարգի մշակութային լեգիտիմացման մասին, այսինքն՝ այն կարևորագույն գործառույթի մասին, որը կատարում է կերպավերարտադրման համակարգը

սոցիետալ հանրույթի համակարգում: Այդ գործառույթի մասին առավել հանգամանալից խոսելիս հարկ է նշել, որ մշակութային լեգիտիմացման հիմքերը տրամադրենալ են շահերի, ազդեցության և համերաշխության ինչպես կոնկրետ, այնպեսև՝ պատահական բնույթի նկատմամբ, որոնք սոցիետալ մակարդակում հանդես են գալիս արժեքային կապվածությունների տեսքով: Եթե հանրույթին, կոլեկտիվին ցուցաբերվող լոյալության, պարտավորությունների կատարման ժամանակ խոսվեց գերազանցապես հանրույթի անդամների շահագրգուվածությունից նշվածների ունեցած կախվածության մասին, ապա արժեքային կապվածությունների տարբերակից գիծ է համարվում նրանց մեջ անկախությունը գնի, օգուտի կամ վնասի պատկերացումներից, սոցիումի կամ շրջակա միջավայրի ընթացիկ պահանջմունքներից: Ուստի շահագրգուվածությունից զատ, արժեքային կապվածությունները հանդես են գալիս իրեւ ևս մեկ կարևորագույն մեխանիզմ, որոնք հնարավոր են դարձնում սոցիետալ հանրույթի անդամների ներգրավումը ազգային անվտանգության հոչակված առաջնահերթությունների, նպատակների կյանքի կոչմանը, գործառույթների իրականացմանը: Դետևաբար, անվտանգության տեսանկյունից առաջին պլան է գալիս կերպավերարտադրման համակարգի կողմից ազգային անվտանգությունը խորհրդանշող արժեքների, դրանց վերարտադրման մոդելների ծևավորումը, որոնք մշակութային լեգիտիմացման մեխանիզմի միջոցով կապակցվում են սոցիետալ հանրույթի նորմատիվային կարգին՝ պայմանավորելով համարժեք դերերին, պարտավորություններին հանրույթի անդամների արժեքային կապվածությունը:

Արժեքային պարտավորությունների խախտումը բնորոշվում է որպես ոչ լեգիտիմ արարքի կատարում (տվյալ պարագայում՝ համապատասխան մակարդակի սոցիալական միավորի անվտանգության վտանգում), և հակառակը՝ պարտքին հետևելը համարվում է պատվի և խղճի գործ, որոնք ել իրենց հերթին չեն կարող ներկայացվել առանց անպատվության և մեղքի հասկացությունների: Ասել է թե՝ անվտանգության ապահովմանը սոցիետալ հանրույթի անդամների ներգրավումը իրականացվում է հանրային բարոյականության մեջ այնպիսի ճանաչողական գործուն մեխանիզմների ներդրմանը, ինչպիսիք են բարի-պարտք-խիղճ-պատիվ-արարում (բարին կատարելը պարտք է, այդ պարտքի կատարումը՝ խղճի և պատվի գործ, որն ել արդյունքում հանգեցնում է արարման) և չար-ան-

պատվություն-մեղք-ավերում (չարը կատարելը անպատվություն է և մեղք, որը կիանգեցնի ավերման) շղթաները: Վերջինս արգելք է դնում անվտանգությունը այս կամ այն չափով վտանգող արարքների կատարման վրա:

Իրականում հենց այդպիսի ուժ էլ ունեն արժեքները և արժեքային պարտավորությունները, քանի որ արժեքներին կապվածությունը նրանց իրացման առումով ենթադրում է կոնկրետ գործողություններ կատարելու պարտավորություն: Նրանց ուժը ոչ միայն հասարակության ներսում դրական, լեզվին և լեզվականության կատարելը խրախուսելն է, այլ նաև ոչ լեզվին արարքի բացառման ընդունակությունը: Ըստ որում, արգելքներ դնելու նրանց ընդունակության ազդեցության ձևը և աստիճանը կախված են մի շարք գործուներից: Սոցիետալ հանրույթի անդամը կարող է ձեռնպահ մնալ ոչ լեզվին արարք կատարելուց կամ չհամարձակվել այն կատարել, եթե հասարակության ներսում առաջին հերթին բացակայում է կապվածությունը և աջակցությունը համարժեք արժեքին, և երկրորդ հերթին, եթե դրա կատարման դիմաց սպասվում են հանրային կամ պետական պատժամիջոցներ (կախված ոչ լեզվին արարքի բնույթից):

Հատկապես եթե հասարակության արժեքային համակարգն ունի «ակտիվիստական» բնույթ, ինչը մեծ մասամբ բնորոշ է ժամանակակից հասարակություններին, ապա դա ենթադրում է կոլեկտիվ գործողության համար միանգամայն որոշակի պայմանների իրատեսական ճանաչում: Այսպես. արժեքային համակարգերն իրենց մեջ ներառում են «արժեքային առումով հիմնավորված միավորումների» նկատմամբ սոցիետալ հանրույթի անդամների պարտավորությունների, լեզվին կոլեկտիվ փոխազդեցությունների և կազմակերպությունների շրջանակներում համերաշխություն կատեգորիաները: Հասարակությունն ինքն է որոշում, թե որ միավորումներն են համարվում արժեքային առումով հիմնավորված: Ազգային անվտանգության մակրոմակարդակում այդօրինակ միավորումների հետ ասոցացված արժեքներ են հանդես գալիս, օրինակ, ինքնիշխան պետությունը, ազգը, մեզոնակարդակում՝ ընտանիքը, կոլեկտիվը:

Հազվադեպ է հնարավոր լինում սոցիետալ հանրույթի անդամների համար ապահովել միավորման լեզվինությունը՝ այդ լեզվինացումը կապելով միանգամայն կոնկրետ գործողությունների հետ, քանի որ գործողության սուբյեկտները, որպեսզի հնարավորություն ունենան փոփոխական հանգամանքներում իրացնել իրենց արժեքները, պետք է որոշումնե-

րի ընդունման բավարար ազատություն ունենան: Այդպիսի ազատություն ապահովող գործոններից մեկը համարվում է արժեքների համընդհանրացման բարձր մակարդակը, որոնց հիման վրա իրականացվում է միավորման լեզվինացումը: Արժեքների համընդհանրացումն էլ հանդես է գալիս իրեն կերպավերարտադրման համակարգի զարգացման գործընթացի ասպեկտ:

Հասարակության այս համակարգի մեջ մտնող և համընդհանուր համարվող արժեքները կապված են կենսագործունեության բոլոր (և ոչ թե կոնկրետ) ոլորտներում (մշակույթ, քաղաքականություն, տնտեսություն և այլն) վարչաբանական նմուշների հետ: Սակայն ոչ բոլոր դեպքերում է, օրինակ, որ նրանց արգելող բնույթը նույն բովանդակությունն ունի: Այսպես. տնտեսական փոխազդեցություններում մարդու կողմից մարդու շահագործնան արգելքը միանգամայն տարրերվում է դրամը տոկոսի տակ դնելու, գույքը գրավ դնելու կոնկրետ արգելքներից: Արժեքային համակարգերի այն աստիճանի համընդհանրացումը, եթե նրանք ընդունակ են դառնում արդյունավետ կերպով դեկավարել սոցիալական գործունեությունն առանց մանրամասն շարադրված արգելքների վրա հենվելու, հասարակության արդիականացման, զարգացման գործնթացում առանցքային բնութագրիներից մեկն է համարվում: Այդպիսիք ժամանակակից հասարակություններում հանդես են գալիս մարդու հիմնարար և անքակտելի իրավունքներն ու ազատությունները, նրանց իրավահավասարությունը, որոնք ևս ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ: Եվ պատահական չէ, որ այդ արժեքներում ավելի շատ խոսվում է իրավունքի, ազատության, քան թե արգելքի տերմիններով: Թեպես նրանց անօտարելիությունը արդեն իսկ արգելք է և անվտանգության ապահովման օբյեկտ: Մյուս կողմից էլ այդ ազատությունը ազգային անվտանգության գործառություններին անհատների, խմբերի մասնակցության ճկունությունն ու այլնտրանքայնությունը ապահովող գործոն է (ցանկացած իրավունքի առումով):

Մշակույթի մակարդակում որպես արժեքների համապատասխան ասպեկտ հանդես է գալիս բարոյականությունը: Եվ ազգային անվտանգության բազմաթիվ արժեքներ հենց այս մակարդակում են: Բարոյականությունը ենթադրում է փորձի օբյեկտների գնահատում սոցիալական հարաբերությունների համատեքստում: Բարոյական վարքը կոնկրետ մշակու-

թային արժեքի իրացումն է այլ սուբյեկտների հետ փոխազդեցություններ ներառող սոցիալական իրավիճակում: Սոցիալական հարաբերություններում անշուշտ պետք է լինեն ստանդարտներ, որոնք պարտադիր են նրա մասնակիցների համար: Բարոյական արժեքները մշակութային համակարգի արժեքային բովանդակության, պարունակության միակ քաղադրիչը չեն: Գոյություն ունեն նաև այլ՝ օրինակ, էսթետիկական, ճանաչողական կամ բուն կրոնական արժեքներ:

Ինչպես ցանկացած մշակույթ, հայկական մշակույթը և այլ մշակույթներից տարբերակվում է ոչ միայն իր ենթադրած բարոյականությամ, այլ նաև արվեստի, կրոնական հավատքի առունուվ, որոնք հանդես են գալիս որպես արտահայտչական սիմվոլացման դիֆերենցացված ոլորտներ: Այդ մշակույթի հարաբերականորեն ինքնուրույն բաղկացուցիչ է նաև էմպիրիկ իմացությունը (Վերջնահաշվում՝ գիտությունը), որը վերը նշվածների նման ևս դառնում է դիֆերենցացված անկախ մշակութային ենթահամակարգ: Ավելորդ է նշել, որ դիֆերենցացված մշակութային այդ ենթահամակարգերն իրենց արժեքային մասնաբաժիններն ունեն ազգային անվտանգության արժեքային համակարգում, որոնք սոցիետալ հանրույթի դիֆերենցացված դեերի հետ կազմավորում են ազգային ինքնության հայեցակարգը: Փոխադարձ կապերի բարդ ցանցով և բարձր աստիճանի դիֆերենցացված մշակութային համակարգի առկայությունը համարվում է արդիականացող հասարակությունների տարբերակիչ գիծը և ավելի բարձր աստիճանի անվտանգության գրավականը:

2. **Քաղաքականության համակարգը** հասարակության երրորդ կարևորագույն ենթահամակարգն է (այլոց դեպքում քաղաքական համակարգ), որի հիմնական գործառույթը կենսագործունեության տարբեր ոլորտներում հրչակված նպատակների ձեռքբերումն է: Քաղաքականության համակարգի կառուցվածքային քաղադրիչ են հանդես գալիս կոլեկտիվները, իսկ զարգացման գործընթացի ասպեկտը՝ դիֆերենցացիան է: Անվտանգության քաղաքականությունը, ինչպես և մյուս քաղաքականությունները, հարում է հասարակության այս համակարգին, քանզի նպատակի ձեռքբերումը սույն համակարգի գործառույթն է:

Քաղաքականության համակարգը իր համընդհանրացված գործառույթների (1. տվյալ հանրույթի, երկրի որոշակի սոցիալական խմբի կամ անդամների մեծամասնության քաղաքական իշխանության ապահովումը,

2. կառավարումը, 3. հասարակության սոցիալական խմբերի և շերտերի որոշակի միասնությունը՝ ինտեգրացիան, 4. տնտեսության գործառնան և առաջնարացի համար քաղաքական պայմանների ստեղծումը, 5. հասարակության ու նրա անդամների պաշտպանությունը ներքին և արտաքին կործանարար ազդեցություններից (էջ 122-124)¹⁴⁾ միջոցով սերտորեն կապված է այլ համակարգերի հետ, և փոխներթափանցած է նրանց մեջ: Այդ գործառույթների շրջանակներում է քաղաքական համակարգը կենսագործունեության տարբեր ոլորտների համար առաջադրվող նպատակների շարքում սահմանում նաև տվյալ ոլորտի կամ համակարգի անվտանգության նպատակները և հետամտում դրանց: Անվիճահարույց է, որ բոլոր տեսակի քաղաքականությունները սերտորեն փոխկապակցված են, և խնդրո համատեքստում կարևոր է նշել նրանց կապը հատկապես անվտանգության խնդիրների, իսկ ավելի կոնկրետ՝ անվտանգության ապահովման համար ցանկալի նպատակների ձեռքբերման հետ: Մասնավորապես, վերը դիտարկված երկու համակարգերի համար ձևակերպվեցին այն նպատակները, որոնց ձեռքբերումն անհրաժեշտ է անվտանգության նկատառումներով: Եվ ամենակին էլ պարտադիր չէ, որ այդ նպատակների ձեռքբերումը հետամտվի մինհայն պետության կողմից, այլ ցանկալի է դրանում ողջ հասարակության ներգրավումը, նրան ամբողջությամբ քաղաքական համակարգի մեջ որպես ակտիվ գործոն ներառումը, այլ ոչ թե օտարումը: Իր հրավունքների տնօրինման և պրակտիկայում դրանցից օգտվելու փաստով իսկ յուրաքանչյուր քաղաքացի քաղաքական համակարգի բաղկացուցիչ է լինի նա օբյեկտ թե սուբյեկտ: Ասվածը չպետք է շփոթել որոշակի գաղափարախոսությամբ հասարակության քաղաքականացման հետ: Եթե ընդհուպ հասարակական կյանքը կարող է քաղաքականացված լինել, ապա՝ հատկապես զարգացման հետ ասոցացված անվտանգության գործառույթների մասով: Այսինքն՝ երբ հասարակության յուրաքանչյուր անդամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, կոնկրետ ոլորտում կամ ընդհանրապես գիտակցի իր մասնակցության կարևորությունը անվտանգության նպատակների ձեռքբերման առունուվ:

Որպես հասարակության կյանքի կազմակերպման՝ սոցիետալ նորմա-

¹⁴⁾ Зеркин Д.П., Основы политологии, Курс лекций, 2-е изд., доп. Ростов н/Д, Феникс, 1999, էջ 576:

տիվ կարգի մեկ այլ ասպեկտ (առաջին ասպեկտը լոյալությունը և անդամությունն էր, երկրորդը՝ մշակութային լեզիտիմացումը), հասարակության քաղաքական կյանքն ինքնին դառնում է անվտանգության օբյեկտ, իսկ քաղաքականության համակարգի գործառույթների ապահովումը՝ անվտանգության խնդիր:

Ինչպես վերը նշեցինք, սոցիետալ նորմատիվ կարգի նկատմամբ հանրությի անդամների լոյալություն-անդամության և նրա մշակութային լեզիտիմացման դեպքում ազդեցությունը (որոշակի սոցիետալ կարգավիճակ, դեռ կրողին ենթարկվելը) և արժեքային կապվածությունները գործում են կամավորության սկզբունքով՝ համոզման միջոցով և պատվին ու խղճին հղում կատարելով։ Սակայն ակնհայտ է, որ որևէ խոշոր և բարդ սոցիալական համակարգ չի կարող գոյատել, եթե նրա նորմատիվ հիմքի մեջ մասի հետ հանրությի անդամների համաձայնությունը չկրի պարտադիր բնույթ։ Այսինքն՝ եթե իրավիճակներին համապատասխան չլսելու, չենթարկվելու նկատմամբ չկիրառվեն բացասական պատժամիջոցներ։ Չլսելու, չենթարկվելու դեպքում կիրառվող այդօրինակ պատժամիջոցները մասմաբ էլ նախազգուշացում են նույնիսկ օրինապահ քաղաքացիների համար, որոնց «կիշեցնում են» իրենց պարտականությունների մասին, իսկ խախտողների համար ծառայում են իբրև պատիժ։ Սոցիալապես կազմակերպված և կառավարվող բացասական պատժամիջոցների կիրառումը ներառյալ նրանց կիրառման սպառնալիքը այն դեպքերում, երբ կասկածի տակ է առնվում հանրությի անդամների լսելու մտադրության առկայությունը, կոչվում է *հարկադրանքի* գործառույթ, որը հասարակությունում իրականացվում է այնպիսի հատուկ մարմինների կողմից, ինչպիսիք են ոստիկանությունը և ռազմականացված ծառայությունները։

Կառավարման ենթարկվող հարկադրանքը պահանջում է նորմերի խախտման հանգամանքների, սուբյեկտի և խախտման իրական փաստի որոշման հստակ եղանակների գոյություն։ Այդ ուղղությամբ գործող հատուկ մարմինների շարքում կարևոր դեր ունեն դատարաններն ու իրավաբանական գիլդիան։ Վերջիններս պարտավորությունների, պատիժների և այլնի սահմանումը համակցում են նորմերի իմաստի մեկնաբանության հետ, քանզի բարդ նորմատիվ կարգը (ինչը բնորոշ է ժամանակակից հասարակություններին) ոչ միայն հարկադրանքի, այլ նաև նրա հեղինակություն վայելող մեկնաբանության կարիքն ունի։ Թույլ զարգացած հասա-

րակություններում այս վերջին գործառույթը սովորաբար տնօրինում են կրոնական ինստանցիաները (օրինակ՝ իսլամական-ֆունդամենտալիստական մշակույթով հասարակությունները):

Ողջ հասարակության անվտանգության առկա և պոտենցիալ հիմնախնդիրները սահմանելու առումով կարևոր է պարզել սոցիետալ հանրությի ու քաղաքականության համակարգի հարաբերություններին առնչվող մի շարք խնդիրներ։ Քաղաքականության համակարգի մեջ են մտնում ոչ միայն պետական կառավարման համակարգի այն հիմնական գործառույթները, որոնք դրսնորվում են իր և սոցիետալ հանրությի փոխհարաբերություններում (օրինակ՝ ՀՀ Սահմանադրության մեջ նախագահի, կառավարության, Աժ գործառույթները և այլն), այլ նաև այն գործառույթները, որոնք դրսնորվում են նրա ու ցանկացած այլ կոլեկտիվի հարաբերություններում։ Ուստի անհրաժեշտ է դառնում սոցիալական-տարածության մեջ քաղաքական անվտանգության օրյեկտի հստակեցումը, ինչն էլ ենթադրում է քաղաքականության համակարգի հստակ սահմանագատում։

Եթե քաղաքականության համակարգի սոցիալական կան տարածական հենքի առումով այն հստակ է (դա երկրի տարածքը և այն բնակեցնող հասարակությունն է, որոնք հասարակության բոլոր համակարգերի համար նույնն են), ապա միանգամայն այլ է վիճակը տարաբնույթ կոլեկտիվների, անհատների հետ կապված իրադարձությունների, գործընթացների առումով։ Այսինքն՝ խնդիր է առաջանալ պարզել, թե դրանցից որոնք, որ մակարդակինն են քաղաքական, և որոնք՝ ոչ։ Դիշատակված հիմնախնդիրի կապակցությամբ բավական հստակ չափորոշիչ է հետևյալը։ Ցանկացած մակարդակում տեղի ունեցող ինչ-որ երևույթ, իրադարձություն, գործընթաց համարվում է քաղաքական այն չափով, ինչ չափով այն կապված է որևէ կոլեկտիվի կողմից իր նպատակների ծեռքբերման համար ռեսուլունների մորիլիկացման և կազմակերպման հետ։ Այդ իսկ պատճառով գործունեության քաղաքական ասպեկտներ գոյություն ունեն նաև այնպիսի կոլեկտիվների, կազմակերպությունների դեպքում, ինչպիսիք են գործարար ընկերությունները, համալսարանները, եկեղեցիները և այլն։

Պետությունը քաղաքականության համակարգի ամենազդեցիկ և կարևորագույն ինստիտուտն է, և ժամանակակից հասարակություններում այն գնալով ավելի ու ավելի է դիմերենցացվում սոցիետալ հանրությց՝ որպես հասարակության մասնագիտացված, առանձնահատուկ մար-

մին (պետական անվտանգությունը որպես ազգային անվտանգության ինքնուրույն բաղադրամաս արդեն իսկ դիտարկվել է): Այդ տիպի հասարակություններում պետությունը միտում ունի կենտրոնանալու երկու ֆունկցիոնալ համալիրների վրա:

Առաջինն ընդգրկում է գլոբալ սպառնալիքներին դեմ հանդիման սոցիետալ հանրույթի ամբողջականության պահպանման պատասխանատվությունը՝ նրա լեզիտիմ նորմատիվ կարգի վրա հատուկ, բայց ոչ բացառիկ շեշտադրմամբ: Այս համալիրին են վերաբերվում հարկադրանքի գործառույթները և առնվազն նորմերի իմաստի մեկնաբանություն իրականացնելուն նրա նաև անվտանգության որոշակի բաժինը: Դրանցից բացի քաղաքականության համակարգի զարգացման ասպեկտ հանդես եկող դիֆերենցացիայի արդյունքում կառավարման ոլորտները նույնպես ենթարկվում են այդ գործընթացին (ինչը ևս անվտանգության օբյեկտ է, և ԱԱՀ-ն պետք է պահպանագրի այն ու չխոչընդոտի): Արդյունքում ինքնուրույնացման միտում ունեցող կառավարման այդ ոլորտները պահանջում են անվտանգ ու կանոնակարգված գործառնություն ապահովող նոր նորմերի բաց ձևակերպում ու օրինականացում: Եթևարար քաղաքականության համակարգի օրենսդիր գործունեությունը գործառությային այս համալիրին է հարում:

Երկրորդ համալիրի մեջ են մտնում պետության գործադիր գործունեության բոլոր ձևերը: Այն կապված է կոլեկտիվ գործողությունների հետ՝ «հասարակական» շահերից բխող ինչ-որ միջոցների ձեռքնարկ ենթադրող իրավիճակներում: Պետության այդ պատասխանատվության սահմանները տարածվում են պարտադիր կարևորության գործերից (ինչպիսիք են երկրի սահմանների պաշտպանությունը կամ հասարակական կարգի պահպանությունը) մինչև «հասարակական շահերը շոշափող» ցանկացած հարց, որոնք բոլորն էլ առնչվում են անվտանգության հետ:

Պետության և սոցիետալ հանրույթի միջև իիմնական հարաբերությունները ժողովրդավագարական հասարակություններում ազգային անվտանգության հետ նույնպես կապված են: Արդիականացած հասարակություններին բնորոշ է, որ դիֆերենցիացիայի որոշակի մակարդակի դեպքում քաղաքական լիդերների իշխանությանը բնորոշ է դառնում կախվածությունը բնակչության լայն շերտերի աջակցությունից: Այս առումով քաղաքական լիդերները եական դերակատարում են ստանում ազգային անվ-

տանգության գործառույթների համատեքստում: Լիդերության և հեղինակության դիֆերենցացիան ենթադրում է իշխանության՝ որպես սոցիալական փոխանակության միջոցի ընդհանրականության առանձնահատուկ մակարդակ: Իշխանությունը սահմանվում է որպես որոշումներ ընդունելու և «փաթաթելու, պարտադրելու» ընդունակություն, որոնք պարտադիր են համապատասխան կոլեկտիվների և նրանց անդամների համար այն պատճառով, որ վերջիններիս կարգավիճակները ենթակա են այդ որոշումներով ենթադրվող պարտականություններին: Այդպիսիք են պետության որոշումները, այդպիսին են համարվում նաև քաղաքական կուսակցությունները:

Սակայն բոլոր պարագաներում հարկ է տարբերակել իշխանությունը ազդեցությունից, քանի որ ազդեցության հիմքը համոզումն էր, մինչեւ պարտավիրեցնող բնույթի որոշումները (հրամանագրեր, օրենքներ և այլն՝ ողջ ժողովրդի համար, կուսակցության որոշումները՝ կուսակցության անդամների համար) ամենակին էլ նման չեն համոզման միջոցներին: Այսպես. ժողովրդի իշխանության արժեքի, նորմի, ինստիտուտի դեպքում քաղաքացին, իր ձայնը տալիվ ընտրություններում, իշխանություն է իրականացնում, քանի որ այդպիսի ձայների համախումքը պարտավիրեցնող կերպով որոշում է ընտրությունների ելքը: Եվ եական չէ՝ նա տնօրինում է իշխանության փո՞քը, թե՝ մեծ մասնաբաժին, միևնույն է, այն բոլոր դեպքերում իշխանություն է. հար և նման մանրադրամի ու դրամի հարաբերակցությանը: Նման կերպ հասարակությունը, պետությունը՝ որպես անվտանգության սուբյեկտներ, կարող են ազդել կամ հակազդել, հակալշել կամ իշխել անվտանգության օբյեկտ հանդես եկող այս կամ այն գործընթացին, իրադարձությանը (կախված այն բանից, թե այդ օբյեկտը անվտանգությա՞ն, թե՝ վտանգի աղբյուր է):

3. **Տնտեսության ենթահամակարգը** սոցիալական համակարգի չորրորդ համակարգն է, որի հիմնական գործառույթը աղապտացիան է, կառուցվածքային բաղադրիչը՝ դերերը, իսկ զարգացման գործընթացների ասպեկտը՝ աղապտատիվ ներուժի ավելացումը: Եթե տնտեսության համակարգի այդ գործառույթները սերտորեն կապված են անվտանգության հետ, իսկ դրանք իրականացնողները հանդես են գալիս անվտանգության սուբյեկտներ, ապա նյութ կողմից էլ նրանք, և ընդհանրապես՝ ողջ տնտեսության համակարգը, հանդես են գալիս որպես անվտանգության ապա-

հովման օբյեկտ:

Սոցիետալ նորմատիվ կարգի այս չորրորդ բաղադրիչը, ասպեկտը կապված է պրակտիկ ոլորտի հետ և կերպավերարտադրման համակարգի նման լայն հասկացություն է ու ընդգրկում է կենսագործունեության բոլոր ոլորտները, ընդհուած՝ մշակույթը, կրթությունը, քաղաքականությունը (քաղաքական դաշտը՝ որպես որոշակի տնտեսական օրենքներով գործառնող միջավայր): Նրա կիրառման առավել ակնհայտ ոլորտներ են համարվում առօրյա ընկալման տնտեսությունը և տեխնոլոգիան:

Ողջ այս համակարգի դեկավարող սկզբունքը ռեսուրսների արդյունավետ կառավարման ցանկալիությունն է: Ընդ որում, բոլոր տեսակի ռեսուրսների, օրինակ՝ իշխանության նկատմամբ վստահություն-ռեսուրսը, երկրի մարդկային, ինտելեկտուալ, ընդերքի, ֆինանսական, նյութական, ֆիզիկական և այլ ռեսուրսները: Առանց անհրաժեշտության դրանց վատ-նողաբար, շրայլ կամ ոչ խնայողաբար օգտագործումը, որը նույնիսկ չի առնչվում լոյալությանը, պարտադիր որոշումների ու վճիռների կատարմանը կամ էլ բարոյականության հարցերին, հանգեցնում է դրանք տնօրինող անհատ(ներ)ի կամ կոլեկտիվ(ներ)ի գործողությունների քննադատությանը: Այսպես. ՀՀ իշխանությունները տարիներ շարունակ մեջադրվում են թալանի, վարկերը վատնելու, արտագաղթը, ուղեղների արտահոսքը «իմբանելու» (մարդկային ռեսուրսի վատնում), կամ այսօր էլ, օրինակ, Ռուսաստանին իր ունեցած պարտքը գույքով մարելու և այլնի մեջ: Բոլոր դեպքերում տնտեսության համակարգի այս «կանոնի» խաթարումը արդեն իսկ վտանգվածության վիճակ կարող է ստեղծել:

Տնտեսության համակարգի բնականոն գործառնությունը, կամ, որ նույնն է՝ անվտանգությունը, պահանջում է նաև աշխատանքային ռեսուրսների (որպես արտադրության գործոն՝ այդ բառի տնտեսական իմաստով) հստակություն կարգավորման առումով (լոյալությունների կարգավորվածության նման): Աշխատութիւններ անհատի գիտակից ներառվելը (որպես արժեք, ռեսուրս) ենթադրում է վարձման լեգիտիմին (տեղին է հիշել ՀՀ Սահմանադրության համապատասխան նորմերը աշխատանքի պայմանների մասին) պայմաններին համապատասխան արդյունավետ աշխատելու պարտավորություն: Ինչպես Ս. Վերերն է նշել, անհատի այդ պարտավորության մեջ առկա է բարոյական վճռորոշ տարր (օրինակ՝ գործը բարեխիղ կատարելը): Սակայն առանց բարոյականության

բաղադրիչի էլ օպտիմալ է համարվում ռացիոնալ տնտեսական և տեխնոլոգիական գործառնությունը, իսկ ռացիոնալության համապատասխան ստանդարտներից շեղումը խրախուսելի չէ:

Տնտեսության ոլորտում անվտանգության յուրահատուկ օբյեկտ է դանում շուկայական տնտեսության հետ համակցված ֆինանսների (ընդհանրական դրամական փոխանակությունը) շրջանառությունը հատկապես ավտոնոմ կառուցվածքների դիֆերենցացիայի պայմաններում: Փողերը և շուկան գործում են այնտեղ, որտեղ գոյություն ունի աշխատանքի բավական լայն բաժանում և նպատակահարմար է, որպեսզի տնտեսական գործունեության ոլորտը բավականին առանձնացած լինի քաղաքական, համայնքային և բարոյական ինպերատիվներից: Դակառակ դեպքում ձևավորվում է շուկա, որտեղ մենաշնորհային իրավունքներ ունեն վերահսկողություն են իրականացնում կոռումպացված, կլանացված խմբերը, կոլեկտիվները և անձինք: Սոցիետալ փոխանակության բոլոր ընդհանրացված մեխանիզմներից (ազդեցություն, իշխանություն) փողերը և շուկաները ամենից քիչն են կապված սոցիետալ հանրություն առարկայացած նորմատիվ կարգի հետ: Ավելի հստակ՝ ամենին էլ պարտադիր չէ, որ օրինակ հասարակության շրջանում ազդեցություն ունեցողը պետք է նաև ազդեցություն, իշխանություն ունենա նաև շուկայում, կամ փող ունեցողը քաղաքական իշխանություն ունենա: Իսկ պրակտիկ ռացիոնալությունը կարգավորվում է գլխավորապես ինստիտուցիոնալ նորմերով, նախևառաջ սեփականության և պայմանագրի ինստիտուտներով, որոնք այլ հիմքեր ունեն պատժամիջոցների համար¹⁵:

Հաճառոտ անդրադասներ նաև ազգ-պետության գործունեության համակարգին¹⁶: Անշուշտ, այն ենթադրում է ընդհանուր դեպքում հասարակության գործունեության համակարգը և նրա շրջանակներում պետության (մարմինների) գործունեության համակարգի բաղադրիչը: Դրանց

¹⁵ Сенчагов В.К., Экономическая безопасность: геополитика, глобализация, самосохранение и развитие (книга четвертая), Институт экономики РАН, М., ЗАО “Финстатинформ”, 2002, էջ 128:

¹⁶ Ծանօթ.- Տվյալ պարագայում խոսքը ոչ թե Տ.Պարսոնսի ընդհանուր գործունեության համակարգի մասին է, այլ բուն ազգ-պետություն համակարգի գործունեության համակարգի մասին, որի կառուցվածքային տարրերի տարանջատումը կատարված է այն ունիվերսալ քառագործառույթ սկզբունքի վրա, որն օգտագործել է նաև Տ.Պարսոնսը, և, ինչպես ինքն է նկատում, կիրառելի է ցանկացած սոցիալական համակարգի համար:

անուղղակի անդրադարձ կատարվեց հասարակության համակարգերի դիտարկման ներքո: Դասկանալի է, որ գործունեության համակարգը չդիտարկելը ազգային անվտանգությունը կվերածեր «իրի» անվտանգության, որը գրկված է գործելու հնարավորությունից և ավելի շատ կարիք է գգում պաշտպանության: Ազգ-պետություն համակարգի ազատությունը ապահովող, երաշխավորող այս համակարգն է, որ օբյեկտ-սուբյեկտ կապի շրջելիության շնորհիվ հիմք է տալիս խոսել ազգ-պետության կողմից սեփական անվտանգության ինքնա-ապահովման մասին: Ինչպես վերը նշվեց, գործունեության համակարգը ոչ միայն ազգ-պետություն համակարգի ելքն է, նրա բովանդակությունը, այլ նաև կենսական միջավայրը նրան կապող համակարգը: Այդ համակարգն է իրացնում ազգ-պետություն համակարգի ազատությունը:

Ընդհանուր դեպքում գործունեության համակարգը (լինի այն հասարակության ազգի թե պետության) բաղկացած է չորս ենթահամակարգերից սոցիալական համակարգը, մշակութային, անհատական համակարգերն ու վարքաբանական օրգանիզմը: Նշված չորս ենթահամակարգերի տարբերակումը գործառնական բնույթ ունի: Այն հիմնվում է չորս առաջնային գործառույթների վրա, որոնք հատուկ են գործունեության ցանկացած համակարգի: Դրանք են՝ կերպավերարտադրության, ինտեգրման, նպատակի ձեռքբերման և սոցիալ-ֆիզիկական շրջակայքին հարմարվելու (աղապտացիայի) գործառույթները¹⁷:

Դասարակության չորս ենթահամակարգերի ու գործունեության համակարգի դիտարկումը հնարավորություն է տալիս առանձնացնել այն արժեքները, որոնք կապված են նրանցից յուրաքանչյուրի հետ՝ իրենց մեջ ամփոփելով համապատասխան ասպեկտը: Դրանք են¹⁸:

- ինքնիշխան պետությունը,
- սահմանադրական կարգը
- հայրենասիրությունը,
- ազգային միասնությունը, համախմբվածությունը
- հայրենիքի պաշտպանությունը և ինքնանվիրումը,
- հայրենիքի տարածքային ամբողջականությունը,
- ընտանիքը,

- անհատի ազատությունները
- ժողովրդավարությունը,
- իրավունքների հավասարությունը,
- սոցիալական արդարությունը,
- կոլեկտիվիզմը (անդամությունը այլ կոլեկտիվների)
- հետևողականությունը,
- բարեխիղճ աշխատանքը,
- կրթությունը և ոգեղենությունը

3.4 Անվտանգության ընդլայնված օրակարգ

Վերը դիտարկվեցին այն արժեքները, որոնց սպառնալիքից ազատության վիճակը պետք է ապահովվի: Եվս մեկ անգամ նշենք, որ անվտանգության սահմաննան մեջ տարակարծություններ չկան միայն «անվտանգությունը սպառնացող վտանգներից ազատության վիճակ է» ձևակերպման վերաբերյալ: Սակայն անվտանգությանն առնչվող հարցերի գերակշիռ մասի համար առկա են տարածայնություններ: Դրանք կապված են ոչ միայն այս կամ այն արժեքին, այս կամ այն մակարդակին գերապատվություն տալ-չտալու, կենսագործունեության այս կամ այն ոլորտը ներառել-չներառելու, այլ նաև՝ միջազգային շրջակայքը, գլոբալ նշանակության սպառնալիքներն ու վտանգները ներառել-չներառելու հետ: Ուստի սույն շարադրանքը «Անվտանգություն ո՞ր արժեքներին» հարցադրման պատասխանի շարունակությունն է: Նշենք, որ խմբավորված տեսքով տարակարծությունները վերաբերում են անվտանգության հայեցակարգի՝

1. ընդգրկունությանը, այսինքն՝ անվտանգությունը պետք է դիտարկվի ավանդակա՞ն՝ նեղ, տեղային իմաստով, թե՝ ընդլայնված օրակարգով.

2. անվտանգության ապահովման առումով հայեցակարգում արտաքին և ներքին միջավայրերի հետ կապված առաջնությունը պետք է տրվի «անհատակա՞ն», «ազգայի՞ն», թե՝ «միջազգային» անվտանգությանը:

1945-ից մինչև 1980-ական թվականները անվտանգությունը մեկնաբանվում էր ավելի շատ որպես զուտ պետության, երկրի ռազմական անվտանգություն: Անվտանգության բաղաքականությունը բնութագրվում էր իրեն «գիտակ վերլուծաբանի կողմից այն պոտենցիալ վտանգների, փո-

¹⁷ Պարսոնս T., նշվ. աշխ., էջ 15:

¹⁸ Manilov Valery, The National Security of Russia, 1997, <http://www.ciaonet.org/>

փոխական ռիսկերի ունիվերսումի ռացիոնալ գնահատման արդյունքը, որոնց կարող էր ենթարկվել երկիրը» (էջ 6)¹⁹: Հաճանման ձևով, պոտենցիալ վտանգների բազմազանությունը միտված էն հանգեցնել զուտ արտաքին ռազմական վտանգներին, սպառնալիքներին: Ուստի, օրինաչափորեն, այդ ժամանակահատվածում առաջարված տեսակետները անվտանգության հայեցակարգում գերակայություն էն տալիս ազգային անվտանգության գաղափարին, որը սահմանվում էր ռազմական իմաստով: Անվտանգությունը նույնացվում էր երկրի, պետության ռազմական պաշտպանության հետ: Արդյունքում թե՝ տեսաբանների, և թե՝ պետական գործիչների համար հետաքրքրության հիմնական ոլորտը ռազմական ընդունակություններն էն, որոնք պետք է զարգացնեին երկրները՝ նետված մարտահրավերներին պատասխանելու համար:

Սառը պատերազմի ավարտից հետո ազգային անվտանգության այսպիսի ընկալումը լուրջ քննադատության ենթարկվեց նախ էքսունտրոն լինելու (այսինքն՝ կոնկրետ սոցիո-մշակութային հակում ունենալու), ապա նաև նեղ առումով սահմանված լինելու պատճառով: Արդյունքում կասկածի տակ առնվեց կոչտ պատճառահ-հետևանքային կապը անվտանգության ու պաշտպանության հարցերի միջև, և ոլորտի տեսաբաններն ու պրագմատիկ գործիչները սկսեցին արտահայտվել անվտանգության ընդլայնված հայեցակարգի օգտին, որը դուրս է գալիս ազգային անվտանգության այդ նեղ, տեղային սահմաններից: Որպես դրանց բխող հետևանք, ազգային անվտանգության հայեցակարգում ներառվեցին մի շարք այլ պատկերացումներ ևս:

Խնդիրն այն է, որ ներպետական և միջազգային տարածությունների սերտածնան, կենսագործունեության տարբեր ոլորտների փոխներթափանցման, դրանցում դերակատարների բազմազանության, փոխկախվածության ամի պատճառով ընդլայնվել է վտանգների ցանկը, և այն այլևս չի սահմանափակվում սուկ ռազմական հարձակման վտանգով, իսկ դրա լուծումը վեր է մեկ պետության ջանքերից:

Անվտանգության օրակարգի հետ կապված՝ Բարորի Բուզանն արտահայտվում է անվտանգության այնպիսի հայեցակետի օգտին, որը ներառում է քաղաքական, տնտեսական, սոցիետալ, շրջակա միջավայրի, ինչ-

պես նաև ռազմական ասպեկտները, և որը սահմանվում է նաև ավելի լայն միջազգային առումով: Անվտանգության նման ընկալումը, նրա կարծիքով, պետություններին հարկադրում է հրաժարվել «ծայրաստիճան ինքնարբավ անվտանգության քաղաքականությունից» և դրա փոխարեն ներգրավվել հարկանների անվտանգության շուրջ մտածելու գործընթացի մեջ (էջ 42)²⁰:

Ունանց կարծիքով ժամանակակից աշխարհին բնորոշ ինտեգրացիայի և ֆրագմենտացիայի դուալ գործընթացները հարկադրում են էլ ավելի շատ ուշադրություն դարձնել «սոցիետալ անվտանգությանը»: Նշվածի համաձայն՝ ինտեգրացման միտուններով բնութագրվող տարածաշրջաններում (ինչպիսին, օրինակ, Եվրոպան է) դրա ինտենսիվացումը խզում է ազգ-պետությունների վրա հենվող քաղաքական կարգը՝ ազգերին անպաշտպան թողնելով էլ ավելի ընդարձակ քաղաքական կառուցվածքի սահմաններում: Երկրորդ՝ ֆրագմենտացիայի միտման դեպքում (Խորհրդային Միության, Հարավսլավիայի օրինակները) այդ գործընթացները սահմանների, փոքրանասնությունների և կազմակերպող գաղափարախոսությունների նոր հիմնախնդիրներ են ստեղծում, որոնք տարածաշրջանային անկայունությունների աճի պատճառ են հանդիսանում (էջ 196)²¹: Թվարկվածները այդ մոտեցման կողմնակիցներին հանգեցրել են այն մտքին, որ անվտանգության վերլուծության համար ուշադրություն պետք է լինեն ավելի շատ էքս-ազգային խմբերը, քան թե պետությունները:

Այլ մեկնաբանություններ պնդում են, որ ազգային անվտանգության և միջազգային անվտանգության վրա ուշադրության կենտրոնացումը աննպատակահարմար է 1990-ականներից քաղանթային գլոբալ հասարակության ի հայտ գալու արդյունքում: «Սոցիետալ անվտանգության» տեսաբանների նմանությանը, նրանք ևս վկայակոչում են ազգ-պետության ֆրագմենտացիան, սակայն փաստարկում են, որ ավելի մեծ ուշադրություն պետք է տրվի ոչ թե հասարակությանը՝ էքս-ազգային մակարդակում, այլ գլոբալ հասարակությանը: Այս տեսակետի կողմնակիցները

²⁰ Buzan B., People's, States and Fear, London: Harvester, 1983, էջ 214:

²¹ Weaver O., Buzan B. Kelstrup M., Lemaitre P. Identity, Migration and the New Security Agenda in Europe, London: Pinter, 1993:

փաստարկում են նաև, որ 20-րդ դարի վերջին հատկանշական ամենակարևոր միտուններից մեկը գլոբալացման ընդգրկում գործընթացն է: Նրանք ընդունում են, որ այդ գործընթացը բերում է նոր ռիսկեր և վտանգներ՝ ներառելով այնպիսի հանգամանքների հետ ասոցացված ռիսկերը, ինչպիսիք են գլոբալ արժութային շուկայի փլուզումը, գլոբալ ջերմացումը և միջուկային պատահարների վտանգները: Անվտանգության ուղղված այս սպառնալիքները համանուրակային նակարդակում դիտվում են որպես ազգ-պետության վերահսկողությունից մեծապես հեռու սպառնալիքներ: Նրանք կարծում են, որ միայն գլոբալ հանրութիւն զարգացումը կարող է հաղթահարել դրանք աղեկված կերպով:

Այսօր առավել, քան անցյալում էր, պետությունների և ժողովուրդների անվտանգությունը սերտորեն կապված է ողջ գլոբալ տարածության, նրանում գործառնող սուբյեկտների հետ: Պատճառն այն է, որ գլոբալ անվտանգության դաշտը էական կառուցվածքային փոփոխությունների է ենթարկվել: Ի հայտ է եկել տարբեր մակարդակների ու ոլորտների դերակատարների բազմազանություն, աճել է նրանց փոխկախվածությունը, ներպետական ու գլոբալ տարածությունները դարձել են փոխներթափանցված, պետության ներքին ու արտաքին միջավայրերի միջև սահմանները ենթարկվում են «էրողիայի», գլոբալացման գործընթացների արդյունքում պետությունները գիշում են իրենց ինքնիշխանությունից, ի հայտ են եկել վտանգի նոր մակարդակներ ու ոլորտներ:

Նշված փոխակերպումները հանգեցրել են գլոբալացման վերածող փոխկախվածության այնպիսի մակարդակի, երբ ավանդական դերակատար պետությունների հետ մեկտեղ համաշխարհային գործերում ներգրավվելու հավակնություններ է ցուցաբերում նորագույն դերակատարների մի ողջ բազմազանություն: Փոխկախվածության հայտնի տեսաբաններ Զ.Նայը և Ռ.Կենիեյը դեռևս քառորդ դար առաջ կանխատեսեցին. «Այժմ մենք մուտք ենք գործում նոր դարաշրջան: Դին միջազգային համակարգերը փլում են, ինն կարգախոսները ոչ ուսուցողական են, ինն լուծումները՝ ոչ օգտակար: Աշխարհը դարձել է փոխկապված տնտեսական, հաղորդակցական և հումանիտար նկրտումներում»: Իսկ այդ ամենը իր հետ բերել է միջազգային անվտանգությանը նետված նոր մարտահրավերներ ու նոր սպառնալիքներ:

Նախորդած կոշտ երկրեւ կառուցվածքի անկման արդյունքում արձա-

նագրված փոփոխությունների շնորհիվ էրնո-ազգային մակարդակում միջազգային քաղաքականության ավանդական դերակատարները՝ պետությունները, մասնակցում են ոչ միայն «բարձր» (անվտանգության, պատերազմի և խաղաղության հարցեր), այլ նաև «ստորին» արտաքին քաղաքականությանը (մշակութային փոխանակություններ, գիտական և պրոֆեսիոնալ կոնտակտներ): Այդ ոլորտներ են ներխուժում նաև ոչ ավանդական դերակատարները սուբազգային (ֆեդերատիվ պետություններում պրովինցիաներ, նահանգներ, հանրապետություններ, հողեր և այլն), տրանսազգային (ձեռնարկություններ, ֆիրմաներ, բանկեր և կորպորացիաներ), վերազգային (օրինակ՝ Եվրոպական Միությունը) և միջազգային (ՍԱՏՕ և այլ) մակարդակներից: Զուգահեռաբար անվտանգության նախկին միջազգային ինստիտուտները (ՍԱՏՕ, ՄԱԿ) շատ առումներով դեռևս շարունակում են չհարմարված մնալ նոր իրողություններին և չեն վերագրել իրենց ամբողջական դերակատարումը նոր աշխարհակարգում: Իրենց արդյունավետություններն են կորցրել նախկինում անվտանգության ապահովմանը ծառայող բազում զայնան ու հակաշռուման մեխանիզմներ, որոնցից է, օրինակ, վետոյի իրավունքը:

Փոխկախվածության գործընթացները փորձում են մաքրել ներքինի և արտաքինի, պետական և հասարակական շահերի միջև սահմանները՝ դրանով իսկ ներքին և արտաքին քաղաքականության ոլորտները դարձնելով սերտորեն կապված: Միանգամայն օրինաչափ կերպով վերջինս համարժեք փոփոխություններ է բերում նաև անվտանգության ոլորտում: Այս համատեքստում վկայակոչման է արժանի 1999թ. Ստամբուլում ստորագրված Եվրոպական անվտանգության խարտիայի հետևյալ միտքը. «Էլ ավելի ակնհայտ է դարձել, որ մեր անվտանգության սպառնալիքները կարող են լինել ինչպես պետությունների միջև, այնպես էլ պետությունների ներսում կոնֆլիկտների հետևանքը»: Իսկ անվտանգության ավանդական մեկնաբանությունը շատ առումներով սպառել է այն սկզբունքային նշանակությունը, որ նա վայորոք ունեցել է կառավարությունների համար:

Վերոհիշյալ փոխակերպումների պատճառով անվտանգության (և հատկապես միջազգային) ժամանակակից մարտահրավերների ու սպառնալիքների մեջ նաև իրենց լուծման համար պահանջում են նոր նախւառաջ ոչ ռազմական մոտեցումներ: Անշուշտ չպետք է եղրակացնել,

որ միջաետական ռազմական կոնֆլիկտների սպառնալիքները անհետացել են կամ այնքան են թուլացել, որ չարժե դրանց ուշադրություն դարձնել: Խոսքը վերաբերում է տնտեսության և շրջակա միջավայրի հիմնախնդիրներին, ինչպես նաև ի հայտ եկած մի շարք հակասություններից ելքի իրավական ճանապարհների համատեղ փնտրտուքին: Մասնավորապես, հակասություններ են առաջացել խմբային ինքնանույնացման (ինքնորշման) արդյունքում դեպի ինքնակառավարում ձգտման ու պետությունների ամբողջականության պահպանման միջև, սեպարատիզմի աճի և սահմանների ամխախտության միջև, սուրագգային գոյացությունների, տարածաշրջանների՝ դեպի ինքնիշխանություն ձգտումների և ազգ-պետությունների ինքնիշխանության (որի մասն են կազմում նրանք) միջև:

Զանգվածային կոմունիկացիաների, ինտերնետի, գլոբալացվող տնտեսական գործընթացների, արագընթաց տրանսպորտային միջոցների, տրանսազգային կազմակերպությունների, տրանսազգային բանկերի գործունեության լայն բացվածքը, տրանսահմանային ֆինանսական հոսքերի ու լիբերալ դեմոկրատիայի իդեալների տարածման այս ժամանակաշրջանում ինքնիշխանությունը այլ կերպ է դիտարկվում, քան Վեստֆալյան միջաետական համակարգի ժամանակաշրջանում: Օբյեկտիվ և սուրյեկտիվ նկրտումներով փորձ է արվում ներարկել, որ պետությունն այլս իր սեփական տարածքում չի վերահսկում ամեն ինչ, որ շատ հաճախ հարցականի տակ է առնվում նաև լեզվային բռնության նրա մեջաշնորհը: Անվտանգության գծով հեղինակներից շատերը, սակայն, պնդում են, որ դա դեռևս իհմք չի տալիս եզրահանգելու, որ պետությունն ու նրա ինքնիշխանությունը ամբողջությամբ սպառել են կամ մոտ ապագայում կսպառեն իրենց նշանակությունը:

Վերը եթեված փոխակերպումների, ստեղծված հակասությունների բացասական հետևանքներից, պետությունների ու նրանց ինքնիշխանության թուլացումից անհանգստացած հեղինակները մեղադրում են համաշխարհային մասշտարում գործունեություն իրականացնող և կոսմոպոլիտ կառավարող թիմ ունեցող գլոբալ ծերնարկություններին, որ վերջիններս ձգտում են օգուտ քաղել բազում շուկաներում իրենց ներկայությունից և տարաբնույթ արտադրական օբյեկտների նկատմամբ իրենց թուլատրված լինելուց: Դա իհմք է տալիս նրանց առավել և պնդելու, որ չնայած գլոբալացման գործընթացը ամբողջությամբ վերցրած թափ է հավա-

քում, այդուհանդեռձ, ազգային և տարածաշրջանային տարածությունները պահպանում են իրենց նշանակությունը, որ ազգային կառավարությունները չեն կորցրել տնտեսական և սոցիալական քաղաքականության ոլորտներում իրենց ընդունակությունները՝ նույնիսկ եթե լիբերալ միջավայրը նրանց որոշակի բարեփոխումներ է պարտադրում, որ պետությունները տարբեր միջազգային ինստանցիաներում պետք է կանոններ սահմանեն, որոնց օգնությամբ կարելի լինի վերահսկել տրանսահմանային գործունեությունը (դա մասնավորապես վերաբերում է ապրանքների և ծառայությունների փոխանակությանը (Արևորի համաշխարհային կազմակերպության ենթադրած ռեժիմ) և ֆինանսական ոլորտին):

Ուստի, այդ հեղինակների կարծիքով՝ այսօր իմաստ ունի ինքնիշխանությունը փոխականվածության հետ միմիայն դիալեկտիկական կապի մեջ դիտարկելը: Նրանց միջև հակասությունները (ուեալ թե պոտենցիալ) ինքնիշխանությանը հաղորդում են վերջինիս բնորոշ իմաստը: «Պահպանել ինքնիշխանությունը՝ նշանակում է ունենալ սեփական նպատակները հետապնդելու կարողություն՝ չնայած փոխականվածության ճնշմանը կամ էլ՝ օգտագործելով այն: Այդ հեղինակները փաստարկում են, որ ներկայիս պայմաններում աղքատ և թույլ երկրորդ ի վիճակի են «ազգայնացնել» ՍԱԿ-ը, իսկ նացիոնալիզմի զարթոնքը ստիպում է կասկածել, որ ազգ-պետությունները աստիճանաբար տեղի են տալիս: Միաժամանակ փաստարկում են, որ ոչ միայն դեպի պետական ինքնիշխանության ավանդական դերի անկումը, այլև նրան հակադիր միտունը գոյություն ունի՝ դեպի նորանկախ պետությունների ստեղծումը, որոնք խանդուտ կերպով պաշտպանում են իրենց ինքնիշխանությունը (ինչպես նրա ներքին, այնպես էլ արտաքին հատկանիշները): Իսկ միջազգային անվտանգության ոլորտում ներկայում առկա բազում հակասությունները, կոլիզիաները պայմանավորված են այդ փոփոխությունների բնույթը չհասկանալով կամ դրանք սեփական քաղաքական նպատակներով օգտագործելու փորձերով:

Ակնհայտ է դարձել, որ անվտանգությանը սպառնացնող վտանգները միայն ռազմական բնույթ չունեն: Դրանք կարող են լինել քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական: Իսկ որ այսօր այդ ոլորտներից ցանկացածում ի հայտ եկող վտանգը արագորեն և ուղղակիորեն ներպետական տարածությունից կարող է փոխակերպվել, անցնել դեպի միջազ-

գային համակարգ (միջազետական հարաբերություններ), և հակառակը, այլևս ոչ մեկի համար կասկած չի հարուցում:

Այս ամենը հարկադրեցին նեղ իմաստով սահմանվող ու «ազգայինին» գերակայություն տվող անվտանգության հայեցակարգերին ներառել՝

1. միջազգային անվտանգության, գլոբալ հասարակության և կենսագործունեության տարբեր ոլորտների ու մակարդակների անվտանգության պատկերացումները.

2. անհատների, խմբերի (նաև՝ էթնիկական) անվտանգության հետ կապված խնդիրները, դրանց ապահովման՝ ռազմականից մինչև խաղաղ եղանակները:

Սակայն առ այսօր հարց է մնում, թե արդյոք ինքնին վտանգավոր չե՞ն այդօրինակ «բաց» անվտանգության հայեցակարգերը, արդյոք պետությունները միջազգային ու գլոբալ առումներով հակված են դեպի համագործակցությունը, արդյոք անվտանգության ազգային ու միջազգային ասպեկտները արդյունավետ կերպով համատեղելի⁹ են մեկ հայեցակարգում, և ներդաշնակվելու դեպքում արդյոք միջազգային համակարգ-պետություն սահմանների այլևս բափանցիկության պատճառով նրանցից որևէ մեկի ներսում ի հայտ եկող վտանգը կործանարար չի¹⁰ լինի ողջ համակարգի կամ մյուսի համար:

4) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ո՞Ր ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻՑ, ՎՏԱՆԳՆԵՐԻՑ

Անվտանգության օբյեկտի մասին խոսելիս նշվեց, որ օբյեկտների երկրորդ խումբը կազմում են վտանգները, որոնք պետք է կառավարվեն, չեզոքացվեն: Դարձ է նկատել, որ կենսական միջավայրում ներքին-արտաքին ջրաժամկետ պայմանավորված՝ դրանք կարող են լինել համապատասխանաբար ներքին վտանգներ և արտաքին վտանգներ: Այսինքն՝ նման դասակարգումը պայմանավորված է նրանով, թե ֆիզիկական ու սոցիալական տարածություններում ազգ-պետություն համակարգի սահմանների նկատմամբ ո՞ր մասում են գտնվում վտանգները: Ինչպես նախորդ բաժնում նշվեց, ներքին-արտաքին սահմանագծի «էրողիայի», միջազգային մակարդակում փոխկախվածության աճի հետևանքով ներքին, ներպետական վտանգները բավական հեշտորեն անցում են կատարում

միջազգային մակարդակ, և հակառակը:

Ազգ-պետություն համակարգի դիտարկման ժամանակ գուգահեռաբար խոսվեց այն ներքին խնդիրների մասին, որոնք կարող են համակարգի համար վերաճել վտանգի, ինչպես նաև նրա մասին, թե ինչը կարող է վերաճել վտանգվածության, ինչը կարող է հայտնվել վտանգված վիճակում: «Անվտանգություն ո՞ր սպառնալիքներից, վտանգներից» հարցադրմանը պատասխանելու համար վտանգները կդասակարգվեն ըստ կենսագործունեության ոլորտների, քանզի ըստ այդմ էլ առանձնանում են ազգային անվտանգության բաղադրամասերը: Վտանգների յուրաքանչյուր խմբի դիտարկման ժամանակ առանձին կանոնադաշտանաբ ազգ-պետություն համակարգի սոցիալական ու ֆիզիկական բաղկացուցիչներին սպառնացող վտանգներին:

Ազգային անվտանգության բաղադրամասերը

4.1 Քաղաքական վտանգներ և քաղաքական անվտանգություն

Առավել ցցունը եղել և մնուն են քաղաքական վտանգները: Քաղաքական են համարվում այն ներքին ու արտաքին վտանգները, որոնց թիրախը քաղաքական համակարգն է (նրա արժեքները, ինստիտուտները, նորմերը), և/կամ բխուն են այլ քաղաքական համակարգ(եր)ից: Այս վտանգներին համապատասխան էլ առանձնանում է քաղաքական անվտանգության բաղադրամասը, որը կոչված է ապահովելու քաղաքական համակարգի արմատական արժեքներին, ինստիտուտներին, նորմերին սպառնացող վտանգներից ազատության վիճակը: Ինչպես արդեն վերը նշվեց, որպես քաղաքական համակարգի ինքնուրույն և կարևորագույն կառույց՝ այս շրջանակներուն առանձնանում է պետական անվտանգության բաղադրամասը: Նրա խնդիրն է ապահովել պետական իշխանության ինստիտուտների, մարմինների անվտանգությունը:

Քաղաքական վտանգների խումբը բազմաբնույթ է, և հնարավոր չէ դրանք ամբողջությամբ թվարկել: Ինչպես որ ընդհանուր է վտանգների յուրաքանչյուր խմբի համար, դրանք ևս կարող են սպառնալ քաղաքական համակարգի, պետության, նրանց կենսական միջավայրի ու գործունեության համակարգի ինչպես ֆիզիկական (օրինակ՝ երկիր տարածքը՝ օդային, ցամաքային, ծովային տարածությանը), այնպես էլ սոցիալական (օրինակ գաղափարախոսական, սահմանադրական-քաղաքական կարգին, կառավարման համակարգին) քաղադրիչներին: Այս վերջին քաղադրիչի համար, օրինակ, հաճախ են խոսում դեմոկրատիային, լիբերալիզմին սպառնացող վտանգների մասին: Լիբերալ-դեմոկրատիան ՀՀ-ում նույնպես ամրագրված, ինստիտուցիոնալիզացված քաղաքական ռեժիմ ու արժեքային համակարգ է, ուստի այդ արժեքային համակարգին համապատասխանող սահմանադրական-քաղաքական կարգի ոչ սահմանադրական ուղիներով (քաղաքական ահարեւէզություն, հեղափոխություն-հակահեղափոխություն, պալատական հեղաշրջում և այլն) տապալումը կամ դրա սպառնալիքը քաղաքական անվտանգության խնդիր է: Նույնը կառավարման համակարգի (ՀՀ պարագայում ժողովրդակիշխանությունը՝ իրու կառավարման ձև, կիսանախագահական կառավարումը՝ իրու պետական

կառավարման ձև), պետության կառուցվածքի (մեր պարագայում ունիտար) ձևի համար, որոնք կարող են վտանգվել ժողովրդի իշխանության յուրացման, կիսանախագահական կառավարման սկզբունքների խախտման կամ այդ կառավարումն ընդհանրապես վերացնելու ու այլ ձևերով: Որպես անօտարելի կատեգորիաներ, մարդու քաղաքական ու քաղաքական իրավունքները ևս քաղաքական անվտանգության ապահովման խնդիրներ են:

Դաղորդակցման համակարգը, լինելով քաղաքական համակարգի ենթահամակարգ, անհրաժեշտ է դարձնում հաղորդակցման համակարգերի անվտանգությունն ապահովող ինֆորմացիոն անվտանգությունը զատել քաղաքական անվտանգության շրջանակներում: Ինֆորմացիոն տարածությանը սպառնացող վտանգները կարող են միաժամանակ ազդել և տնտեսական, և հանրային, և մշակութային, և պետական անվտանգությունների վրա, երբ ինֆորմացիոն խողովակներով «փոխանցվում են» համապատասխան տիպի սպառնալիքներ ու վտանգներ:

Կառավարման ու գաղափարախոսական համակարգերը հզոր ազդեցություն ունեն ոչ միայն երկրի ներքին կայունության, այլ նաև միջազգային անվտանգության վրա: Այդ օբյեկտիվ, ինչպես նաև սուբյեկտիվ այլ նկատառումներով ու շահերով պայմանավորված՝ գլոբալ մակարդակում հակադեմոկրատական ռեժիմներն ու գաղափարախոսությունները, օրինակ՝ նացիոնալիզմը, իսլամական ֆունդամենտալիզմը, հակադեմոկրատական (ավտորիտար և տոտալիտար) ռեժիմները դիտարկվում են իրեն վտանգներ:

Գլոբալ մակարդակում դրանք վտանգների խնդիրն վերագրելու օբյեկտիվ պատճառ է փաստարկվում այն, որ պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ ավտորիտար կառավարում ունեցող երկրները հաճախ են արտաքին արկածախնդրություններ հետապնդում ներքին հիմնախնդիրներից հասարակության ուշադրությունը շեղելու նկատառումնով: Այդ համակարգերը հակված են արտաքին թշնամիներ հոչակել, որի արդյունքում, բնականաբար, լարվածություն է ստեղծվում միջազգային համակարգում, միջազգային հարաբերություններում: Այդորինակ լարվածության պիկեր այսօր էլ հաճախ են դիտվում Իրան-ԱՄՆ, Չինաստան-ԱՄՆ, Իրաք-ԱՄՆ և այլ միջազգային հարաբերություններում: Կամ հակադեմոկրատական ռեժիմների պայմանավորած վտանգի օրինակ է նշվում

Երկրեւո կայունության ու սառը պատերազմի բերած գաղափարական մեջ կոնֆլիկտը:

Ազգ-պետություն համակարգի միաժամանակ և սոցիալական, և ֆիզիկական բաղադրիչներին առնչվող քաղաքական վտանգների մեկ այլ խումբ են կազմում պետությունների ֆրագմենտացիային հանգեցնող միտումները, որոնք առաջ են քաշում անվտանգության քազմաշափ հիմնախնդիրներ: Վառ օրինակներ են Խորհրդային Միության ու Հարավսկավիայի ապահնութեագրացումները, որոնք հանգեցրին տարաբնութ կոնֆլիկտների կրոնական, էթնիկական, տարածքային վեճերի հիմքի վրա: Հայաստանի և Ադրբեյջանի դեպքում այն ռազմականացված կոնֆլիկտի տեղիք տվեց՝ կապված Ղարաբաղի ինքնորոշման հետ: Ըստ բազում վերլուծությունների՝ ֆրագմենտացիայի միտումները կարող են մեծ հիմնախնդիրներ ստեղծել, եթե ԽՍՀՄ համանանությամբ Չինաստանի կոնունիստական կուսակցությունը կամ Իրանի իսլամական ղեկավարությունը կորցնեն իրենց մնոնապոլ վերահսկողությունը այդ երկրներում:

Կրկին համակարգի և սոցիալական, և ֆիզիկական-տարածքային բաղադրիչին ուղղված վտանգների խումբ են կազմում ռազմական վտանգները (պատերազմի վտանգը, միջուկային գենքի կամ զանգվածային ռչնչացման գենքի կիրառման վտանգը և այլն): Այդպիսին է Ադրբեյջանի կողմից Հայաստանին պարտադրված պատերազմը: Իրենց ունեցած կարևորության պատճառով հաճախ են ռազմական վտանգները դիտարկում իրու ինքնուրույն խումբ, որի պատճառով էլ ազգային անվտանգության մեջ առանձնացնում են ռազմական անվտանգության բաղադրամասը:

4.2 Տնտեսական վտանգներ և տնտեսական անվտանգություն

Մեկ այլ կարևոր խումբ են կազմում տնտեսական վտանգները: Տնտեսական են համարվում ներքին ու արտաքին այն վտանգները, որոնց թիրախը տնտեսական համակարգն է և/կամ բխում են այլ տնտեսական համակարգ(եր)ից: Ազգային անվտանգության բաղադրամասը, որը կոչված է ապահովելու տնտեսական համակարգի (արտեքների, ինստիտուտների) սպառնալիքներից ազատության վիճակը, տնտեսական անվտանգությունն է:

Այս խմբի շրջանակներում ազգ-պետություն համակարգի սոցիալական բաղադրիչի հետ կապված ու տնտեսության վրա ազդող սպառնալիքներ են բնակչության ամը կամ հակառակը՝ նվազումը, արտագաղթը, որոնք հանգեցնում են ընչաքաղցության, զրկանքների ու աղքատության տեսքով արտահայտվող վտանգների: Այս վտանգների կառավարման իրավասությունը, որպես կանոն, տնտեսական, սոցիալական քաղաքականություն իրականացնող գերատեսչություններին է, որոնց խնդիրն է բնակչության տարրեր խնդերի, շերտերի, խավերի ներկայացուցիչների, և ընդհանրապես քաղաքացիների սոցիալական-տնտեսական իրավունքների ապահովածությունը, սոցիալական ապահովությունը:

Տնտեսական վտանգներ են համարվում նաև անեգալ բիզնեսը, մաֆիան, տնտեսվարող կլանները, կոռուպցիան, բնորարիզնեսը, արտադրության թափոնների առևտուրը, զանգվածային ռչնչացման գենքի ստեղծմանը նպաստող տեխնոլոգիաների վաճառքը և այլն, որոնք արդեն իսկ ոչ միայն վտանգի ներքին աղբյուրներ են, այլ նաև կարող են լարվածություններ ստեղծել պետությունների միջև՝ դառնալ քաղաքական վտանգներ: Հաճախ միջազգային հարաբերություններին սպառնացող վտանգներ են դառնում նաև շուկաների մատչելության շուրջ ծագող հիմնախնդիրները:

Ներկա ժամանակաշրջանում համակարգիչների, բարձր տեխնոլոգիաների կիրառումը, ֆինանսական շուկաների գլոբալացումը հանգեցրել են ապրանքա-դրամային շրջանառության արագացման, կապիտալի ներհոսքի մասշտաբների ավելացման: Նպաստելով տնտեսական աճին՝ այդ գործընթացները միաժամանակ մեծացնում են ռիսկի գործնների նշանակությունը և ընդլայնում են վտանգի գոտին ոչ միայն բիզնեսում, այլ նաև պետության գործառնության մեջ: Մոլորակի մի տարածաշրջանում ճգնաժամի դեպքում այն արագորեն տեղափոխվում է մյուս տարածաշրջանները: Ուստի տնտեսական անվտանգության խնդիրը պետք է լինի հասարակության տնտեսական համակարգի ապահովագրվածությունը այդորինակ վտանգներից:

Ազգ-պետություն համակարգի ֆիզիկական բաղադրիչներին (կենսական միջավայրի) սպառնացող վտանգներ են շրջակա միջավայրի ռեսուրսների (տնտեսական) անբավարարության հետ կապված կոնֆլիկտավանգները, որոնք ծագում են բնական ռեսուրսների (սահմանամերձ վի-

ճարկելի գյուղատնտեսական հողեր, ընդերքի, ջրային, անտառային, նավթի, զագի և այլ ռեսուրսներ) յուրացման շուրջ: Մեր տարածաշրջանում դրա վառ օրինակը կասպիական ավագանի ու նրա նավթա-գազաբեր հանքավայրերի հետ կապված վեճն է ափամերձ պետությունների միջև: Այս առումով տարբեր ինտենսիվությամբ բազմակողմ միջպետական լարվածություններ (Իրան-Ռուսաստան, Իրան-Ադրբեյջան, Ադրբեյջան-Ռուսաստան և այլն) պարբերաբար ի հայտ են գալիս: Կամ՝ կրկին մեր տարածաշրջանում, Բաքու-Զեյխան նավթամուղի երթուղու կառուցման հետ կապված վեճերը գերտերությունների, տարածաշրջանի պետությունների միջև:

Տնտեսական վտանգների խմբում ինքնուրույն խումբ են կազմում կենսական միջավայրի աղտոտվածությունը, բնական ռեսուրսների անխնայողաբար օգտագործումը և այլն, որոնք կրում են էկոլոգիական վտանգներ անվանումը: Վտանգների այս խմբի կառավարման խնդիրներն է լուծում էկոլոգիական անվտանգությունը տնտեսական անվտանգության շրջանակներում:

4.3 Սոցիալական վտանգներ և հանրային անվտանգություն

Սոցիալական վտանգներ են համարվում այն ներքին ու արտաքին վտանգները, որոնք սպառնում են ազգ-պետություն համակարգի սոցիալական և ֆիզիկական քաղաքիչին (բոլոր մակարդակներում՝ հանրույթ, կոլեկտիվներ-խմբեր և անհատներ), սոցիալական և ֆիզիկական-աշխարհագրական միջավայրին ու տարածությանը, սոցիալական (նորմատիվ) ու հանրային կարգին:

Հանրային կարգին, հասարակության կյանքի նորմատիվային կազմակերպմանը սպառնացող վտանգներն արտահայտվում են հանցագործությունների, կազմակերպված հանցավորության (խմբերի՝ հանցավոր խմբավորումներ, ավագակախմբեր և այլն), սոցիալական ենթատեքստով ահաբեկչությունների և այլ տեսքով, որոնք ոստիկանական, հետախուզական ծառայությունների, դատա-իրավական համակարգի իրավասության ներքո գտնվող ու կառավարմանը ենթակա վտանգներ են:

Ազգ-պետություն համակարգի քաղաքական, տնտեսական ու հանրային անվտանգության վրա եապես ազդող վտանգների մի խումբ առնչվում

է դեմոգրաֆիական լուրջ փոփոխություններին, երբ հասարակության մեջ խախտվում է անվտանգ հանարվող հաշվեկշիռը տարիքա-սեռային, եթնիկական տարբեր խմբերի միջև: Վտանգների այս խմբի կապը քաղաքական անվտանգության հետ փաստարկելի է մի շարք օրինակներով: Մասնավորապես, երբ քաղաքական իշխանությունը ձևավորվի ոչ թե մինչ այդ մեծամասնություն կազմող եթնիկ միջուկի, այլ մեկ այլ եթնիկական խմբի կողմից: Կամ՝ երբ զորակոչային տարիքի արական սեռի ներկայացուցիչների թիվը ռազմական անվտանգության համար բավարար չափանիշներից ցածր լինի: Սոցիալական ու տնտեսական անվտանգության հետ նրա կապը ևս փաստարկելի է: Մասնավորապես, երբ արական սեռի և իգական սեռի ներկայացուցիչների հաշվեկշիռի խախտումը ազդի վերարտադրության տեմպի վրա: Կամ՝ տարբեր տարիքային խմբերի հաշվեկշիռի էական խախտումը կարող է ազդել զբաղվածության, աշխատուժի, արտադրության, սոցիալական ապահովության և այլնի վրա: Սա է պատճառը, որ ազգային անվտանգության այս բաղադրիչի շրջանակներում առանձնանում է դեմոգրաֆիական անվտանգությունը:

Երկրի ներսում տնտեսական ճնշումներն իրենց հերթին կարող են խրախուսել սոցիալական լարվածությունները եթնիկ խմբերի, սոցիալական դասերի ու խավերի միջև, ինչը ևս կարող է վտանգել հանրային կարգը, սահմանադրական-քաղաքական կարգը, մշակութային անվտանգությունը, ինչպես նաև եթնիկան խտրականությունների դեպքում իր ազդեցությունը թողնել միջպետական հարաբերությունների վրա: Վառ օրինակ է Վրաստանում ջավախահայերի նկատմամբ այսօր դրսուրվող խտրականությունը, որը ոչ միայն առնչվում է Վրաստանի քաղաքական, տնտեսական անվտանգությանը, այլ նաև արտաքին միջամտության ու ներքին հոլովումների պատճառով կարող է սպառնալ տարածաշրջանային անվտանգությանը: Ադրբեյջանի համար այդորինակ վտանգի վերաճեց Ղարաբաղն ու նրա բնակչության հիմնախնդիրների չկարգավորվածությունը:

Հանրային անվտանգության համար վտանգ են նաև տվյալ հասարակության մեջ ներփակման բնույթ (երբ վերջիններս չեն գործում առկա նորմատիվ կարգի շրջանակներում) ստացող միզրացիոն խմբերը, տվյալ երկրում այլ ազգերի սփյուռքները, որոնց պայմանավորած վտանգները, բացի հանրային կարգին սպառնալուց, կարող են ազդել և տնտեսական, և քաղաքական, և մշակութային անվտանգության, և միջպետական հա-

րաբերությունների վրա: Այս առումով առաջին պլանում միզրացիայի հետ ասոցացված այնպիսի ռիսկերն են, ինչպիսիք են խմբային ինքնության կոնֆլիկտները, անլեզակ միզրացիոն խմբերն ու նրանց հետ ասոցացված կազմակերպված հանցավորությունը:

Հանրային բնականոն ու կազմակերպված կյանքին, նրա ֆիզիկական-աշխարհագրական ու սոցիալական տարածական իմբին, միջավայրին սպառնացող վտանգների խումբ են կազմում բնակելի շինություններին, շենքերին արդյունաբերական օբյեկտներին, ձեռնարկություններին (ԱԵԿ, ՁԵԿ, քիմիական արդյունաբերություն) սպառնացող բնական և տեխնա-ծին վթարները, աղետները: Բոլոր տեսակի շինությունների, շենքերի անվ-տանգությունը ենթադրում է դրանց դիմացկունության ապահովմանն ուղղված մշտական խնամք՝ տնօրինողների ու օգտագործողների անվ-տանգության ապահովման նկատառումով: Դա վերաբերում է նաև, օրի-նակ, կենտրոնական, տարածքային ու տեղական իշխանության մարմին-ների վարչական շենքերին:

Բնական ծագում ունեցող վտանգներից են երկրաշարժերը, ջրհեղեղ-ները, հրդեհները, տարերային այլ աղետները, որոնք պահանջում են այդ օբյեկտների, բնակչության սեյսմիկ պաշտպանություն, շենքերի ու շինու-թյունների սեյսմակայունություն, արտակարգ իրավիճակներում շենքերի ու մարդկանց պաշտպանություն (վերջիններիս համար՝ կացարանով, պարենով, սննդով, դեղորայքով և այլն):

4.4 Մշակութային վտանգներ և մշակութային անվտանգություն

Մշակութային անվտանգությունը ազգային անվտանգության չորրորդ խոչոր բաղադրամասն է, որն առնչվում է մշակութային համակարգին (լայն իմաստով): Անվտանգության այս բաղադրամասին առնչվող վտանգներն սպառնում են սոցիալական տարածության մշակութային «որակական բովանդակությանը», ազգ-պետություն համակարգի սոցիա-լական բաղադրիչների արժեքաստեղծ, կերպաստեղծ գործունեությանը և վերջինիս արդյունքում կենսագործունեության ոլորտներում ստեղծված արժեքներին, նմուշներին: Այդպիսիք են ազգային ավանդույթները, սովորույթները, արարչագործության արդյունքները (մշակութային, պատմա-կան հուշարձաններ, նաև՝ ներկայումս ստեղծված կոթողներ, թանգարան-

ներ և այլն), կրթօջախները և այլն:

Նշվածներին համապատասխան էլ առանձնանում են բուն մշակութա-յին, հոգևոր, կրթական անվտանգությունները: Իսկ դրանց սպառնացող վտանգներն էլ կազմում են մշակութային վտանգները: Այդպիսիներից հարկ է թվարկել աղանդավորական շարժումներն ու խմբավորումները, մշակութային արժեքների ոչնչացման վտանգները, հասարակության հոգևոր անկումն ու սնանկացումը և այլն:

Սրանք էին անվտանգության հիմնական բաղադրամասներն ու ենթարա-ղադրամասները: Հարկ է նշել, որ կենսագործունեության այդ ոլորտներից յուրաքանչյուրին առավել բնորոշ վտանգները կարող են դրսևորվել գլո-բալ, տարածաշրջանային և ազգային մակարդակներում: Դա է պատճա-ռը, որ տարանջատվում են տարածաշրջանային, գլոբալ անվտանգու-թյան բաղադրամասները, և այդ մակարդակներում, միջավայրերում ազգ-պետությանն առնչվող խնդիրները այս կամ այն կերպ ներառվում են ազ-գային անվտանգության մեջ: Սա՝ ազգային անվտանգության տեսանկյու-նից:

Մեկ այլ կողմից տարածաշրջանային և միջազգային, գլոբալ անվտան-գությունները այդ մակարդակների տեսանկյունից հանդես են գալիս որ-պես ինքնուրույն պրոբլեմատիկաներ, որտեղ միահյուսվում են ռազմա-քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային անվտանգու-թյան բաղադրամասները:

Շարադրվածից ակնհայտ է, որ վտանգները, բացի գաղթող բնույթ ու-նենալուց (ներպետական տարածությունից միջազգային տարածություն, միջապետական հարաբերություններ և հակառակը, ներպետական տարա-ծությունում մի մակարդակից մյուսը, մի համակարգից մյուսը, մի կենսա-գործունեության ոլորտից մյուսը), նաև միմյանց և ազգ-պետություն կա-ռուցի բաղադրիչների հետ փոխկապված բարդ համակարգ են կազմում: Այդ կապի բնույթը որոշվում է տվյալ համակարգի՝ ազգ-պետության կազ-մակերպվածության, կառուցվածքավորման բնույթով: Կուանգների նման համակարգային բնույթը ևս մեկ անգամ փաստում է անվտանգությունը համակարգային սկզբունքի վրա կառուցելու անհրաժեշտությունը:

Ֆիշտ այնպես, ինչպես անվտանգության ապահովման օբյեկտներն ու-նեին տարածական, էներգետիկ և ժամանակային չափումներ՝ ֆիզիկա-կան և ոչֆիզիկական, սոցիալական բաղադրիչներով, այնպես էլ վտանգ-

Աերն ունեն նույնատիպ չափումներ: Ուստի դրանց գնահատման ու հաշվառման դեպքում անհրաժեշտ է այդ չափումների իրատեսական հաշվառումը: Մասնավորապես, անհրաժեշտ է պարզել, թե՝

- ու՞ն են առաջին հերթին և վերջնահաշվում սպառնում կենսական միջավայրի՞ն, ազգ-պետությա՞նը, թե՞ նրա գործունեության համակարգին,

• նրանց տարածական, ժամանակային ու եներգետիկ ո՞ր բաղադրիչին են առաջին հերթին և վերջնահաշվում սպառնում (ֆիզիկակա՞ն, թե՞ սոցիալական),

• կենսագործունեության ո՞ր ոլորտին, հասարակության ո՞ր համակարգին են առաջին հերթին և վերջնահաշվում նրանք սպառնում,

• առաջին հերթին և վերջնահաշվում ի՞նչ տիպի վտանգներ են (ռազմա-քաղաքակա՞ն, տնտեսակա՞ն, սոցիալակա՞ն, թե՞ մշակութային),

• առաջին հերթին և վերջնահաշվում ի՞նչ չափում, դրսնորում ունեն (տարածական, ժամանակայի՞ն, թե՞ եներգետիկ),

• առաջին հերթին և վերջնահաշվում ի՞նչ բաղադրիչ ունեն (ֆիզիկակա՞ն, թե՞ ոչ ֆիզիկական՝ սոցիալական),

• վտանգների գործունեության համակարգը ենթարկվում է առաջին հերթին և վերջնահաշվում գժայի՞ն, թե՞ ոչ գժային կախվածութամբ զարգացմանը,

• կարճաժամկետ են, միջնաժամկետ, թե՞ երկարաժամկետ և այլն:

Այս հարցադրումների պատասխանները մեծապես կօգնեն վտանգների համակարգի անբողջական պատկերը կազմելուն և ըստ այդմ էլ՝ անվտանգության սկզբունքները առաջադրելուն:

5) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԻՆՉ ԶԱՓՈՎ

«Անվտանգություն ո՞ր արժեքների համար» հարցադրման պատասխանը շարադրելիս ուղղակիորեն և անուղղակիորեն քննարկվեց նաև անվտանգության ապահովման «չափը» ազգ-պետություն համակարգի ինքնարարական համատեքստում: Սակայն միջազգային անվտանգության որոշ հարցերի ներառումը անվտանգության հայեցակարգում ինքնին ենթադրում է որոշ չափանիշների հավելում՝ կապված տարածաշրջանային ու միջազգային անվտանգության հետ: Եվ առաջին հերթին այն պարզ պատճառով, որ ազգ-պետության կենսական միջավայր են կազմում տա-

րածաշրջանն ու գլոբալ տարածությունը: Այդ չափանիշները ոչ թե համեստն առաջին ինքնարար ազգային անվտանգության չափանիշներից անջատ, այլ նրանց հետ միահյուսված: Անվտանգության գնահատման ժամանակ կարևոր են ինչպես որակական, այնպես էլ քանակական չափանիշները: Նախ անդրադառնանք որակական չափանիշներին:

Ազգային անվտանգության առաջին գույք որակական չափանիշները բխում են Բարդի Բուզանդի հետևյալ սահմանումից. «Անվտանգության դեպքում քննարկումը ապառնալիքից ազատություն հետամտելու վերաբերյալ է: Եթե այդ քննարկումը միջազգային համակարգի համատեքստում է, ապա անվտանգությունը վերաբերում է պետությունների և հասարակությունների՝ սեփական անկախ ինքնությունը և ֆունկցիոնալ ամբողջականությունը պահպանելու ընդունակությանը»: Փաստորեն, այդ չափանիշները սահմանվում են ընդունակությունների և համակարգային ամբողջականության տերմիններով՝

1. սպառնալիքից ձերբազավուելու քաղաքականություն հետամտելու հասարակության, պետության ընդունակությունը,

2. սեփական անկախ ինքնությունը և ֆունկցիոնալ ամբողջականությունը պահպանելու պետությունների ու հասարակությունների ընդունակությունը,

Վալտեր Լիպմանի կարծիքով՝ «ազգն անվտանգ է այն չափով, որ չափով այն էական արժեքների զոհաբերություն ունենալու վտանգի տակ չէ, եթե ուզում է խուսափել պատերազմից, իսկ իրեն մարտահրավեր նետելու դեպքում ընդունակ է դրանք պահպանել այդպիսի պատերազմում հաղթանակ տանելու միջոցով»: Այս սահմանումից բխող հաջորդ երկու չափանիշներն են՝

1. պատերազմից խուսափելու դեպքում սեփական արժեքների պաշտպանվածության աստիճանը, դրանք պաշտպանելու ունակությունը,

2. նետված մարտահրավերների դեպքում դրանք հաղթանակ տանելու միջոցով պաշտպանելու ունակությունը:

Այս չափանիշներին լրացնող այլ չափանիշներ բխում են Ալմինդ Վոլֆերսի սահմանումից, ըստ որի՝ «անվտանգությունը որոշակի օբյեկտիվ իմաստով գնահատվում է ծեռք բերված արժեքներին ուղղված սպառնալիքի բացակայությամբ և սուբյեկտիվ ինաստով՝ վախի բացակայությամբ, որ այդպիսի արժեքները հարձակման կենթարկվեն»: Փաստորեն, չափա-

նիշներ են նաև՝

1. ձեռք բերված արժեքներին սպառնացող վտանգի օբյեկտիվ (ոչ սուրյեկտիվ զգայական) բացակայությունը,

2. այդ արժեքների հարձակման թիրախ դառնալու հետ կապված վախի բացակայության սուրյեկտիվ զգացողությունը հասարակության, պետության համար:

Մեկ այլ չափանիշ բխում է Բութի և Վիլլերի սահմանումից. «Կայուն անվտանգություն ժողովրդի և խմբի կողմից կարող է ձեռք բերվել միայն, եթե նրանք այլոց չեն զրկում անվտանգությունից. իսկ վերջինը կարող է տեղի ունենալ, եթե անվտանգությունը նտահղացվում է որպես էմանսիպացիոն գործընթաց»: Ուստի՝

1. այլոց անվտանգությունից չզրկելը, էմանսիպացիայի չենթարկելը սեփական անվտանգության երաշխիք և չափանիշ է:

Ազգային անվտանգությունը, վերը բերված չափանիշները և ազգ-պետություն համակարգի ինքնարավության, և միջազգային միջավայրում նրա գործառնության առումով գնահատելի են քանակական չափանիշների միջոցով, տարբեր միջավայրերի, ոլորտների ու մակարդակների բազում գործոնների գնահատմամբ: Մասնավորապես՝

• **Ռազմական գործոններից** այնպիսիներով, ինչպիսիք են երկրի զինված ուժերի վիճակը, նրանց որակական և քանակական բնութագրիչները, ռազմական գործողությունների ծավալման հնարավոր թատերաբենների, հիմնական գործողությունների ուղղությունների, ռազմավարական ռեզերվների, մորթիլիզացիոն ընդունակությունների (մարդկային, նյութական, ֆինանսական) վիճակը, ռազմական գործընկերների առկայությունը (բացակայությունը), մասնակցությունը ռազմաքաղաքական դաշինքներում և միջաետական ու կոալիցիոն խմբավորումներում, գործերի ռազմավարական ծավալման հնարավորությունը, նրանց տեղաբաշխման, մասնագիտական պատրաստվածության և բարոյա-հիգիենական կայունության բնույթը, ռազմական փորձի, ավանդույթների առկայությունը (բացակայությունը), բոլոր մակարդակի ռազմական կադրերի պատրաստվածության մակարդակը, ռազմական ծախսերի չափերը, կառուցվածքը, ռազմական գիտա-հետազոտական և փորձա-կոնստրուկտորական աշխատանքների, ռազմական գիտության մակարդակը, ռազմական դոկտորինի, հայեցակարգի բնույթը:

• **Ոչ ռազմական գործոններից** այնպիսիներով, ինչպիսիք են երկրի բնատնտեսական պայմանները՝ էկոմիջավայրի բնույթը, նյութական արտադրության, ֆունդամենտալ և կիրառական գիտությունների, տեխնիկայի և տեխնոլոգիաների, տրամսպորտի բոլոր տեսակների, ֆինանսավարկային ոլորտի վիճակը:

• **Աշխարհաքաղական գործոնները՝** տարածքի չափերը և յուրացվածությունը, պետական սահմանների տարածվածությունը և վիճակը, հարակից երկրների հետ հարաբերությունների բնույթը, աշխարհառազմավարական ենթակառուցվածքը:

• **Սոցիալական գործոնները՝** բնակչության կենսամակարդակը, նրա քաղաքական, մշակութային-կրթական, բարոյական, մասնագիտական, ժողովրդագրական, էրնիկական բնութագրիչները, մենթալիտետը, ժողովրդավարության զարգացման մակարդակը, վերաբերմունքը իշխանության հանդեպ, հասարակական կայունության, կարգուկանոնի և իրավակագի մակարդակը, մարդկային գործոնը՝ մարդկանց զարգացման և անվտանգության անբողջական համակարգում ներգրավվածության մակարդակը:

• **Ինֆորմացիոն գործոնները՝** պետության և հասարակության ինֆորմացիոն անվտանգության վիճակը:

• **Պետական անվտանգության գործոնը՝** հետախուզության, հակահետախուզության վիճակը, հատուկ նշանակության մարմինների և կազմակորումների պատրաստվածության և գործառնան մակարդակը, ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունքները և ռեալ հնարավորությունները, պետական և սահմանված այլ գաղտնիքների պահպաննան ապահովումը:

Արտաքին միջավայրում պետության կողմից անվտանգության ձեռքբերման ընդունակությունների գնահատման դեպքում կիրառելի են այնպիսի չափորոշչիներ, որոնք իրենց հերթին թույլ են տալիս գնահատել, թե ինչպես է պետությունը կարողանում օգտվել անվտանգության ապահովման հայեցակարգից՝

• **Ռազմա-քաղաքական բաղադրամասին** վերաբերող միջազգային իրավունքի մի շարք սկզբունքներից: Դրանք են պետությունների միջև հարաբերություններում հավասարության և միատեսակ անվտանգության (որոնք ենթադրում են աջակցություն կողմերի ռազմա-ստրատեգիական հավասարակշռությանը, միակողմանի ռազմական առավելություններ

ստանալու փորձերի կասեցմանը, աջակցություն կողմերի ծեռք բերած համաձայնությանը՝ զինված ուժերի և զորամիավորումների հավասարակշռված, համանասնական կրծատման գործում, աջակցություն ըստ ծավալի և այլ հիմնական չափորոշիչների ռազմական գործունեության և սպառազինման նկատմամբ միատեսակ, համաձայնեցված միջազգային, պետական վերահսկողության իրականացմանը), ոչ մեկի անվտանգությանը վճար չհասցնելու (պետության անվտանգության շահերի հարգման և իրավունքների հավասարության) սկզբունքները:

• **Ոչ ռազմական՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական բաղադրամասերին վերաբերող գործոններից:** Հանապատասխան ուղղվածությամբ և ոլորտի հիմնախնդիրների գծով միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններում ներկայացվածությունը, մասնակցության չափն ու արդյունավետությունը, այդ ոլորտներում միջպետական, միջազգային համագործակցությունը, տարածաշրջանային զարգացման ծրագրերում ներգրավվածությունը (մեկուսացվածությունը) և այլն:

6) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԻ ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

6.1 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Անվտանգության ապահովումը համակարգի խնդիր է: Այս մասին խոսվել է «Ի՞նչ է անվտանգությունը» բաժնում, ուր անվտանգության այլ ասպեկտների հետ մեկտեղ դիտարկվել նաև համակարգային ասպեկտը: Այդ համակարգի ենթահամակարգերից մեկի՝ արժեքա-մշակութայինի (հաղորդակցական) մեջ, ի թիվս անվտանգության հետ ասոցացված արժեքների, ամբողջանում են նաև անվտանգության ապահովման միջոցները (մեթոդները, եղանակները), ներառյալ անվտանգության արժեքներին դաշտի դերակատարների կապվածության, վարքաբանական և գործառնական անհրաժեշտ մոդելները: Իսկ որպես ԱՍՀ-ի «ելք» հանդես է գալիս անվտանգության քաղաքականությունը: Նաև նշվել է, որ վերջինս քաղաքանության համակարգի քաղադրիչներից մեկն է, այն պարզ պատճառով, որ ինչպես այլ, այնպես էլ անվտանգության հետ կապված նպատակների ձեռքբերումը այս համակարգի հիմնական գործառույթն է: Ուստի անվտանգությունը ապահովում է նպատակամետ քաղաքականությամբ,

որի միջոցով իրականացվում են անվտանգության երկու խումբ գործառույթները: «Անվտանգություն ո՞ր արժեքների համար» բաժնում նաև նշել են այդ քաղաքականության օբյեկտներն ու դատողություններ ներկայացրել սուրբեկտների ցանկալի շրջանակի առումով: Որպես քաղաքականության յուրահատուկ տեսակ՝ այն իրականացնում է քաղաքականություններին հատկանշական բոլոր հանրահայտ գործառույթները և, կախված օբյեկտի բնույթից (Վտանգի՝, թե անվտանգության աղբյուր են), վերաբույն է գործառույթների հիշատակված կամ ա), կամ բ) խմբերին: Հետևաբար սույն բաժնում կբնարկվեն անվտանգության ապահովման այն միջոցները, որոնց նախորդած բաժիններում պատշաճ խորությամբ անդրադարձ չի կատարվել:

Անվտանգության ապահովման միջոցները կարելի է դասակարգել ըստ անվտանգության քաղադրամասերի: Այսպես. կարող ենք առանձնացնել քաղաքական (դրա շրջանակներում՝ նաև ռազմական), տնտեսական, սոցիալական և մշակութային միջոցները:

Այդ միջոցները կարող են դասակարգվել նաև ըստ ազգ-պետություն համակարգի երկու խոշոր կառույցների. միջոցներ, որոնք գործածվում են ազգի, հասարակության ու նրա ինստիտուտների, կառուցվածքների, հանրային իշխանության մարմինների կողմից, միջոցներ, որոնք գործածվում են անհատների, քաղաքացիների կողմից և միջոցներ, որոնք օգտագործվում են պետության, պետական իշխանության մարմինների կողմից:

Անվտանգության ապահովման միջոցները կարող են դասակարգվել նաև ըստ անվտանգության քաղաքականության իրականացման ներուժների, որոնք խնբավորվում են հետևյալ ընդհանրական խմբերում՝ հոգեբանական ներգործության (հնֆորմացիոն, մանիպուլյացիոն) միջոցներ, սոցիոլոգիական ներգործության (դեռեր, պարտավորություններ, նորմեր) միջոցներ, քաղաքական (իշխանություն և իշխանական հարաբերություններ, ինստիտուտներ) միջոցներ, իրավական (անրագոված իրավական նորմեր և կանոններ) միջոցներ: Պետք է նկատել, որ այս մեթոդները հանդես են գալիս ոչ թե մաքուր վիճակով, այլ խառը՝ սիմբիոզային ու համակցված ձևով: Այսպես. քաղաքական միջոցներից իշխանությունը կարող է արտահայտվել հոգեբանական միջոց հանդիսացող մանիպուլյացիայի, սիմվոլիկ իշխանության, սոցիոլոգիական-իրավական միջոց՝ պարտավորություններ «փաթաթելու» և/կամ քաղաքական միջոց ինստիտու-

ցինալ հարկադրանքի միջոցով: Իրականում բոլոր նշված միջոցները կոչված են սպասարկելու մեկին՝ քաղաքականին, քանզի ազգային անվտանգությունը քաղաքական խնդիր է՝ իր բոլոր քաղադրամասերով հանդերձ:

Եվ վերջապես, անվտանգության ապահովման միջոցների դասակարգման համար կարող են հիմք հանդիսանալ անվտանգության դիտարկման հարթությունները, որոնց մասին ևս խոսվել է «Ի՞նչ է անվտանգությունը» բաժնում: Դրանց համապատասխան էլ անվտանգությունը կարող է ապահովվել՝

- 1) *արժեքային կառուցվածքների միջոցով,*
- 2) *ինստիտուտների ու նորմերի միջոցով,*

3) *ուժի (ռազմական կամ տնտեսական բնույթի), հարկադրանքի միջոցով:*

Ընդհանուր առմանք, բոլոր նշված միջոցներն էլ օգտագործվում են անվտանգության քաղաքականության մեջ: Կոնկրետ միջոցի ընտրությունը կախված է իրավիճակի, հանգամանքների, միջավայրի ընկալումից, գնահատումից (բարենպա՞ստ է, թե՝ անբարենպաստ), սպառնալիքների, վտանգի բնույթից:

Արդիականացած ժողովրդավարական հասարակություններում պետական մարմինների հետ մեկտեղ մեծ է հասարակության անդամների մասնակցությունը անվտանգության ապահովման, այդ քաղաքականության իրականացման գործում: Պատճառ այն է, որ ինչպես յուրաքանչյուր քաղաքականություն, անվտանգության քաղաքականությունը ևս այդ հասարակություններում քավական ամուր սոցիալական հիմքեր ունի, որը հասարակության շրջանում աջակցվում է անվտանգության հետ կապված սոցիալական կառուցվածքների, ինստիտուտների, հանրային իշխանության տարաբնույթ մարմինների կողմից: Իսկ դա տեղի ունի, եթե անվտանգության քաղաքականության ենթադրած և հասարակության աշխարհաճանաչողական մոդելները ներդաշնակ են ու փոխադարձարար չիակասող: Այս տեսանկյունից պետության ու հասարակության ունեցած տարընկալումները (օրինակ՝ եթե պետությունը իրականացնում է պարտադրված կամ հասարակության համար ոչ ստանդարտ, ոչ ընդունելի անվտանգության քաղաքականություն) հասարակության մասնակցությունը անվտանգության քաղաքականության հրչակված նպատակների ձեռքբերմանը կասկածի տակ է առնվում: Որպես հայ իրականությունում

դիտված օրինակ՝ կարելի է վկայակոչել հայ-թուրքական հաշտեցման խմբիրն ու այդ սահմանի բացումը: Յաշտեցումը ենթադրում է կոլեկտիվ գիտակցականի ինստանցիայում խաղաղությունը մարմնավորող սոցիալական կառուցվածքի ձևավորում, որը նպատակ ունի Եվրոպական անվտանգության հանրույթին ինտեգրել երկու երկրների (Երկուսի մոտ էլ այդ ցանկությունը առկա է) հասարակություններին: Յայ-թուրքական սահմանի բացումը առաջին հերթին տնտեսական բնույթի ռեսուրսների էքստրակցիայի (հայթայքման) հնարավորությունների է բացում. ասել է թե՝ տնտեսապես հզոր Արևմուտքի տնտեսական կյանքին ինտեգրվելու և սեփական տնտեսական անվտանգության ապահովման համար ռեսուրսներ ձեռք բերելու հնարավորություն: Մինչդեռ 1915թ. Յայոց ցեղասպանության իրողությունը կոլեկտիվ գիտակցության ինստանցիայում լուրջ խոչընդոտ է Թուրքիայի հետ տնտեսական, քաղաքական հարաբերությունները բարելավելու ճանապարհին: Եվ միանգամայն սպասելի էր և է, որ անվտանգության ռեսուրսների հայթայքմանն ուղղված քաղաքականության այդ վեկտորը հանրային աջակցության չէր արժանանա: Նույնպիսի նպատակ է հետապնդում հայ-ադրբեջանական հաշտեցումն ու Ղարաբաղյան հականարտության կարգավորումը, որը ոչ միայն պարտադրվում է միջազգային հանրույթի կողմից, այլ նաև անհրաժեշտ է: Կարելի է վկայակոչել այդ ուղղությամբ հասարակության (լրագրողների, երիտասարդ քաղաքական գործիչների, ուսանողության և այլն) և պետական իշխանության տարբեր մակարդակների ներկայացուցիչների համար նախաձեռնվող՝ երկխոսության հաստատմանն ու հաշտեցմանը ուղղված քազում օրինակներ:

Անվտանգության քաղաքականությանը հանրային աջակցության առումով ծիցտ հակառակ պատկերն է հայ-ռուսական հարաբերությունների հարթությունում, որի ուղղությամբ իրականացվող անվտանգության քաղաքականությունը կարող է հանրային լայն աջակցություն ստանալ՝ անկախ օգուտի, շահի ռացիոնալ պատկերացումներից: Նման հանգամանքների հաշվառումը պարզապես անհրաժեշտություն է անվտանգության քաղաքականության մեջ չծախողվելու համար:

Եթե բերված օրինակները վերաբերում էին արտաքին կենսական միջավայրում իրականացվող անվտանգության քաղաքականությանը, ապա նույնը ճշմարիտ է ներքին միջավայրի համար: Այդ է, պատճառը որ ազգա-

յին միասնությունը, համախմբվածությունը դառնում են անվտանգության ցանկալի նպատակ և ապահոման միջոց:

Իսկ հասարակությանը անվտանգության քաղաքականության իրականացնան գործում ներգրավելու համար ժողովրդավարական երկրներում որքան որ կարևոր են հարկադրանքի, իշխանության գործիքները, նույնքան և կարևոր են համոզման, համերաշխության, ազդեցության գործիքները: Նշվածների կիրառականությունը և կոնկրետ իրավիճակում կիրառման նպատակահարմարությունը հասկանալու համար հարկ է անդրադառնալ անվտանգության քաղաքականության կառուցվածքին:

6.2 Անվտանգության քաղաքականության կառուցվածքը և նրա կառուցվածքային տարրերի էվոլյուցիան

Արդեն իսկ նշվել է, որ անվտանգության սուբյեկտը իր գործունեության համակարգի ու անվտանգության քաղաքականության միջոցով տարածության (թե՝ ֆիզիկական-աշխարհագրական, և թե՝ սոցիալական) մեջ ձևավորում է անվտանգության դաշտ: Նույն կերպ և վտանգի համակարգն իր գործունեության համակարգի միջոցով ձևավորում է ոչ անվտանգության դաշտ: Սոցիալական-ֆիզիկական (աշխարհագրական) տարածության որոշակի տիրույթ անվտանգության տիրույթ (դաշտ) է, եթե այնտեղ ապահոված են սուբյեկտի անվտանգության չափանիշները (վերը դրա մասին խոսվել է): Իսկ այդ տարածության այն տիրույթը, որտեղ առկա է վտանգ (կոնֆլիկտ, սպառնալիք) կազմում է ոչ անվտանգության տիրույթը (դաշտը): Նրանց տարանջատող տարածա-ժամանակային բաժանարան էլ հանդես է գալիս որպես անվտանգության և ոչ անվտանգության դաշտի սահմանագիծը: Այս վերջին տիրույթը դառնում է վտանգի, սպառնալիքի կառավարման (չեզոքացման, նվազեցման), անվտանգության ապահովման թատերաբեմը: Պարզագույն դեպքում երկու տիրույթները կարող են լինել մեկը մյուսի տարածական-ժամանակային շարունակությունը: Իրականում, անվտանգության դաշտը վտանգների պարունակման առումով ունի դիսկրետ-անհամասեռ կառուցվածք, այսինքն՝ պարունակում է ոչ անվտանգության դիսկրետ տիրույթներ, որտեղ վտանգների ինտենսիվությանը, կարևորությանը համարժեք տարրերակվում են կենտրոնական և ծայրամասային թատերաբեմները:

Վերը շարադրվածին համապատասխան էլ անվտանգության քաղաքականությունը հենվում է ստրատեգիական միֆի վրա, որի հիմքը կոնկրետ սպառնալիքն է՝ թշնամին, հակառակորդը: Այն տարածության երկու տիրույթներին համապատասխան ունի անվտանգության և ոչ անվտանգության չափումները: Անվտանգության սուբյեկտի խնդիրն է բ) խնդիրն հարող գործառույթների միջոցով կառավարել վտանգը, սպառնալիքն ու վերջիններիս ոչ անվտանգության դաշտերը (և/կամ ա) խնդիրն հարող գործառույթների միջոցով ընդլայնել անվտանգության դաշտը: Դաշտում իրականացվող այս երկու՝ արտաքուստ հակասական գործառույթները բխուն են տագնապի (հոռետեսության) և լավատեսության ֆունկցիաներից:

Մինչ երկրորդ աշխարհամարտի ավարտը պատերազմը խաղաղություն ապահովելու գլխավոր միջոցն էր՝ դրանով իսկ դառնալով անվտանգության ապահովման (և ոչ թե անվտանգության) դաշտ, թատերաբեմ, ուր հետամտվում էին մշակված ստրատեգիաները և կիրառվում էր ուժը: Ստարտեգիան, նրա մշակումը և ստրատեգիական միտքը ամբողջությամբ հանգեցվում էր ռազմական հաղթանակի մասին գիտության: Դրա մշակումը վերապահված էր գեներալ-ստրատեգներին, անվտանգության պրոֆեսիոնալներին, որոնք անվտանգության դաշտում ունեցած իրենց հեղինակության շնորհիվ համարվում էին «սպառնալիքի կառավարման» կապիտալի մոնոպոլ տնօրինողը: Ստրատեգիայի հետամտումը վերագրվում էր զինվորին, ռազմական գործիքն: Երկուսի առաքելությունն էլ հասկանալիորեն ռազմական էր, իսկ վերապահված և հանձնարարված դերը «կենտրոնական» և «ծայրամասային» թատերաբեմներում ուղղակի կամ պարտիզանական պատերազմների վարումն էր համարվում: Շարունակում էր «պատերազմ հանուն թշնամու, հակառակորդի կապիտույսացիայի և խաղաղության ապահովման» կարգախոսը վարքաբանական պարադիգմա մնալ: Ստրատեգիական միֆի սպառնալիքի չափումը թշնամու առկա կամ սպասվող մարտահրավերն (ագրեսիայի ձևով) էր, իսկ անվտանգության չափումը՝ վերջինիս նկատմամբ գերազանցապես պատերազմի միջոցով հաղթանակ տանելը: Ընդ որում, հզոր տերությունների բացարձակ ինքնիշխանության հաստատման նկրտումները փոխզիջման նվազագույն տարրեր իսկ չեն պարունակում, քանզի որպես արդյունք ակնկալվում էր հակառակորդի կապիտույսացիան բոլոր առումներով: Դա, բացի հումանիտար և այլ կարգի աղետներից, ողջ մոլորակի, մարդ-

կուրյան ֆիզիկական ոչնչացման վտանգ չէր պարունակում: Վառ ապացույցը սանձազերծված երկու աշխարհամարտերն էին: «Պետության ռազմական մեթենան, կարգավիճակն ու դրա կարևորումը բխում էր կոնվենցիոնալ ուժի ուղղակի կիրառման և արդյունավետության թեզից: Կոնվենցիոնալ ուժը հարկադրանքի միակ և անփոխարիմելի միջոցն էր:

Սառը պատերազմը, միջուկային ստրատեգիան և երկրեւ աշխարհակարգը բավականին տրանսֆորմացիայի ենթարկեցին անվտանգության դաշտն ու նրա մասին պատկերացումները: Գլխավորապես 1990-ական թվականներին միայն (երբ դրանք այլևս անցյալում էին) տարրեր հեղինակներ (Բ.Բուզանը և Օ.Կուտեվերը, Դ.Բիգոն, Զ.Շույսմանը²²) կասկածի տակ առան 60-ականներից սկիզբ առած եզրահանգումները անվտանգության ու պաշտպանության հարցերի, մասնավորապես՝ միջուկային գենքի և խորհրդային հակառակորդի նկատմամբ վերաբերմունքի միջև կոշտ պատճառահետևանքային կապի առկայության մասին:

Ակնհայտ դարձավ, որ դեպի ուժի կիրառումը կողմնորոշված ռազմական կարգավիճակը փոխվում է միջուկային սարսափեցման և 60-ականների երկրեւության ի հայտ գալու հետ մեկտեղ, քանի որ փոխվել էր վերաբերմունքը հարկադրանքի նկատմամբ. սարսափեցումը նպաստել էր հասարակությունների ներսում ուժի մեղմացմանը (Եվֆենիզացիային), կամ ավելի ճիշտ՝ նրա փոխակերպմանը արտահայտված ռեալիզմիվ բռնությունից դեպի ավելի կառուցվածքային և սիմվոլիկ բռնություն: Ինչպես S.Շելինգն էր նկատել, այլևս «ստրատեգիան չի հանգեցվում ռազմական հաղթանակի մասին գիտության, այլ դառնում է հարկադրանքի, սպառնալիքի կամ սարսափեցման արվեստ»²³: Այն դառնում է տոտալ,

²² Նշված հարցերով տես՝ Buzan B. People, states and fear. Boulder, 1991.; Buzan B., Woever O. Security and migration in Europe. N.Y., 1993; Bigo D. The European international security field: stakes and rivalries in a newly developing area of police intervention // Malcolm Anderson & Monica Den Boer, Pinter Publication, 1994.; Bigo D. Polices en rseaux: l'expérience européenne: Presses de Sciences Po "The new field of security in Europe" // A. Le Gloanec, The european desorder, 1994.; Bigo D. La criminalisation du politique en Europe ou le syndrome Arturo U: Pratiques politiques, rhétoriques sécuritaires, et champ de recherche, communication au CERI, 1995.; Huysmans J. Making Unmaking. The European Disorder. Thèse à l'Université de Leuven, 1995.

²³ Schelling T. The Strategy of Conflict, Cambridge (Mass.), 1963:

գլոբալ՝ ուղղված հակառակորդի կամքի ճնշմանը: Այն հեռանում է գիմվրից և անցնում դիվանագետին: Ինչպես Ռ.Արոնն է նկատում՝ ուժի կիրառման փոխարեն «գործողության վայր է գալիս սպառնալիքը, լուծման (բախման, կոնֆլիկտի. - հեղ.) վայր՝ սարսափեցումը» (էջ 139)²⁴: Դիսկուրսը, սիմվոլիկան և սիմվոլիկ իշխանության կուտակումը սկսեցին առավելություն ստանալ խուսանավման նկատմամբ՝ Սառը պատերազմը զինված բախումը դարձել էր անհնար և նույնիսկ ոչ հարկավոր: Հետևաբար երկրեւ կայունությունը դարձել էր ստրատեգիական միջք, «պատերազմի բացակայությունը»՝ պարադիգմա:

Ստրատեգիական միջի երկու չափումներից հատկապես երկրորդը՝ ռեալ սպառնալիքը, սարսափեցման բնույթը էր ստացել՝ դրանով իսկ փոխելով ազդման և հակագդման ծնն ու բնույթը: Նախկինում փոխգիծում չենթադրող ուղղակի, կոշտ բախումնային վարքագծից կամ խուսանավումից այժմ սարսափեցման ազդեցության ներքո հարկադրված անցում էր նկատվում դեպի փոխգիծումային՝ գոնե գլոբալ անվտանգության պահպանման մտահոգության շրջանակներում: Քանզի նետված մարտահրավերները ավելի վտանգավոր էին դարձել բուն գլոբալ անվտանգության և ցանկացածի համար. միջուկային գենքի երկուստեր օգտագործումը նոլորակի, ողջ մարդկության համար կործանարար կարող էր լինել, ինչի պատճառով էլ ծնավորված աշխարհաճանաչողությունը հենվում էր «պատերազմի բացառնան» պարադիգմայի վրա: Յիմնական ստրատեգիական միտքն այժմ ուղղորդվում է կոնֆլիկտայնության ուսումնասիրությանը, որպեսզի այն տարածեն տեխնոլոգիայի, տնտեսության, հոգեբանության, որոշումների ընդունման հետ կապված և այլ ոլորտների վրա՝ մտորելով այս «տարօդինակ աշխարհի վերաբերյալ, որն ստեղծվել է սպառագինություններով, սակայն ոչ մի այլ նշանակություն չունի, քան դրանց էֆեկտիվ կիրառմանը խոչընդոտելը, և որն այդ նշանակությունը կատարում է այն չափով, որքանով նրանց կիրառման հնարավորությունը շարունակում է գոյություն ունենալ» (էջ 139)²⁵: Սահմանը ուժի կիրառելու մասին որոշում կայացնողների, ուժի կիրառողների և ուժի կիրառման մասին բարձրաձայնողների միջև գնալով դառնում է ավելի թափանցելի: Դիսկուրսի օգտագործումը դառնում է գենք: Վերջինիս միջոցով անվտանգու-

²⁴ Aron R., Penser la guerre, Clausewitz, II l'age planatoire, NRF Gallimard, 1976:

²⁵ Տե՛ս նույն տեղում:

թյան դաշտ են ներթափանցում նորանոր դերակատարներ՝ իրենց էպիգոն դիսկուրսներով «ալլոդոքսի» (միևնույն կարծիքի տարրերակներից մեկը) էֆեկտով միանալով քաղաքական դեկավարների, ստրատեգների և պաշտպանության հարցերով մասնագիտացող համալսարանականների կողմից հարուցվող լուրջ դիսկուրսներին, որոնք բովանդակությամբ իրարից բացարձակապես չեն տարրերվում: Թեպետ նրանք վերջիններիս նման չունեն սոցիալական բազմակարգավիճակայնություն և ընդամենը մարգինալ դեր են խաղում, սակայն էականը անվտանգության դաշտի դերակատարների շրջանակի մեծացումն է: Այս ամենը զինվորական դեկավարության մակարդակում դիմացումիա է ստեղծում կենտրոնական թատերաբեմում «պատերազմի բացակայության» պայմանների համար մտուրելու պատասխանատվություն ունեցողների և ծայրանասային թատերաբեմերում «միջնորդավորված պատերազմներ» վարելու հանձնարարությունը ստացածների միջև: Առաջինները պետք է կառավարեն կամքի փորձությունը, սպառնալիքը, անվտահությունը, որոնք դա անում են ստրատեգիական միտքը լրացնելու եկած նոր դիսցիպլինների օգնությամբ: Իսկ երկրորդները շարունակում են իրականացնել իրենց ռազմական առաքելությունը: Այսօր, երբ այլևս չկա «կոմունիստական սպառնալիք», վերջիններս այդ գաղափարը փոխարինել են պարտիզանական պատերազմի հին հասկացությամբ: Այստեղից էլ գալիս է հիերարխացումը ի վեհական դասական զինվորականների, որոնք շարունակում են իրենց հետաքրքրությունը պահպանել կոնվենցիոնալ ուժի օգտագործման, գաղութային, ազատագրական և նույնիսկ պարտիզանական պատերազմների նկատմամբ: Առաջինների մասնագիտական առաջխաղացումը ոչ մի կասկած չի թողնում:

Այսպիսով, «միայն այսօր՝ միմյանց հետ անխօնիորեն կապված երկրենության և միջուկային ստրատեգիայի անցյալի հեռանալուն զուգընթաց, կարելի է հասկանալ սիմվոլիկ իշխանության ողջ նշանակությունը, որը թաքնված է սարսափեցման մասին ստրատեգիական դիսկուրսում, ինչպես նաև այն, թե ինչ աստիճան է այն մոդիֆիկացնում պատերազմի դասական ընկալումը... անվտանգության դաշտը փոխարինելու է եկել պատերազմին» (էջ 273), իսկ ռազմավարական միքը «քույլատրում է դիսկուրսին գործել որպես իշխանություն ... ներշնչել, որ սպառնալիքի մասին դիսկուրսը նոր կապիտալ է (որի բովանդակությունը փորձնական

գիտելիքն է), որը փոխարինում է կոշտ ուժի կիրառմանը և սպառնալիքի կառավարման պրոֆեսիոնալներն իրենց արսենալում պետք է պահպան մեն «պատերազմի բացակայության» հարկադրական դիվանագիտությունը» (էջ 275):²⁶

Որպես պրակտիկայում դիտված օրինաչափություն՝ անվտանգության դաշտում ճգնաժամ է սկսվում, երբ մասնակիորեն կամ անբողջությանը վլուզվել է ռազմավարական միքը իր երկու չափումներով, այսինքն՝ երբ վերանում է նրա հիմքը կազմող կոնկրետ սպառնալիքը՝ թշնամին: Այդ իրավիճակում առաջին պլան է գալիս ստրատեգների կողմից աշխարհին «իմաստ» հաղորդելու և «ճշմարտության ռեժիմ» ձևավորելու, այն հասարակության, անվտանգության դաշտի դերակատարների շրջանում «ներարկելու» գործընթացը: Վերջիններիս նպատակը դառնում է նոր սպառնալիքների՝ հակառակորդների ու նրանց հենքի վրա նոր ստրատեգիական միքերի ստեղծումը, որի համար նրանք փոխակերպում են իրականության «քանալ էպիզոդները սուրբ սիմվոլների և ցանկացած իրադարձություն տեղավորում միևնույն մեկնաբանության մեջ» (էջ 275):²⁷ Նոր միքի հիմքին և չափումներին համապատասխան:

Արդյունքում առաջադրված «դիսկուրսները, որոնք ներկայանում են որպես ակադեմիական, նախևառաջ նպատակառդղված են ահն բանին, որ ռեկոնվերսացնեն «սպառնալիքի կառավարման» առանձնահատուկ կապիտալը, որին տնօրինում են անվտանգության պրոֆեսիոնալները, և միջազգային հարաբերությունների մասնագետներին վերադարձնեն այդ պրոֆեսիոնալների խորհրդականի նրանց տեղը» (էջ 268):²⁸ Իսկ «պոպուլյար դարձած թեզինները նվազագույն առնչություն ունեն սոցիալական իրականության ճանաչողության և մեկնաբանության նպատակների հետ և առավելագույնը՝ անվտանգության աշխարհի շրջանակներում իշխանության ու լեգիտիմացման»: Դրանք անվտանգության քաղաքականության իրականացման առումով հաջողություն ունեն, ինչը «կապված է նախևառաջ այն բանի հետ, որ այդ դիսկուրսները անվտանգության ոլոր-

²⁶ Биро Д., Проблемы безопасности: теоретические дискуссии и институциональный контекст, էջ 266-306, Международные отношения: социологические подходы գործում, Рук. авт. колл. проф. П.А.Цыганков, М., Гардарика, 1998, էջ 352:

²⁷ Տե՛ս նույն տեղում:

²⁸ Տե՛ս նույն տեղում:

տի պրոֆեսիոնալների կողմից ճանաչվում, ընդունվում են որպես սեփական գգացողություններին համապատասխանող: ...Մշտական կոնտակտի մեջ լինելով անվտանգության պրոֆեսիոնալների՝ զինվորական, ուստի-կամական կամ էլ քաղաքական դեկավարների հետ, նրանք ավելի շատ որսում են նրանց տարերային ռեակցիաները և կարող են հաջողությամբ արտահայտել նրանց հույսերն ու տագնապները տեսական դատողությունների ձևով» (էջ 269-270):²⁹ Քաղաքականացնելով անվտանգության ոլորտը՝ այդպիսի դիսկուրսն «այն չէ, ինչն անիրական է, այլ այն, ինչը անհնար է դարձնում տարանջատել իրականը անիրականից»: Իսկ այդ պատկերվող իրականությունը մանիպուլացնելու և նրան ճշմարտաննա-նություն հաղորդելու համար լոկալ ինացությունների օգտագործումը լի-ովին բավարար է:

Առաջնորդվելով անվտանգության ապահովման, ձեռքբերման շահե-րով, ստրատեգմերի, դերակատարների՝ որոշակի կանոններով ընթացող մրցակցությունը, փոխազդեցությունն ու գործունեությունը կանոնակարգ-ված ֆունկցիոնալ դերաբաժանման հիմքի վրա սոցիալական-ֆիզիկա-կան տարածության մեջ ձևավորում է անվտանգության դաշտը³⁰: Անվ-տանգության դաշտի պատկերի ողջ բարդությունն արտահայտվում է նրա շրջանակներում միաժամանակ իրացվող բազում ստրատեգիաների վրադրվածությամբ: Եվ հաճախ դժվար է լինում նրանց «սերտաճման» վայրերում տարբերակել այս կամ այն ստրատեգի-ան:

²⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁰ Համարում են, որ սոցիալական, քաղաքական դաշտը շուկայի նման գործառնող, փո-խազդեցության որոշակի տիպով տարածություն է, որտեղ առանձին անձինք և (կամ) ան-ձանց խմբեր մրցակցում են միմյանց հետ, և որը նրանցից յուրաքանչյուրի վրա առանձ-նահատուկ էֆեկտ է թողնում: Բնութագրվում է դաշտի էներգիայով (սոցիալական, քաղա-քական), նրա բաշխմամբ և բնույթով: Քաղաքական դաշտում տարածության բաժանումը կատարվում է աշխատանքի, խնդիրների, հարկադրամքի և արժեքների հիման վրա: Որ-պես տարածություն, այն արտացոլում է «տեղի էֆեկտը», որը դաշտի դերակատարներին տարանջատում է իշխողների և իշխավողների (էջ 106): Տե՛ս Կոլա Դ., Политическая социология, Пер. С фр.: Продисл. А.Б.Гофмана.-М., Издательство «Весь Мир», «ИИФРА-М», 2001.-XXII, էջ 406, կամ Bourdieu P., La distinction. Critique sociale du juge-ment, Ed. De Minuit, 1979:

Հանրագումարելով ասվածը՝ նշենք, որ անվտանգության դաշտը ձևավորվում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ իրողություննե-րով: Եվ, անկախ սուբյեկտիվ տարրերից (օրինակ՝ այս կամ այն իրադար-ձությունը առաջընթաց է, թե՞ ոչ, միջազգային համակարգը բարենպա՞ստ է, թե՞ ոչ և այլն), բոլոր դերակատարներն էլ ենթարկվում են նույն օբյեկ-տիվ տարրերին, հանգանանքներին: Անվտանգության դաշտի սուբյեկտի-վիզմը պայմանավորված է նրանով, որ այն ձևավորվում է «սպառնալիքի կառավարման» պրոֆեսիոնալների, «անվտանգություն-ոչ անվտանգու-թյուն» գույգից գիտելիք-իշխանություն արտադրողների կողմից, ինչպես նաև՝ նրանց կողմից սոցիալական գիտության և միջազգային հարաբերու-թյունների կամխատեսող ընդունակությանը հավատալու քվազիստրուկ-տուրալ անիրաժեշտության միջոցով: Այն ձևավորվում է փաստերի, նրանց խրոնոլոգիայի ավել կամ պակաս աղեկվատ նկարագրության և բացատրության հիման վրա:

Այսօր ներքին, արտաքին կենսական միջավայրերում անվտանգության դաշտ ձևավորելուն ծառայում են այնպիսի հայեցակարգեր, ինչպիսիք են անվտանգության հանրությը, անվտանգության ռեժիմը, անվտանգության համալիրը, ընդհանուր անվտանգությունը: Ներպետական տարածության մեջ դրանց անդրադարձանը մի փոքր այլ անվանումներով՝ սոցիետալ հանրությն իրեւ անվտանգության հանրությթ, դեմոկրատական ռեժիմն իրեւ անվտանգության համալիր, ազգային անվտանգությունն իրեւ ընդհանուր անվտանգություն: Սակայն ներկայումս, լիրաժեք անվտանգության ապա-հովումն այլևս վեր լինելով մեկ պետության ուժերից, ենթադրում է նույնա-տիպ կառուցվածքների հաստատում միջազգային մասշտաբում: Նպա-տակը անվտանգության լրացուցիչ ռեսուլտների ու երաշխիքների ձեռք-բերումն է:

Կարլ Ռոյչի սահմանման համաձայն՝ «անվտանգության համրությը» «ինտեգրված» ժողովուրդների խումբն է: Ինտեգրացիա ասելով հասկաց-վում է որևէ տարածքի սահմաններում «հանրույթի զգացողության» և ինս-տիտուտների ու պրակտիկաների ձեռքբերումը, որոնք խիստ բավարար և համատարած բավարար են, որպեսզի ապահովեն ... նրա բնակչության շրջանում «խաղաղ փոփոխությունից» կախված ակնկալիքները: «Հան-րույթի զգացողության» ներքո հասկացվում է այն համոզմունքը..., որ ընդ-

հանուր սոցիալական պրոբլեմները պետք է լուծվեն և կարող են լուծվել «խաղաղ փոփոխության» գործընթացների միջոցով:

Դաշտորդ կարևորագույն հայեցակարգը «անվտանգության ռեժիմի» հայեցակարգն է: Ըստ Ռոբերտ Զերվիսի սահմանման, «անվտանգության ռեժիմները» տեղի ունեն, երբ մի խումբ պետություններ համագործակցում են իրենց վեճերը կառավարելու և պատերազմից խուսափելու նպատակով՝ ինչպես սեփական գործողություններով, այնպես էլ այլոց վարքագծի վերաբերյալ իրենց ենթադրություններով անվտանգության դիլեմայի մեջմնանը հասնելու միջոցով:

Իսկ «անվտանգության համալիրի» հայեցակարգի համար Բարի Բուղանը տալիս է սույն սահմանումը: «Անվտանգության համալիրը» ներառում է մի խումբ պետություններ, որոնց առաջնային անվտանգությունը վերաբերում է բավարար չափով սերտորեն միջյանց այնպես կապվելուն, որ նրանց ազգային անվտանգությունները ռեալիստական առումով միմյանցից առանձին չդիտարկվեն:

Եվ վերջապես, «Ընդհանուր անվտանգության» վերաբերյալ հեղինակավոր սահմանումներից է Պալմի 1992թ. գեկուցում տեղ գտած սահմանումը: «Ընդհանուր անվտանգության» ընդունումը՝ որպես պատերազմի ռիսկը նվազեցնելուն, սպառազինությունը սահմանափակելուն և դեպի ապասպառազինում դրդելու ջանքերի կազմակերպական սկզբունք, ըստ եռթյան, նշանակում է, որ շահերի կոնֆլիկտի լուծման գործում համագործակցությունը պետք է փոխարինի առձակատմանը: Դա չի նշանակում, որ ազգերի միջև տարածայնություններն ակնկալելի են, որ կանհետանան... Խնդիրը միայն այն բանի ապահովումն է, որ այդ կոնֆլիկտները պատերազմական ակտերի կամ պատերազմի նախապատրաստությունների ձևով արտահայտված չդառնան: Դա նշանակում է, որ ազգերը պետք է հաճգեն այն գիտակցության, որ ավելի բարձր գերակայություն պետք է տրվի համաշխարհային խաղաղության պահպանմանը, քան թե իրենց սեփական գաղափարախոսական կամ քաղաքական դիրքերի արդարացմանը»:

Անվտանգության ընդլայնված օրակարգը անհրաժեշտ է դարձնում դիտարկել արտաքին կենսական միջավայրում ազգ-պետության կողմից անվտանգության քաղաքականության հետամտման ուղիներն ու ելակետերը: Անվտանգության նկատմամբ վերաբերմունք արտահայտած դա-

րոցների տեսանկյունից դրանք տարբեր են և ընկած են հորետեսությունից մինչ լավատեսություն ընդարձակ դիապազոնում: Կոնկրետ միջոցի ընտրությունը կախված է անվտանգության սուբյեկտի՝ կենսական միջավայրի բարենպաստության կամ անբարենպաստության, լավատեսության կամ տագնապի (հորետեսության) գործառույթից:

6.3 Անվտանգության հետամտման ուղիները և ելակետերը արտաքին կենսական միջավայրում

Սույն բաժնի ներքո կդիտարկվեն անվտանգության մտքի հեղինակավոր դպրոցների այժմյան մոտեցումները, կանխատեսումները գլոբալ, միջազգային միջավայրի վերաբերյալ և անվտանգության ապահովման եղանակներ՝ այդ ընկալումներին համապատասխան: Մտքի այդ դպրոցներն են՝ ստանդարտ նեռ-ռեալիստական, կախվածության ռեալիզմի, կառուցվածքային ռեալիզմի, լիբերալ ինստիտուցիոնալիզմի, «դեմոկրատական խաղաղության», «կոլեկտիվ անվտանգության», «կոնստրուկտիվ քննադատական», պոստմոդեռնիստական և գլոբալիստական դպրոցները: Դրանց առանցքային ենթադրությունների դիտարկումը հնարավորություն կտա ՀՀ իրականության համար կոնկրետ սպառնալիքները, վտանգները և դրանք պայմանավորող սոցիալական համակարգերը վերհանելու դեպքում որպես անվտանգության ապահովման սկզբունք որդեգրել այս կամ այն դպրոցի մոտեցումները:

Ստանդարտ նեռուեալիզմի առանցքային ենթադրությունները

Միջազգային համակարգը անարխիստական է: Դա չի նշանակում, որ այն անպայմանորեն քառային է: Ավելին, անարխիստ ենթադրում է, որ չկա պետության վարքաբանությունը վերահսկելու ի գորու որևէ կենտրոնական իշխանություն:

• Ազգային անվտանգությունը կամ ոչ անվտանգությունը մեծապես միջազգային համակարգի կառուցվածքի արդյունք են: Անարխիստ կառուցվածքը ենթադրվում է խիստ տևական: Դրա ազդեցությունն այն կինի, որ միջազգային քաղաքականությունը ապագայում կլինի անցյալի ննան բռնի և վերադարձ կլինի անցյալի ուժային քաղաքականության

ավանդական բազմակողմ հաշվեկշռին:

• Ինքնիշխանություն հրչակող պետություններն անխուսափելիորեն կզարգացնեն հարձակողական ռազմական ընդունակություններ, որպեսզի պաշտպանեն իրենց և ընդարձակեն իրենց իշխանությունը: Դրանով իսկ նրանք պոտենցիալ առումով վտանգավոր են մինյանց համար և մինյանց նկատմամբ կգործեն ագրեսիվորեն:

• Դավատի կորստի հանգեցնող անորոշությունը հատկանշական է միջազգային համակարգին: Պետությունները չեն կարող երբեք վստահ լինել իրենց հարեւանների մտադրություններին, այդ իսկ պատճառով նրանք պետք է մշտապես զգոն լինեն իրենց պաշտպանության հարցում:

• Պետությունները կցանկանան պահպանել իրենց անկախությունը և ինքնիշխանությունը, և, որպես արդյունք, նրանց վարքագիր վրա ազդող ամենահիմնական կառավարող ուժը կլինի:

• Թեպետ պետությունները ռացիոնալ են, այդուհանդերձ, մշտապես թյուր կանխատեսելու հնարավորություն կլինի: Ոչ հստակ ինֆորմացիայի աշխարհում պոտենցիալ անտագոնիստները միշտ մոտիվ կունենան թյուր ներկայացնելու սեփական ընդունակությունները, որպեսզի իրենց հակառակորդներին պահեն անորոշության մեջ: Դա կարող է «իրական» պետական շահերի գնահատման ժամանակ սխալնությի հանգեցնել:

• Պետությունների միջև համագործակցության դժվարություններ և սահմանափակումներ են ստեղծվում մի շարք իիմնախնդիրների պատճառով.

1. «Անվտանգության դիլեման կառուցվածքային մի հասկացություն է, ըստ որի՝ սեփական անվտանգության կարիքները հոգալու պետությունների ինքնարակ փորձերը միտում ունեն հաշվի չնստել այն մտադրության հետ, որ այլոց համար դրանք կհանգեցնեն ոչ անվտանգության ուժեղացման, քանզի յուրաքանչյուրն իր սեփական միջոցառումները մեկնաբանում է որպես պաշտպանողական, իսկ այլոց միջոցառումները՝ որպես պոտենցիալ սպառնացող» (Զոն Շերց 1950, 157): Անվտանգության դիլեմայի պատճառը անվտահությունն ու վախն են: Նույնիսկ երբ պետությունները մտածում են վտանգավոր չինել իրենց մտադրություններում, մշտապես առկա է այն հավանականությունը, որ մտադրությունները կարող են փոխվել: Ամբողջապես վստահող լինելը առավելություն վերցնելու համար հեռանկարներ է բացում՝ պոտենցիալ աղետաբեր հետևանք-

ներով հանդերձ:

2. **Խարեւլու իիմնախնդիրը:** Պետությունների միջև համագործակցության նկատմամբ սահմանափակումներ են առկա, քանի որ պետությունները մշտապես եղել և մնում են վախով լեցուն, որ մյուսները կիսարեն ձեռք բերված համաձայնությունների առումով և կփորձեն օգուտ քաղել դրանցից: «Այդօրինակ զարգացումը կարող է խարող կողմի համար զոհ երկրին վճռորոշ պարտության մատնելու հնարավորության պատուհան ստեղծել» (Միրսիեմեր, 1994, 20): Դա գիտակցելով հանդերձ՝ պետությունները միավորվում են դաշինքներում և սպառագինության վերահսկողության համաձայնագրեր ստորագրում, թեպետ նրանք մնում են շրջահայաց, զգուշավոր և ծայրահեղ դեպքում սեփական ազգային անվտանգությունը ապահովելու կարիքը գիտակցող:

3. **Դեռքբերումների իիմնախնդիրը:** Համագործակցությունը խոչնըրոտվում է նաև, որովհետև պետությունները միտված են հետաքրքրվելու «հարաբերական ծեռքբերումներով», քան թե «քացարձակ ծեռքբերումներով»: Երկու գործընկերներին էլ օգուտ խոստացող համագործակցությամբ հետաքրքրված լինելու փոխարեն պետություններին մշտապես հարկավոր է գիտակցել, թե ինչքան են նրանք ծեռքբերում այն երկրների համեմատությամբ, որոնց հետ համագործակցում են: Քանի որ բոլոր պետությունները զգտում են մաքսիմալացնել իրենց ծեռքբերումները մրցակցային, թերահավատ և անորոշ միջազգային շրջակայքում, ապա մշտապես շատ դժվար կլինի հասնել համագործակցության, և ավելի դժվար կլինի այն պահպանելու:

Կախվածության ռեալիզմի առանցքային ենթադրությունները

Ստանդարտ կառուցվածքային ռեալիզմը թերի է երեք գլխավոր պատճառներով.

1. Նրանք մերժում են պետությունների մրցակցային հակվածությունը: Քանի որ միջազգային հարաբերությունները բնութագրվում են ինքնարակ վարքագծով, ապա դա պարտադիր չի նշանակում, որ պետությունները դատապարտված են հավերժական մրցակցության, որը արդյունքում կիանգեցնի պատերազմի: Դիմակայելով մրցակցության հետ ասոցացված անորոշություններին՝ պետությունները կնախընտրեն համագործակցելու:

2. Ստանդարտ կառուցվածքային ռեալիզմը անկատար է «հարաբերական ծերքերումներին» շեշտադրում կատարելու պատճառով, քանի որ պետությունները չեն առաջնորդվում միայն «հարաբերական ծերքերումներով»: Պետությունները հաճախ համագործակցություն են հետամտուն միանգամայն հարաբերական ծերքերումների վտանգների պատճառով: Անվտանգության առումով հաճախ ավելի լավ է ընդունել մոտավոր հավասարությունը, քան թե հասնել առավելագույն ծերքերումների, որոնք կիանգեցնեն մրցակցության մեկ այլ փուլի՝ բոլորի համար ավելի լայն իմաստով հանգեցնելով ավելի քիչ անվտանգության:

3. Խարելուն շեշտադրումը գերազանցվում է: Խարելը հիմնախնդիր է, որը ռիսկեր է առաջ քաշում, սակայն նույնը անում է և մրցակցությունը: «Չի կարող հանարվել, որ խարելու որոշակի հնարավորություն թողնող համաձայնագիրն անընդունելի է, կամ որ խարելը անպայմանորեն կիանգեցնի ստրատեգիապես կարևոր ծերքերումների» (Շելինգ և Շալպերին): Մրցակցության վերահսկողության պարունակած ռիսկերը կարող են նախընտրելի լինել մրցակցության պարունակած ռիսկերից:

Նեոռեալիզմի կամ «կառուցվածքային ռեալիզմի առանցքային ենթադրությունները

• 1980-ականների և 1990-ականներին աստիճանաբար ի հայտ եկավ «հասուն անարխիան». պետությունները գիտակցում են միջուկային աշխարհում ագրեսիվ ձևով մրցակցության շարունակման աճող վտանգները և միջազգային անվտանգության աճող կարևորությունը: «Հասուն, գիտակից» պետությունները գնալով ինտերնալացնում են այն «ընթռնումը», որ ազգային անվտանգությունները փոխկախված են, և որ ծայրահեղ ինքնարավ անվտանգության քաղաքականությունը, նրանց ցանկացած շովինիստական հրապուրանք վերջնահաշվում իրենց իսկ պարտության են մատնում» (Բուզան 1983, 208): Պետությունները գիտակցում են, որ սեփական անվտանգությունը փոխկախված է այլ պետությունների անվտանգությունից:

• Պետություններն անցնում են «հասունացող գործընթացների» միջով՝ դաժան ռազմական հակամարտություններից սկսած մինչև անվտանգության համրույթ: Կառուցվածքը առանցքային տարր է պետության վար-

քագծի հաստատման, պայմանավորման գործում:

• Ի տարբերություն անցյալի, երկրներն այլևս չեն ենթադրում բռնության կամ հարկադրանքի կիրառում իրենց տարածայնությունների լուծման նպատակով: Անհամաձայնությունները շարունակում են ի հայտ գալ, սակայն անվտանգության հանրույթի ներսում կոնսենսուս է առկա, որ դրանք մշտապես պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով և քաղաքական եղանակներով:

• «Հասուն անարխիան» մեծացնում է անվտանգության դիլեմայի մարման շանսերը:

Լիբերալ ինստիտուցիոնալիզմի առանցքային ենթադրությունները

• Ինստիտուտները ոչ միայն պետության շահերի արդյունք և հարկադրանքներ են, որոնք պարտադրված են հենց իր՝ միջազգային համակարգի կողմից, այլ նաև մեծ դեր են խաղում անվտանգության բարելավման, պատերազմի կանխման գործում: Թեպետ միջազգային հարաբերություններում ռազմական ուժը շարունակվում է կարևորվել (ռեալիզմի մոտեցում), այնուամենայնիվ, ինստիտուտները կարող են ապահովել համագործակցության այնպիսի շրջանակներ, որոնք կարող են օգնել պետությունների միջև անվտանգության մրցակցության վտանգները հաղթահրելուն: Պետությունների միջև ինստիտուցիոնալիզացված համագործակցության զարգացող պատեռնը աննախադեպ հեռանկարներ է բացում մեծ միջազգային անվտանգության հասնելու և պետությունների միջև ավամդական անվտանգության մրցակցությունը նեղմելու հանար:

• Փոխլրացնող, փոխանրապնդող ինստիտուտների շրջանակը կարող է նպաստել ավելի տևական ու կայուն անվտանգության համակարգի ապահովմանը: Ինստիտուտները աշխարհի տարբեր տարածաշրջաններում խաղաղության ծերքերմանը նպաստելու ներուժ ունեն:

• Չի կարելի ասել, որ ինստիտուտները կարող են կամիսել պատերազմների բռնկումը, սակայն նրանք կարող են օժանդակել խարեւության վախը մեղմելուն և այն վախները թուլացնելուն, որոնք երբեմն ծագում են համագործակցության անհամաշափ ծերքերումներից: Պետության ուժով և տարածիտող շահերով թելադրված աշխարհում փոխադարձության հիմքերի վրա միջազգային ինստիտուտների գործառնությունը առնվազն

որևէ տևական խաղաղության բաղկացուցիչը կլինի: Անհավանական է որ միջազգային ինստիտուտներն իրենք արմատախիլ կանեն պատերազմը միջազգային համակարգից, սակայն նրանք կարող են ինչ-որ դեր խաղալ պետությունների միջև ավելի մեծ համագործակցության ձեռքբերմանը օժանդակելու գործում:

• Միջազգային ինստիտուտները շատ ավելի կարևոր են կայունության և համագործակցության ձեռքբերման աջակցության գործում, քան «կառուցվածքային ռեալիստներն» են ընդունում: «Ինստիտուտները կարող են ապահովել ինֆորմացիա, կրծատել գործարքների ծախսերը, պարտավորությունները դարձնել ավելի վստահելի, հաստատել կոորդինացման օջախային կետեր և, ընդհանուր դեպքում, հեշտացնել փոխօգնության գործողությունը» (Կենիեյն և Մարտին, 1995, 42): Դրանցից կարևորվում են տնտեսական և քաղաքական ինստիտուտները ավանդական թշնամնի հաղթահարման գործում:

«Ղենոկրատական խաղաղություն» տեսության առանձքային ենթադրությունները

• Այս տեսությունը ի հայտ եկավ 1980-ականներին: Գլխավոր փաստարկն այն է, որ դեմոկրատիայի տարածվածությունը կհանգեցնի ավելի մեծ միջազգային անվտանգության: Ղենոկրատական պետությունները միտում ունեն չպատերազմել այլ դեմոկրատական պետությունների հետ: Այդ իսկ պատճառով դեմոկրատիան խաղաղության գլխավոր աղբյուրն է:

• Ղենոկրատական խաղաղության տեսությունը հենված է կանոնյան տրամաբանության վրա՝ շեշտելով երեք տարրեր. հանրապետական դեմոկրատական ներկայացուցչականությունը, գաղափարական պարտավորությունը մարդու իրավունքների նկատմամբ և տրամագորային փոխկանությունը նպաստում են դեմոկրատական պետությունների «խաղաղության-հակվածությանը» (Դոյլ, 1995ա, 180-4): Այդ ատրիբուտների բացակայությունը ոչ դեմոկրատական պետությունների «պատերազմի հակվածության» պատճառն է: Ներքին արժեքների և զսպումների բացակայության դեպքում ուժի տրամաբանությունը փոխարինելու է գալիս լիբերալ համաձայնության տրամաբանությանը:

• Ղենոկրատիաների միջև պատերազմները համարվում են հազվադեպ. նրանք ավելի հաճախ են շահերի կոնֆլիկտները կարգավորում

առանց սպառնալիքի կամ ռազմական ուժի օգտագործման, քան ոչ դեմոկրատական պետությունները: Ղենոկրատական պետությունների միջև շահերի կոնֆլիկտներ շարունակում են ծագել և կծագեն, սակայն համընդիանուր ընդունված նորմերը և ինստիտուցիոնալ զսպումները կնպաստեն, որ դեմոկրատիաները այդ վեճերը չշիկացնեն այն աստիճան, երբ նրանք սպառնան ռազմական ուժ կիրառել միմյանց նկատմամբ կամ էլ ուժ կիրառեն ամեն ինչում: Նրանք ավելի, քան մյուս պետությունները, իրենց անհամաձայնությունները կարգավորորում են միջնորդության, բանակցության կամ խաղաղ դիվանագիտության այլ ձևերով: Ղենոկրատիայի օգուտներից մեկն այն է, որ այդ տարածայնությունները տևական ժամանակ կառավարելի կլինեն, մինչ պետական թատերաբեմում նրանց ուժգին վեճեր դառնալը:

• Ղենոկրատական խաղաղության տեսությունը ամբողջովին չի մերժում ռեալիզմը՝ ակնարկելով, որ նույն լիբերալ դեմոկրատիաները միջազգային քաղաքականության մեջ ավելի շատ են տարածայնություններ ստեղծում, քան ռեալիստական հեղինակներն են ընդունում: Կարիք չկա դեն նետել ռեալիզմի այն ընկալումները, որոնց համաձայն, ուժային և ստրատեգիական ենթադրությունները ազդում են պետությունների՝ մեկը մյուսի դեմ պատերազմելու որոշումների վրա: Վտանգը ապրում է բոլորի պատերազմն ընդունելու բոլորի «վուլգար ռեալիստական» հայեցակետում, «որում սպառնալիքը, որն այլ պետություններն են առաջադրում, անմասն է նրանց ներքին նորմերից և ինստիտուտերից» (Բրյուս Ռասսեթը, 1995, 175):

• Ղենոկրատական արժեքները միայն ու միայն պետություններին պատերազմից խուսափել թույլատրող ազդեցություն չեն. ուժը և ստրատեգիական ազդեցությունները անկասկած ազդում են բոլոր պետությունների՝ ներառյալ դեմոկրատիաների կանխատեսումների վրա: Եվ հաճախ այդ ստրատեգիական ենթադրությունները կարող են գերակշռող լինել: Սակայն, դեմոկրատիայի համատարած ընդունումը կարևոր է միջազգային գործերում, և չպետք է անտեսվի անվտանգության դիլեման մեղմելու ու ավելի մեծ անվտանգություն ձեռք բերելու որևէ փորձ: Դա չի նշանակում, որ համընդիանուր ընդունված դեմոկրատական արժեքներն իրենց նպաստը կրերեն ավելի խաղաղ աշխարհին:

«Կոլեկտիվ անվտանգության» տեսության առանձքային ենթադրությունները*

• Թեպետ ռազմական ուժը՝ Realpolitik-ը, մնում են միջազգային կյանքի կարևոր բնութագրիչ, սակայն ներքին քաղաքականությունը, համոզնությունները և նորմերը ևս պետք է ներառվեն որպես պետության վարքագծի կարևոր դետերմինանտներ, որոնք թույլ կտան դուրս գալ ռեալիզմի ինքնարակ աշխարհից: Մերժում են այն գաղափարը, որ պետության վարքագիրը պարզապես միջազգային համակարգի կառուցվածքի արդյունք է, և փաստարկում են, որ գաղափարները ևս կարևոր են:

*Ծանոթ-ՁևՆ Միրսիեմերը փաստարկել է, որ կոլեկտիվ անվտանգությունը անխուսափելիորեն թերի է ինը հիմնական հետևանքով, ինչի պատճառով այն հավանաբար կծախողվի:

1. Պետությունները հաճախ դժվարանում են, եթե ոչ անկարող գտնվում, որպեսզի միջազգային կոնֆլիկտներում տարրերակում կատարեն «ազրեսորի» և «զոհի» միջև:
2. Կոլեկտիվ անվտանգությունը համարում է, որ բոլոր ազրեսիաները սխալ են, այն դեպում, երբ կարող են այնպիսի հանգամանքներ լինել, երբ սպառնացող հարևանի նվաճումը երաշխավորվի և արդարացվի:
3. Քանի որ որոշ պետություններ հատկապես բարեկամական են պատճական կամ գաղափարախոսական պատճառներով, անհավանական է, որ նրանք իրենց ընկերների դեմ կմիավորվեն որևէ կուպալիցիայում:
4. Պետությունների միջև պատճական թշնամությունը կարող է դժվարացնել կոլեկտիվ անվտանգության համակարգի արդյունավետ աշխատանքը:
5. Քանի որ ինքնիշխան պետությունները միտում ունեն ազրեսիային «վարձահատուց» լինելու գործում իրենց պատասխանատվությունը փոխանցել ինչ-որ մեկին, հաճախ դժվարություն է լինում թերի արդարացի բաշխման գործում:
6. Դժվարություններ են ի հայտ գալիս ազրեսիայի նկատմամբ արագ արձագանքնաման ապահովման ժամանակ պատահարի նախաճգնաժամային պլանավորման մեջ ներգրավվելուն նրանց հակված չլինելու պատճառով:
7. Պետությունները հաճախ հակված չեն միավորվելու կուլիցիայում, որովհետև հավանական է, որ կոլեկտիվ գործողությունը լոկալ կոնֆլիկտը փոխակերպի միջազգային կոնֆլիկտի:
8. Ղենուրատիաները պետական ինքնիշխանության պատճառով հակված չեն կոլեկտիվ գործողությանը միանալը ավտոմատ պարտավորություն դարձնել:
9. Կոլեկտիվ անվտանգությունը ենթադրում է հակասություն այն ուղիների հարցում, որոնցով ռազմական ուժն է դիտարկվում: Այն անընդունելի է համարվում, և պետությունները դեռևս պետք է հակված լինեն ագրեսորի դեմ այն օգտագործելու առումով:

Կոլեկտիվ անվտանգության դեպքում պետությունները համաձայնում են հավատարիմ մնալ որոշակի նորմերի և կանոնների, որպեսզի պահպան կայունությունը, և եթե անհրաժեշտ է միասին խմբավորվեն ազրեսիան կասեցնեն նպատակով (Զ. և Ք. Կուպչան 1995): Կոլեկտիվ անվտանգության դեպքում պետություններն իրենց անվտանգությունը բարելավվելու համար միջազետական հարաբերություններում պետք է համաձայնեն երեք հիմնական սկզբունքների:

1. Նրանք պետք է մերժեն ռազմական ուժի օգտագործումը ստատուս քվին վերածնելու նպատակով և փոխարենը համաձայնեն իրենց վեճերը կարգավորել խաղաղ ճանապարհով: Միջազգային հարաբերություններում փոփոխությունները հնարավոր կլինեն, սակայն հարկ է, որպեսզի դրանք ձեռքբերված լինեն ավելի շուտ բանակցությունների, քան թե ուժի միջոցով:

2. Նրանք պետք է ընդլայնեն ազգային շահերի իրենց հայեցակարգը նրանում միջազգային հանրությի որպես ամբողջության շահերը ներառելու համար: Դա նշանակում է, որ երբ համակարգում ցնցումներ առաջացնող ի հայտ գա, անհրաժեշտ է, որ բոլոր համապատասխան պետությունները ավտոմատ կերպով և կոլեկտիվ ծնով դիմակայեն ագրեսորին՝ կործանիչ ռազմական ուժով հանդերձ:

3. Պետությունները պետք է հաղթահարեն այն վախճ, որը գերիշխում է համաշխարհային քաղաքականությանը, և սովորեն վստահել մինյանց: Անվտանգության այդպիսի համակարգը կախված է «իրենց ճակատագրերը կոլեկտիվ անվտանգությանը» վստահող պետություններից (Ինկու Կլաուտի):

• Կոլեկտիվ անվտանգության ինստիտուտների հաստատումով պետությունների միջև բազմայա մրցակցության ամենավատագույն ծայրահեղությունների մի մասից կարելի կլինի խուսափել: «Կարգավորված ինստիտուցիոնալիզացված հաշվեկշռումը նախընտրելի է անարխիայի դեպքում չկարգավորված հաշվեկշռումից» (Զ. և Ք. Կուպչան, 1995):

Կոլեկտիվ անվտանգությունը որևէ ագրեսորի դեմ հաշվեկշռման ավելի արդյունավետ մեխանիզմ ապահովող ուղի է: Պոտենցիալ ագրեսորին գերազանցությամբ դիմակայելու ժամանակ կոլեկտիվ անվտանգության կառույցները այնպես են դասավորվում, որ հակաշռում, զապում ապահովեն, կամ էլ ավելի արդյունավետ գործողություն, եթե զսպողունակութեաւ պետք է հակված լինեն ագրեսորի դեմ այն օգտագործելու առումով:

թյունն ընկնում է:

• Կոլեկտիվ անվտանգության ինստիտուտները նպաստում են ավելի բարենպաստ միջազգային համակարգի ստեղծմանը: Անվտանգության համակարգի ինստիտուցիոնալացումը խոստանում է պետությունների շրջանակում խորացնել համաձայնությունները, ստեղծել ավելի մեծ վստահություն, որ պետությունները կարողանան իրենց եներգիաները և ռեսուրսները կենտրոնացնեն ավելի շատ սեփական ներքին բարեկեցության վրա, այն դեպքում, երբ ինքնարակ համակարգն իր սովորական ընթացքն է բռնում հավատալով, որ մեծ ուժային կոնֆլիկտ կրկին ի հայտ չի գա, և պետություններին հարկադրում է կենտրոնանալ ոչ արդյունավետ, ծայրահեղ ազգային անվտանգության կառույցների վրա:

• Չնայած կոլեկտիվ անվտանգության կառույցները, ինչպիսին Ազգերի լիգան էր, ձախողվել են անցյալում, սակայն չկա երկաթյա օրենք, որ նրանք պետք է ձախողվեն նաև ապագայում: Արդի միջազգային շրջակայքում պետությունների համար նման արժեքներ և շահեր դաշտանելու ավելի մեծ հնարավորություններ են առկա, քան անցյալում էր:

«Կոնստրուկտիվիստական» քննադատական տեսության առանձքային ենթադրությունները

• Միջազգային հարաբերություններն ազդված են ոչ միայն ուժային քաղաքականության, այլև գաղափարների կողմից: Միջազգային քաղաքականության հիմնարար կառուցվածքները ավելի շատ սոցիալական են, քան իսկապես նյութական:

• Ընդունելով, որ միջազգային քաղաքականությունը անարխիստական է, որ պետությունները հարձակողական ընդունակություններ ունեն, որ պետությունները չեն կարող բացարձակ կերպով որոշակիացած լինել այլ պետությունների մտադրութունների վերաբերյալ, որ պետությունները ցանկանում են գոյատևել, որ պետությունները փորձում են ռացիոնալ ձևով վարքաբանել (նեոռեալիստական ենթադրություններ), միաժամանակ կարծում են, որ առանձին պետությունների շահերը կարևորագույն իմաստով կառուցվածքավորված են միջազգային համակարգի կառուցվածքի կողմից: Միջազգային քաղաքականության հիմնային կառուցվածքները սոցիալապես են կառուցված և, փոխելով մտածողության ու-

ղին, մտահղացվում է այնպիսի միջազգային հարաբերությունների մասին, որոնք կարող են օժանդակել ավելի մեծ միջազգային անվտանգություն ձևավորելուն:

• Սակայն եթե նեոռեալիստները կառուցվածքը հանարում են միայն նյութական ընդունակությունների բաշխումից ձևավորվող, ապա «կոնստրուկտիվիստները» կարծում են, որ կառուցվածքը սոցիալական հարաբերությունների արդյունք է. Անշուշտ, սոցիալական կառուցվածքները ներառում են նաև այնպիսի նյութական իրեր, ինչպիսիք են տանկերը և տնտեսական ռեսուրսները, սակայն դրանք միայն իմաստ են ստանում ընդհանուր ճանաչողության կառուցվածքի միջոցով, որի մեջ նրանք տպավորված են: Յետևաբար սոցիալական կառուցվածքները կառուցվածք են այնպիսի տարրերից, ինչպիսիք են ընդհանուր ճանաչողությունը, նյութական պահուման կառուցվածքները. այսինքն՝ սոցիալական կառուցվածքները մասամբ սահմանվում են ընդհանուր կիսվող ընկալումների, ակնկալիքների կամ ճանաչողության միջոցով: Այսպես անվտանգության դիլեման միջանակության ընկալումներից կազմված սոցիալական կառուցվածք է, որի պարագայում պետություններն այնպես անհավատ են, որ նրանք ծայրահեղ հիվանդագին ենթադրություններ են ամուս միմյանց մտադրությունների վերաբերյալ և, որպես հետևանք, իրենց շահերը սահմանում են «ինքնարապության» առումով (Ալեքսանդր Վենդթ, 1992): Եվ հակառակ՝ անվտանգության համրությը ընդհանուր կիսվող ճանաչողությունից կազմված, որոշակիորեն տարբերվող սոցիալական կառուցվածք է, որի պարագայում պետությունները վստահում են միմյանց՝ վեճերն առանց պատերազմի լուծելու առումով:

• Ուժային քաղաքականության գաղափարը կամ Realpolitik-ը իմաստը ունի այնքանով, որ պետությունները գաղափարն ընդունում են որպես միջազգային քաղաքականության հիմնային կանոն: Ուժային քաղաքականությունը մի գաղափար է, որն էլ հենց ազդում է պետությունների վարքագիր ընթացքի վրա, սակայն այն չի նկարագրում բոլոր միջազնությունները: Պետություններն ազդվում են այլ գաղափարների կողմից ևս, ինչպիսիք են օրինականությունը և ինստիտուցիոնալ համագործակցության ու զայման կարևորությունը: Անվտանգության դիլեմաները և պատերազմները արդյունք են ինքնուրույնաբար իրականացվող մարդարենության: «Փոխադարձության տրամաբանությունը» նշանակում է, որ պետությունները ընդհանուր ճանաչողություն են ծեռք բերում ուժի իմաս-

տի վերաբերյալ և գործում են հաճապատասխանաբար: Վերավստահեցման քաղաքականությունները ևս կարող են օժանդակել ընդհանուր ճանաչողության կառուցվածք հարուցելուն, որը կարող է պետություններին մղել դեպքի ավելի խաղաղ անվտանգության հանրույթ (Ալեքսանդր Վենդթ, 1992):

• Ունանց համար այն փաստը, որ կառուցվածքները սոցիալապես են կառուցված, բավարար չէ անվտանգության դիլեման բացառելու համար: «Դաճախ սոցիալական կառուցվածքները այնպես են զսպում գործողությունը, որ փոխակերպող ստրատեգիաներն անհնար են» (Ալեքսանդր Վենդթ, 1995, 80): Ուրիշներն ավելի լավատես են և համարում են, որ միջազգային համակարգում բավարար չափով «չօգտագործված ներուժ» է առկա, որը պետություններին ավելի շատ բույլ է տալիս խաղաղ սոցիալական փոփոխության քաղաքականություն վարել, քան թե ներգրավվել իշխանության համար հավերժական մրցակցային պայքարում:

Պոստմոդեռնիստական մոտեցման առանձքային ենթադրությունները

• Գաղափարները նշանակություն ունեն, սակայն միջազգային քաղաքականության և անվտանգության վերաբերյալ դիմուրները կարևոր դեկապարող ուժն են, որոնք ձևավորում են պետությունների վարքաբանության ուղիները: Ուեալիզմը միջազգային ոչ անվտանգության առանձքային հիմնախնդիրից մեկն է, որովհետև ուեալիզմը ուժի և կանոնի դիմուրս է, որն անցյալում դոմինանտ է եղել միջազգային քաղաքականության մեջ, և որը խրախուսել է անվտանգության մրցակցությունը պետությունների կողմից (Ռիչարդ Աշլի, 1984): Ուժային քաղաքականությունը այն աշխարհի կերպարն է, որը խրախուսում է պատերազմի հարուցմանը օժանդակող վարքաբանությունը: Ուժը հաշվեկշռելու փորձն իր հերթին մասն է այն նույն վարքագծի, որը հանգեցնում է պատերազմի: Դաշնակցությունները խաղաղություն չեն ստեղծում, այլ հանգեցնում են պատերազմի (Զոն Վասքեզ, 1983):

• ճանաչողության հիմքների վրա շեշտադրումները հանգեցնում են նորմատիվ արժեքների կարևորությանը: Ուեալիզմը դիտարկվում է ոչ միայն որպես վիճակագրություն կատարող գաղափարախոսություն՝ մեծապես

անմասն գլոբալացման միտումները շոշափելուց, որոնք տեղի են ունենում քաղաքականության աշխարհում, այլ նաև որպես վտանգավոր դիսկուրս, որը մի նոր և ավելի խաղաղ հեգեմոնիկ դիսկուրս հաստատելու ջանքերի գլխավոր խոչընդոտն է, որովհետև այն հավակնում է ունիվերսալ տեսակետ ապահովել, թե ինչպես է կազմակերպված աշխարհը, և ինչ պետք է անեն պետությունները, եթե նրանք ցանկանան գոյատևել:

• Մերժում են ռեալիզմի «արսուրդ, կույր որոշակիությունը»: Մարդկային վարքագծի անորոշությունը և հսկայական բարդությունը՝ ողջ մշակութային, կրոնական, պատմական և լեզվական վարիացիաներով, նշանակում է, որ չի կարող գլոբալ իրականության միակ մեկնաբանությունը լինել: Ուեալիզմի դեպքում հիմնախնդիրն այն է, որ համաշխարհային քաղաքականության բարդությունները ընկալման միակ, խստագույն կարգավորված շրջանակին հանգեցնելու միջոցով միջազգային անվտանգության նկատմամբ բացառվում են այլընտրանքային մեկնաբանությունները և մոտեցումները: Իսկ եթե աշխարհը պատկերացվում է անարխիայի առումով, ապա «ուժային քաղաքականությունը» կհամարվի որպես «ոչ անվտանգության» պրոբլեմի լուծում: Իսկ եթե անարխիան և ուժային քաղաքականությունը չհամարվեն որպես գլոբալ պատմության բնորոշ գիծ, ապա անվտանգության նկատմամբ մյուս՝ ավելի խաղաղ մոտեցումները կկարողանան փորձարկվել:

• Գլոբալ անվտանգության վերաբերյալ քննարկումը պետք է վերակռնեապուրալացնել՝ դիտարկելով այն հարցադրումները, որոնք ավանդական մոտեցումների կողմից անտեսվել կամ մարգինալացվել են: Մասնավորապես, «ռազմա-արդյունաբերական գործերում պետության ներգրավման և գլոբալ տնտեսության վտանգավոր վիճակին առնչվող ոչ անվտանգության ածող գգացողության» հիմնախնդիրները, ինչպես նաև բոլոր նրանց ճակատագիրը, ովքեր ոչ անվտանգ են դարձել կյանքով՝ ապրելով գոյատևման սահմանին, դեռևս չհայտնված ռազմական ծախսերի և ստրատեգիական կանխատեսումների վերաբերյալ վիճակագրություններում» (Զիմ Զորջը, 1994):

• Այդ հարցերը անվտանգության վերաբերյալ նոր կոմունիտար դիսկուրս են պահանջում, և այն նաև հասանելի նպատակ է, եթե փորձագետները, և հատկապես ակադեմիական հեղինակներն իրենց կարևոր դերը խաղաղ համաշխարհային քաղաքականության վերաբերյալ գաղափարների հոսքի» վրա ազդելու, միջազգային քաղաքականության վերաբեր-

յալ դիսկուրսի ու նրա լեզվի փոխակերպման գործում, իսկ «էպիստեմիկ հանրույթները»՝ կոնունիտար իդեալների տարածման գործում: Այդ դեպքում գլոբալ քաղաքականության ողջ բնույթը կարող է փոխակերպվել, իսկ ավանդական անվտանգության դիլեման կարող է հաղթահարվել:

• Ելքը ռեալիզմի դիսկուրսների փոխարինումն է «կոնունիտար դիսկուրսներով», որոնք շեշտադրում են խաղաղությունը և ներդաշնակությունը. ռեալիզմի «քաղանթային, նայր» ծրագիրը, որը ժողովուրդները կրում են իրենց ուղեղներում պետք է փոխարինվի կոնունիտար նորմերի, անհատների, պետությունների և տարածաշրջանների վրա հենվող նոր «քաղանթային» ծրագրով, որը կսպոռեցնի նիմյանց հետ համագործակցել, իսկ գլոբալ քաղաքականությունը կդառնա ավելի խաղաղարար:

• Եթե ռեալիստները տեսնում են ֆիքսված և ճանաչելի աշխարհ, ապա պոստմոդեռնիստները տեսնում են հնարավորությունը «աշխարհի անավարտ մեկնարանությունների, որով մեկ... չկա ոչ մի հաստատում, ոչ մի ֆիքսված իմաստ, ոչ մի անվտանգ տեղավայր, ոչ մի խորքային գաղտնիք, ոչ մի վերջնական կառուցվածք կամ պատմության սահման... կա միայն մեկնարանություն... Պատմությունն ինքն էլ ընկալվում է որպես մեկնարանություններին վրադրված մեկնարանությունների շարք՝ ոչ առաջնային, այլ ամբողջովին կամայական» (Զոն Միրսիեյմեր, 1994, 42-3):

Գլոբալիստական մոտեցման առանձքային ենթադրությունները

• Համարում են, որ միջազգային հարաբերությունների վերաբերյալ պետականակենտրոն տեսակետին այժմ գնալով մարտահրավեր է նետ-վում: Գլոբալացման գործներացն արագացել է այն աստիճան, «որ գլոբալ հասարակության հստակ եզրագծերն» այժմ ակնհայտ են: Գլոբալ տնտեսական համակարգի, գլոբալ հաղորդակցությունների ի հայտ գալը և գլոբալ մշակույթի տարրերն օգնել են ապահովելու սոցիալական հարաբերությունների լայն ցանց, որն անցնում է պետության սահմաններից այն կողմ և շրջապատում է ժողովուրդներին ողջ աշխարհով մեկ: Միևնույն ժամանակ, մարդկությունը շրջակա միջավայրի և զանգվածային ոչնչացման գենքերի հետ ասոցացված նոր ռիսկերին է դիմակայել ճիշտ այն ժամանակ, երբ ազգ-պետությունը ճգնաժամների մեջ է:

• Գլոբալացումը անհամաշափ և հակասական գործներաց է: Սառը պատերազմի ավարտը բնութագրվեց ոչ միայն գլոբալ սոցիալական շարժման տիրույթի ստեղծմանը և ածող գլոբալ տեղեկացվածությամբ, այլ նաև ազգ-պետությունների ֆրազմենտացիայով: Արևելք-Արևմուտք առճակատման ավարտի հետ մեկտեղ «արևմտյան քաղաքացիական հասարակության գաղափարախոսական շաղախը տարրալուծվել է» (Մարտին Շոու, 1994, 170): Որպես հետևանք, ամբողջական հանրույթներ՝ ներայալ «գյուղերը և քաղաքները, էթնիկ խմբերը, նրանց ապրելու ուղիները, սոցիալական կազմակերպման ավանդույթները և ծեսերը վտանգված են, որոնց հետ մեկտեղ՝ անհատների կենսաձևերը և բարեկեցությունը» (Մարտին Շոու, 1994, 172):

• «Պետականությունների ջարդման» արդյունքն է դարձել մեծ տերությունների միջև կոնֆլիկտների տեղափոխվելը դեպի պետությունների ներսում ու պետական սահմանների երկայնքով կրոնական, էթնիկ և ազգայնական հակամարտությունների կողմից հարուցված ոչ անվտանգության նոր ծեսերի: Նման կոնֆլիկտները, որոց դեպքերում ներառելով ցեղասպանություն և «էթնիկ զտումներ», միջազգային հանրույթի առաջ կրիտիկական խնդիր են դնում՝ արդյոք միջամտել ինքնիշխան պետությունների ներքին գործերին, որպեսզի պաշտպանեն փոքրամասնությունների իրավունքները և անհատ մարդու իրավունքները:

• Գնալով անհրաժեշտ է դառնում ի հայտ եկող գլոբալ հասարակության ներսում մտածել խմբերի և անհատների անվտանգության մասին: Ազգային կամ պետական անվտանգության (և ինքնիշխանության) վրա ավանդական կենտրոնացումն այլևս չի արտացոլում այն արմատական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում: Պահանջվում է գլոբալ պատասխանատվության նոր քաղաքականություն՝ կառուցված գլոբալ անհավասարության, աղքատության և շրջակա միջավայրի հիմնախնդիրների, ինչպես նաև մարդու իրավունքների, փոքրամասնության իրավունքների, դեմոկրատիայի և անհատական ու խմբային անվտանգության շեշտադրումների վրա, որոնք լայնությամբ հասուն են դրմինանտ շահերը թե՛ աշխահի մասշտաբում, թե՛ յուրաքանչյուր պետության ներսում: Ավելի շատ գլոբալիստական, քան թե ազգային կամ միջազգային առումներով մտածողությունը կհանգեցնի ավելի արդյունավետ գործառնության (ներառյալ միջամտությունը, եթե անհրաժեշտ է) գործ ունենալու համար այն ռիսկերի հետ, որոնք գոյություն ունեն համաշխարհային համ-

րույթում:

• Անվտանգության նկատմանը գլոբալիստական մոտեցումը հենվում է ուսուպիստական ռեալիզմի վրա (Ենտոնի Ջիլենս, 1990, 154-8): Դրա համաձայն՝ միջազգային քաղաքականության արմատական փոխակերպումը «ռեալիստական է», քանզի մենք դրան ականատես ենք եղել անցյալում: Իրականում այդպիսի փոխակերպում արդեն իսկ տեղի է ունենում: Ուսալիստական է դիտարկել տարածաշրջանային այն «անվտանգության հանրությունների» էքսպանսիան, որոնք արդեն իսկ առկա են ավելի ընդարձակ անվտանգության հանրույթի ներսում: Հնարավոր է, որ ականատես լինենք իսկայական հյուսիսային անվտանգության հանրույթի ի հայտ գալուն: Այն տարածվում է Հյուսիսային Ամերիկայից ու Արևմտյան Եվրոպայից դժվար նախկին ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի գլխավոր պետություններ ու ճապոնիա, Արևելյան Ասիայի նոր ինդուստրիալացվող պետություններ և Ավստրալիա: Նշմարում են այլ տերություններ ևս, ներառյալ Չինաստանը, Հնդկաստանը, Եգիպտոսը և Հարավային Աֆրիկան, որոնք ներգրավված են այդ հանրույթի տարաշրջանային ընդլայնումներում (Մարտին Շոու, 1994): Այդպիսի հայեցակետի հիմքում գլոբալ հաղորդակցությունների գործընթացն է, որը կարող է օգնել, որպեսզի ստեղծվի մի նոր կոնսենսուս նորմերի և համոզմունքների վրա, որոնք իրենց հերթին կարող են փոխակերպել գլոբալ անվտանգության բնույթը:

6.4 Ազգային անվտանգության ապահովման սկզբունքները

Մինչ այժմ դիտարկված բոլոր հարցադրումներում ուղղակի թե անուղղակի կերպով շոշափվել են ազգային անվտանգության ապահովման սկզբունքներին առնչվող հարցեր: Մասնավորապես, «Անվտանգության հետամտման ուղիները և ելակետերը արտաքին կենսական միջավայրում» բաժնի ներքո, կենսական միջավայրի վիճակի վերաբերյալ ունեցած ընկալումներից կախված, շարադրվեցին անվտանգության հետամտման համապատասխան սկզբունքները: Նույնատիպ հարցեր քննարկվել են նաև անվտանգության ապահովման տարածական, ժամանակային, եներգետիկ չափումների դիտարկման ժամանակ: Անշուշտ, ազգպետության համար կենսական միջավայրի «արտաքին» բաղադրիչը մե-

ծապես կարևոր է պետությունների փոխախմբաժության աճի, ինչպես նաև անհրաժեշտ ռեսուրսների հայթայթման մեջ հնարավորությունների պատճառով: Սակայն պակաս կարևոր չեն նաև կենսական միջավայրի «մերքին» բաղադրիչը:

Ըստ իս, ազգային անվտանգության ապահովումը պահանջում է հետևյալ սկզբունքների բավարարումը:

• Ազգային անվտանգության օրյեկտ(ներ)ի հստակ դասակարգում, նրանց կենսագործունեության տարբեր ասպեկտների հետ կապված նպատակների, լուծման կարոտ խնդիրների առաջադրում:

• Անվտանգության օրյեկտի բոլոր բաղադրիչներին կենսական միջավայրին, սոցիալական կառուցցին ու նրա գործունեության համակարգին սպառնացող վտանգների, սպառնալիքների, նրանց գործողության բնույթի, ձևի ու չափի հնարավորինս հստակ ախտաճանաչում, գնահատում:

• Ազգ-պետություն համակարգի հնքնարավ գործառնության ապահովում: Այդ նպատակով բնականոն ու կայուն զարգացման ի գորու ներքին կառուցվածքների, ինստիտուտների ապահովում, հասարակության մակարդակով անվտանգության հանրույթի, ռեժիմի, համալիրի ձևավորում:

• Ազգային անվտանգության օրյեկտի՝ ազգ-պետության համակարգի ռազմա-քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային ընդունակությունների ընդլայնում և զարգացում:

• Ազգային անվտանգության բոլոր բաղադրամասերի համար անվտանգության և ոչ անվտանգության չափանիշների սահմանում և մշտական վերահսկողության, մոնիթորինգի իրականացում:

• Կտանգներին դիմակայման, հակագրման և կառավարման պետական ու հասարակական մեխանիզմների, նրանց վրա ներգրածության համարժեք մեթոդների համակարգի ձևավորում:

• Անվտանգության համակարգային ապահովում միաժամանակ անվտանգության բոլոր բաղադրամասերի (հանրային-նորմատիվ կարգ, տնտեսություն, քաղաքականություն և մշակույթ), բոլոր մակարդակների համար, այդ նպատակով ֆունկցիոնալ առումով ամբողջական անվտանգության համակարգի ձևավորում:

• Անվտանգության պետական ու հանրային ինստիտուտների, նորմատիվային դաշտի ձևավորում, այդ թվում և անվտանգության հայեցակարգի ու դոկտրինի մշակում, առաջնահերթությունների, նպատակների առաջադրում ու դրանց հետամտման հստակ, այլընտրանքային ուղիների

մշակում, անվտանգության մասնագիտացված հանրույթի անդամների հավաքագրում, օպտիմալ դերաբաշխում, հաղորդակցման ու փոխազդեցության ձևերի մշակում:

• Ազգային անվտանգության ապահովման գործում ոչ միայն պետական մարմինների, այլ նաև հասարակության անդամների ու կոլեկտիվների ներգրավում:

7) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԻ ԻՆՉ ԳՆՈՎ

Այս հարցադրումը անվտանգության պրոբլեմատիկայի ուսումնասիրության համար վերը առաջադրվածներից ամենավերջին և, կարելի է ասել, հանրագումարային հարցադրումն է, քանզի այն օգնում է գնահատել անվտանգության վերաբերյալ սուբյեկտի պատկերացումների, նրա կողմից մշակված անվտանգության քաղաքականության, անվտանգության հայեցակարգում առաջադրված խնդիրների լուծման մեխանիզմների ու պրակտիկայում դրանց իրացման արդյունավետությունը: Այսինքն՝ այս հարցադրման ներքո են ամփոփվում նախորդ վեց հարցադրումների պատասխանները:

Ըստ Էռլեյան, մի կողմից նժարի վրա է դրված անվտանգության հետ կապված ու առաջադրված խնդիրների լուծման, անվտանգության նպատակների ու նրանց ձեռքբերում ապահովող եղանակների գիմը, իսկ մյուս կողմից՝ անվտանգության ձեռք բերված կամ ակնկալվող նպատակների գիմը:

«Ազգային անվտանգության ապահովման սկզբունքները» բաժնի ներքո թվարկված սկզբունքները, անշուշտ, անուղղակի հղում ունեին անվտանգության գմին ու նրա վերաբերյալ պատկերացումներին: Սակայն «Անվտանգություն ի՞նչ գնով» հարցադրման պատասխանները ներկայացնենք նախորդ վեց հարցադրումների պատասխանների ամփոփման տեսքով.

1. «Ինչ է անվտանգությունը» հարցադրման համատեքստում անվտանգության քաղաքականությունը չի կարող մտահղացվել այնպես, որ՝

• ուղղորդված լինի ոչ թե դեպի սպառնացող վտանգից երկարաժամկետ, այլ դրանցից սուսկ կարճաժամկետ ազատության ձեռքբերումը, նրանց գործունեության համակարգի ժամանակավոր կասեցումը,

• տարածության որևէ տիրույթում վտանգների չեզոքացման, կառավարման արդյունքում դրանք տեղափոխվեն այլ տիրույթներ, մակարդակներ,

• արդյունքում անվտանգության օբյեկտի համար նվազ ինտենսիվությամբ վտանգները փոխարինվեն ավելի մեծ ինտենսիվության վտանգների, որոնք էլ անխուսափելիորեն հանգեցնեն պատերազմի, նրա սպառնալիքի, կամ էլ այլ նորանոր վլանգների:

2. «Անվտանգություն ո՞ւ ի համար» հարցադրման համատեքստում անվտանգության քաղաքականությունը չի կարող մտահղացվել այնպես, որ՝

• չպատճառաբանված կերպով գերկարևորվեն կամ թերագնահատվեն պետական անվտանգությունը, հասարակության անվտանգությունը, անհատի անվտանգությունը, անվտանգության այս կամ այն բաղադրամասը, որ արդյունքում անհիմն կերպով խախտվի տարբեր մակարդակների հետ կապված արժեքների, նպատակների առաջնահերթությունն ու հիերարխիան:

3. «Անվտանգություն ո՞ր արժեքների համար» հարցադրման համատեքստում անվտանգության քաղաքականությունը չի կարող մտահղացվել այնպես, որ՝

• անվտանգության նպատակները առնչություն չունենան անվտանգության օբյեկտների հետ, հետապնդեն չարդարացված ու չիմնավորված նպատակներ, արկածախնդրություն, լինեն ինքնանպատակ, առաջադրված սուբյեկտիվ նկատառումներով և պայմանավորված՝ սուբյեկտիվ իրողություններով:

4. «Անվտանգություն ո՞ր սպառնալիքներից» հարցադրման համատեքստում անվտանգության քաղաքականությունը չի կարող մտահղացվել այնպես, որ՝

• մեկ սպառնալիքից, վտանգից ազատության ձեռքբերումն ուղեկցվի այլ վտանգներ, սպառնալիքներ պատճառելու գնով, թերագնահատվեն կամ գերագնահատվեն կոնկրետ վտանգները:

5. «Անվտանգություն ի՞նչ չափով» հարցադրման համատեքստում անվտանգության քաղաքականությունը չի կարող մտահղացվել այնպես, որ՝

• ազգ-պետություն համակարգի մի կառույցի, մարմնի, միավորի, կենսագործունեության մի ոլորտի անվտանգության ապահովումը լինի այլոց

հաշվին, որ անվտանգության մի նպատակի ձեռքբերումը լինի մեկ այլ կենսական նպատակի հաշվին:

6. «Անվտանգություն ի՞նչ միջոցներով, եղանակներով» հարցադրման համատեքստում անվտանգության քաղաքականությունը չի կարող մտահղացվել այնպես, որ՝

• անվտանգության նպատակի ձեռքբերման համար պահանջվող ռեսուրսների, կորուստների գինը ավելին լինի, քան այդ նպատակի գինն է, որ անվտանգության ապահովման եղանակի, միջոցի ընտրությունը հանգեցնի ոչ թե անվտանգության, այլ ոչ անվտանգության:

Ազգային անվտանգության հայեցակարգ եվ դոկտրին հասկացությունների փոխհարաբերությունը եվ ընդգրկումը

Ազգային անվտանգության հայեցակարգը և դոկտրինը կազմում են ԱԱՀ-ի նորմատիվային ենթահամակարգի քաղկացուցիչ մասը: Իրավունքի տեսանկյունից թեպետ նրանք անուղղակի աղբյուր են դիտվում, սակայն չեն մտնում նորմատիվային ակտերի համակարգի մեջ: Վերջիններս սոսկ նորմաստեղծ և քաղաքականություն մշակող ու իրականացնող մարմիններին կողմնորոշելու, ազգային անվտանգության ոլորտի նորմատիվային ակտերի մեկնաբանման գործառույթ ունեն:

Ազգային անվտանգության դոկտրինը (doctrina՝ լատ. ուսմունք) անվտանգության բնագավառում դեկավարող տեսական-քաղաքական սկզբունք է, որը կոնցենտրացված տեսքով արտահայտում է անվտանգության տնտեսական, ռազմա-քաղաքական, սոցիալական ու մշակութային քաղադրանասերի կողմնորոշիչներն ու նպատակները, ինչպես նաև նրանց պրակտիկ իրականացման ձևերը:

Այսինքն՝ ազգային անվտանգության դոկտրինը ներառում է հետևյալ տարրերը:

- ազգային անվտանգության իդեալները, գարգացման ցամկալի միտումների պլանավորումը,
- ազգային անվտանգության քաղադրանասերի հիմնական նպատակները կոնցենտրացված տեսքով, որոնց ձեռքբերումը անհրաժեշտ և/կամ ցանկալի է անվտանգության առումով,

• այդ նպատակների ձեռքբերման ուղիներն ու եղանակները:

Ըստ էության, ազգային անվտանգության դոկտրինը գերազանցապես կապված է «ի՞նչ է անվտանգությունը» բաժնում հիշատակված գործառույթների ա) խմբի ու նրանց հետապնդած նպատակների հետ, որոնք առնչվում են ավտանգության ամրապնդմանը, անվտանգության դաշտի ընդլայնմանը:

Ազգային անվտանգության հայեցակարգը (conceptio՝ լատ. ընկալում) անվտանգության քաղաքականության ամբողջական, համակարգային հիմնավորումն ապահովող փաստաթուղթ է, որը նախատեսում է անվտանգության հետ կապված առաջադրվող խնդիրների լուծման ուղիները, ինչպես նաև դրանց լուծման համար իշխանության ու կառավարման կառուցվածքների ստեղծումը, համապատասխան կապերի և հարաբերությունների ապահովումը: Այն անվտանգության վերաբերյալ հայացքների, գաղափարների, նպատակային տեղակայումների համակարգ է, որն ամբողջությամբ «ներծծված» է հիմնարար գաղափարներով, միասնական և վճռորոշ մոտեցումներով և բովանդակում է անվտանգության խնդիրների դրվածքն ու նրանց լուծման ուղիները:

Ազգային անվտանգության հայեցակարգը դոկտրինալ փաստաթուղթ է, բխում է դոկտրինայից և լրացնում է նրան: Ակնհայտ է, որ ազգային անվտանգության հայեցակարգը պետք է բավարարի ԱԱՀ-ի ենթահամակարգերին ներկայացվող բոլոր պահանջներին, ավելի ճիշտ «նախագծի» ԱԱՀ-ն: Այն պետք է սահմանի նրա բոլոր ենթահամակարգերի քաղկացուցիչ տարրերը, այն գործուն մեխանիզմներն ու միջոցառումները, որոնք ուղղված կլինեն ազգային անվտանգության օբյեկտների անվտանգության ապահովմանը, պետք է նաև ներառի այն գործառույթները, նորմերը, արժեքները, ինստիտուտները և մասնագիտացված հանրույթը, որոնք պետք է ապահովեն ազգային անվտանգության օբյեկտ(ներ)ի անվտանգությունը:

Ազգային անվտանգության հայեցակարգը հանդես է գալիս իրեն անվտանգության ոլորտում տեսական դրույթների և պրակտիկայի փոխադարձ կապի յուրօրինակ ձև: Ուստի այն «օրենք» է տեսության մեջ, որի նախատեսած ինստիտուտների, կառույցների նպատակը պետք է լինի ազգային անվտանգության դոկտրինայում ամրագրված նպատակների ձեռքբերումը, պրակտիկայում գործող նորմատիվ ակտերի և իրականու-

թյան համապատասխանեցումը այդ իդեալների ու ցանկալի միտումների հետ: Բացի ազգային անվտանգության ոլորտի նորմատիվային ակտերի մեկնաբանման և օրենսդրության ձևավորման գործում ուղղորդիչ գործառույթից, նրա նպատակը պետք է լինի նաև ազգային անվտանգության այս կամ այն մակարդակում, այս կամ այն բաղադրամասում ծագած հիմնախնդիրների լուծման ընդհանուր մեխանիզմների սահմանումը, վտանգների կառավարման մեխանիզմների առաջադրումը, իսկ կոնկրետ հիմնախնդիրների հանգանակալից լուծումները պետք է ապահովեն այլ նորմատիվային ակտերով:

Ազգային անվտանգության հայեցակարգի մշակման մեթոդաբանական սկզբունքները

Ազգային անվտանգության հայեցակարգը ձևավորվում է անվտանգության սուբյեկտի կողմից անվտանգության օբյեկտի բաղադրիչների, վտանգների էական, հիմնական հարաբերությունների ու խորքային կապերի նպատակամետ ճանաչման, առաջադրված նպատակների իրականացման նոր մեթոդների, նոր գաղափարների յուրացման ու իմաստավորման գործընթացում:

Այն պետք է ներառի հետևյալ տարրերը.

- անվտանգության առաջադրված խնդիրների հետ կապված հիմնական տեսական տեղակայումների համախումբը ու նրանց լուծման ուղիները,

- անվտանգության կառույցների, ինստիտուտների գործունեության հիմնական ուղղվածությունը,

- առաջադրված հիմնախնդիրի տեսական ու քաղաքական մոտեցումների, հայացքների իրացման մեխանիզմները:

Այսինքն՝ ազգային անվտանգության հայեցակարգի մշակումը ենթադրում է կոնկրետ երկրի համար կանխավ սույն ուսումնասիրության մեջ առաջադրված 7 հիմնային հարցերի պատասխանների բավարարում:

Ուսումնասիրության ընթացքում տարրեր բաժինների ներքո ուղղակի թե անուղղակի քննարկվեցին ազգային անվտանգության հայեցակարգի մշակման որոշ մեթոդաբանական նպատակահարմարություններ ու հար-

ցեր: Ուստի չկրկնելու համար անդրադառնանք նրա կառուցվածքի, տեղի ու դերի հետ կապված մի քանի էական խնդիրների:

Հայեցակարգի՝ որպես ազգային անվտանգության համակարգը նախագծող փաստաթղթի մշակման ժամանակ չափազանց կարևոր է պարզել, թե կոնկրետ հասարակության որ համակարգի շրջանակներում է այն գտնվում. այն հասարակության հիմգերորդ համակա՞րգն է, կամ համակարգ է, որի տարրեր մասերը միաժամանակ հասարակության տարրեր համակարգերո՞ւմ են, թե՝ այն կոնկրետ համակարգի բաղադրիչ է: Պատասխանը միանշանակ է: ԱԱՀ-ն քաղաքական համակարգի մասն է, անվտանգության քաղաքականությունը՝ նրա ելքը: Իսկ հասարակության այն համակարգը, որի հիմնական գործառույթը նպատակների ձեռքբերումն է, ինչպես վերը նշվեց, դա քաղաքական համակարգն է: Ուստի ԱԱՀ-ի կառուցվածքը պետք է անալոգային, ներդաշնակ լինի հասարակության քաղաքական ենթահամակարգին: Այսինքն՝ ԱԱՀ-ն պետք է արտապատկերի սոցիալական տարածության, և մասնավորապես հանրային իշխանության կազմակերպման բնույթը: Մյուս կողմից, պատճառներից է նաև այն, որ հասարակական մյուս ենթահամակարգերի նկատմամբ քաղաքականը գերակա դիրք ունի, նրա որպիսությունն է թելադրում մյուս ենթահամակարգերի կազմակերպումը, և, վերջապես, նրա ինստիտուցիոնալ համակարգի միջուկն է կազմում պետությունը, որին էլ առաջին հերթին վերապահված է անվտանգության, պաշտպանության ու այլ բացառիկ գործառույթների իրականացումը:

Ազգային անվտանգության համակարգի անընդհատ հիշատակումից գուցե և տպավորություն է ստեղծվում, թե նա քաղաքական համակարգի ինքնուրույն, ամբողջից որոշ չափով մեկուսացված ենթահամակարգ է: Սակայն ճիշտ հակառակն է: Ազգային անվտանգության համակարգը ողջ հասարակության մեջ ներթափանցած, նրա համակարգերի հետ ընդառնակի հատումներ ունեցող ենթահամակարգ է: Եվ դա գերազանցապես հասարակության համակարգերի փոխներթափանցման շնորհիվ, որոնց ընդհանուր հատման տիրույթները, որպես կանոն, կառուցվածքային գոյացությունների գոտիներ են հանդես գալիս: Այսպես, դերային իմաստով, քաղաքական գործիչը, ակադեմիական գիտնականը, մշակութային գործիչը և այլք, բացի իրենց մասնագիտական դերից, անվտանգության դաշտում ևս կարող են ունենալ դեր: Եվ, ինչպես նշվեց

«Անվտանգություն ի՞նչ միջոցներով» բաժնում, նրանց այդ բազմակարգավիճակայնության դեպքում երբեմն մասնագիտական դերը ամենափոքրն ու մարգինալն է լինում: Նույնը և ինստիտուտներին, նորմերին, արժեքներին է վերաբերում: Ինքնիշխանությունը ոչ միայն հանրույթի ու պետական իշխանության ազատության, հանրույթի համար կենսական նշանակություն ունեցող հարցերով ինքուրույնաբար որոշումների կայացումը, այլ նաև անվտանգությունը ապահովող արժեք է: Եվ այդպես՝ բոլոր դերերի ու կարգավիճակների, արժեքների, գործառույթների ու նորմերի համար:

Եթե վերը երեք կետով շարադրվեցին այն պահանջները, որոնց պետք է բավարարի ազգային անվտանգության հայեցակարգը, ապա մեթոդաբանական առումով խնդիր է առաջանում՝ անվտանգության բաղադրամասերից ո՞րը պետք է կազմի հայեցակարգի առանցքը, և որոնք պետք է համալրեն այն: Ինչպես տարբեր երկրների անվտանգության հայեցակարգերն են ցույց տալիս, առանցքը, այնուամենայնիվ, ռազմաքաղաքական բաղադրամասն է: Մյուսները դասավորվում են այդ առանցքի շուրջը և սպասարկում նրան: Անշուշտ, խոսքը չի վերաբերում ռազմատենչ անվտանգության հայեցակարգի մշակմանը, այլ, ինչպես նշվեց, անվտանգության ապահովման միջոցները ռազմա-քաղաքական անվտանգության բաղադրիչին նրբորեն ծառայեցնելուն:

Օրինակ՝ 1999թ. մշակված «ԱՄՍ ազգային անվտանգության ռազմավարությունը նոր հարյուրամյակի համար» փաստաթղթում, ինչպես նախկինում, առաջ են քաշված երեք գլխավոր նպատակներ՝ անվտանգության անրապնդում, որը հասկացվում է իրեն բանակի մարտունակություն, Ամերիկայի տնտեսական ծաղկման օժանդակում և այլ երկրներում դեմոկրատիային աջակցություն ու պահպանում: Միևնույն ժամանակ, ԱՄՆ նախագահի սահմանադրական պարտականությունը և գլխավոր խնդիրն է ազգային անվտանգության պաշտպանությունը: Ընդ որում, այդ պաշտպանությանը օբյեկտ են համարվում ժողովուրդը, տարածքը և կենսակերպը, իսկ պաշտպանություն պահանջող բարձրագույն արժեք է ճանաչված ամերիկյան ժողովուրդը: Այսինքն՝ առաջնային օբյեկտ են համարվում սոցիալական համակարգի տարածքային, սոցիալական հիմքերը:

Ուսասատանի ազգային անվտանգության հայեցակարգում ազգային անվտանգությունը հասկացվում է որպես քաղաքացիների, հասարակու-

թյան և պետության՝ կենսականորեն կարևոր շահերի, ինչպես նաև ազգային արժեքների և կենսակերպի պաշտպանվածություն ներքին և արտաքին սպառնալիքների ընդարձակ սպեկտրից, որոնք իրենց բնույթով տարբեր են (քաղաքական, ռազմական, տնտեսական, ինֆորմացիոն, էկոլոգիական և այլն) (Էջ 6-7)³¹:

ԱՄՆ-ի դեպքում ակնհայտ է, ռազմաքաղաքական բաղադրամասի առանցք, առաջնայնություն լինելը, ինչպես նաև տնտեսական անվտանգության կարևորումը, քանզի, ինչպես նշվել է, տնտեսությունը բազիսային նշանակություն ունի քաղաքական համակարգի համար: Կարևորվում է նաև «այլ երկրներում դեմոկրատիային աջակցելը»՝ որպես սեփական քաղաքական համակարգի արտաքին շրջակայքի վերահսկողությունը, տնտեսական նոր ռեսուրսների ձեռքբերումն ապահովող նպատակ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
1. «Անվտանգություն» հասկացության բնորոշումը	4
1) Ի՞նչ է ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ	5
2) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՄ ՀԱՄԱՐ	13
2.1. Անվտանգության օբյեկտի և անվտանգության տարածական չափումը	17
2.2 Անվտանգության օբյեկտի և անվտանգության ժամանակային չափումը	20
2.3 Անվտանգության օբյեկտի և անվտանգության էներգետիկ չափումը	27
3) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ	31
3.1 Ազգային անվտանգություն հասկացության հարաբերակցությունը պետական անվտանգություն հասկացության հետ:	32
3.2 Ազգային անվտանգություն հասկացության հարաբերակցությունը ազգային զարգացում հասկացության հետ	36
3.3 Հասարակության համակարգերը և նրա անվտանգության ապահովման ասպեկտները	41
3.4 Անվտանգության ընդլայնված օրակարգ	63
4) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻՑ, ՎՏԱՆԳՆԵՐԻՑ	70
Ազգային անվտանգության բաղադրամասերը	
4.1 Քաղաքական վտանգներ և քաղաքական անվտանգություն	72
4.2 Տնտեսական վտանգներ և տնտեսական անվտանգություն	73
4.3 Սոցիալական վտանգներ և հանրային անվտանգություն	76
4.4 Մշակութային վտանգներ և մշակութային անվտանգություն	78
5) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ի՞ՆՉ ԶԱՓՈՎ	80
6) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ի՞ՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ	

6.1 Անվտանգության ապահովման միջոցների դասակարգումը	84
6.2 Անվտանգության քաղաքականության կառուցվածքը և նրա կառուցվածքային տարրերի էվոլյուցիան	88
6.3 Անվտանգության հետանտման ուղիները և ելակետերը արտաքին կենսական միջավայրում	97
6.4 Ազգային անվտանգության ապահովման սկզբունքները	112
7) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ի՞ՆՉ ԳՆՈՎ	114
Ազգային անվտանգության հայեցակարգ եվ դոկտրին հասկացությունների փոխհարաբերությունը եվ ընդգույնը	116
Ազգային անվտանգության հայեցակարգի մշակման մեթոդաբանական սկզբունքները	118
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	122

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում է ազգերի և պետությունների առջև ծառացած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցումակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համարդարված կարողականության չափորոշիչներով։ Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով։ Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական անբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, ինարավորությունների հստակեցման համար։ Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հղոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործնթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում։

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի անբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է։ Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայական առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը։ Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն։

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ։ Բաղադրակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՌ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոյսում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով։ Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմանը, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառությունները։

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովրդը։ Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսուրվում քաղաքակրթությունների շիման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սամահինի, Գլածորի, Տաթկի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գենոֆոնի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ։

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները։ Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով բաղադրակրթությունների լավագույն ձեռքբերուների համադրման և երկխոսության վայր։

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետների օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ։

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒԽԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառությունները։

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովողի մարդկային, ճյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չօրս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կը նկնջեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցների համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի նոդելավորում:

դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում՝

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում համրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

ԴԻՍԱՐԱՍԻ ԱՊԱԶԻԿԱ

ԱՇԽԱՏԱՍՔՆԵՐԻ ԴԻՍԱԿԱՆ ՈՒՂՈՌԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունը արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով միշարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթուն գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայունս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել պատասխան: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված իիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես իիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝

• արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառությունները,

• ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. Էռլեյուն, բովանդակություն,

• հայկական շարունակականության հայեցակարգը,

• ազգային և պետական շահ ընթանումների փոխհարթերակցությունը,

• ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,

• ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

• Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,

• Հայունիք-Սփյուռք առնչությունների մողելավորման իիմնախնդիրները,

• Սփյուռքի ազգապահպաննան գործոնները և հայոց անկախ պետականության գործառությները,

• ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրությները,

• ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,

• գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,

• անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.

• ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,

• հագետ-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,

• մշակութային անվտանգության հիմնադրույթներ,

• կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,

• գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,

• տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,

• կոնունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,

• տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,

• բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,

• ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,

• առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,

• սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Անդրանիկ Սարգսյան - ՀՀ Կարչապետ

**Մանուկ Թոփուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

**Կարինե Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի տեղակալ**

Լևոն Մկրտչյան - ՀՀ Կրթության և գիտության նախարար

**Տիգրան Սարգսյան - ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ
Արա Ավետիսյան - ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ**

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com